

համարի բանաստեղծությունը

Իդձ

Պիտի գայ օր մ'ուր, լըքուած՝ կեանքէն խաբեբայ՝
Վեւ գլուխս հակի եւ խըրոխտ թեւերս խոնարհին.
Մթնէ, ցրտէ մարմնոյս մէջ քամիէն վիհին,
Եւ կորստեան տըմոյն զոհ՝ իյնամ ես ճամբայ:

Ձեր բոլոր հոյլն յայնժամ նոճք իմ, թող զիս ողբայ.
Թող եղերգէ, գիշերայն, մահն երգչին ձեր հին.
Ու տաղերնուդ ամենէն ծանրն ու ամեհին
Ձեր մըտերմին իբր այգողք հեծելով ծըփայ:

Ձեր բազմաստեղն աղջամուղջն ըրէք սուգ անոր:
Թող ձեր սեւ լարք իր քնարին աւիւնը տաւղեն,
Եւ անոր դաշն արցունքներն հծծեն իրարու:

Ըսէք, անմեռ խոիք երկնից, թէ ան՝ մենաւոր,
Կու գար, ձեզի փարելով, հոգի խնկեղէն՝
Վաղանցութեան իր ցաւովն ըզձեզ երգելու:

Իմտրա

Գեղարմ-62. 2018
Գրական-գեղարվեստական,
թարգմանական հանդես
Հրատարակիչ
«ՈԳԻ-ՆԱԻՐԻ»
գեղարվեստի կենտրոն
Հրատարակվում է 2002 թվից

Հասցեն՝ ԼՂՀ, 375000
Ստեփանակերտ,
Վ. Սարգսյան 25

Էլեկտրոնային հասցեն՝
gekcharm@yandex.ru
hrantalex@rambler.ru
Հեռ. +37497-252323

Տպագրվում է
«Դիզակ-պլուս» ՍՊԸ-ում

Խմբագիր՝
Հրանտ ԱԼԵԽԱՆՅԱՆ

Գեղարմ-62.2018
Literary-Feature
translating periodical
The publisher:
«VOKI-NAIRI»
art centre
Published in 2002

Address: 25 V. Sarkisian str.
Stepanakert, 375000, NKR
E-mail: gekcharm@yandex.ru
hrantalex@rambler.ru
Tel: +37497-252323

Editor:
Hrant ALEXANYAN

Հ Ա Մ Ա Ր Ի Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

«Գեղարմ»-ի մատենաշար.....	3
Հակոբ ՄՈՎՍԵՍ. <i>Ներքին վարդ</i>	4
Զավեն ԲԵԿՅԱՆ. <i>Պատմվածքներ</i>	7
Մանասե. <i>Հակոբ Մովսեսի «Օսիպ Մանդելշտամը»</i>	10
Միխայիլ ԲՈՒԼՊԱԿՈՎ. <i>Բժշկի աներևակայելի արկածները</i>	21
Հրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. <i>Հրատարակիչը և թարգմանիչը. մրցակցությունը գրական երկի շուրջ</i>	30
Վան ՎԵՅԼՅԱՆ. <i>Աղի ձայնը</i>	33
ԿՈՆԿՐԵՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	51
Մո ՅԱՆ. <i>«Ես մեղավոր եմ»</i>	55
Մենելաոս ԼՈՒԴԵՄԻՍ. <i>Բանաստեղծություններ</i>	62
ՈՒ ՉՈՒՆ. <i>Երկնքի ու մարդու հարաբերությունը և դրա կրոնական ու ինտելեկտուալ խորապատկերը</i>	65
Literary translations. Paruyr SEVAK	73
Կարեն ՍՏԵՓԱՆՅԱՆ. <i>Մետաֆիզիկական որբության հաղթահարումը ...</i>	80
Ռոբերտ ՎԱԼԶԵՐ. <i>Երկու պատմություն</i>	87
Յուրի ՄԱՍԼԵՏՎ. <i>Ոտքը</i>	91
<i>Խճանկար</i>	97

Կազմին եւ համարում` Հովհաննես ԶԱՐԴԱՐՅԱՆԻ
ստեղծագործությունների արտապատկերները

Գեղարմ - ի


մասունքնաշարով

լույս են տեսել

Ու ՉՈՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ:

Անգլերենից թարգմ.՝ Ա. Աթաբեկյան.- Մտեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2018, 220 էջ:



Մույն աշխատությունը հաջողված փորձ է՝ ներկայացնելու չինական փիլիսոփայությունը մախնական տեսքով, բացահայտելով գիտելիքի եւ գիտության մեծ ազդեցությունը դրա վրա: Գրքում, այլ հրատապ հարցերի հետ, խորությամբ քննվում է փիլիսոփայության եւ բարոյախոսության սերտ կապը, եւ թե այն ինչպես էր գործնականում կիրառվում հասարակական մակարդակում: Առանձնահատուկ հետազոտվում է երաժշտական գեղագիտության հատուկ դերը եւ նշանակությունը փիլիսոփայական մտածողության մեջ, որը դրսևորվում էր հավատի եւ ճանաչողության խորացման ճանապարհին: Ավելին, գիրքը «միջազգային» է, ուստի դիսկուրսի մեջ ներառված են նաեւ որոշ միջմշակութային համեմատություններ, որոնք հետաքրքրություն կառաջացնեն եւ կնպաստեն լայն շրջանակների կողմից ընթերցման եւ ստույգ իմացության:

Մարտիրոս ՈՔՆ

ՄՈՄԵՐՆ ԻԶՈՒՐ ԵՆ ԱՅՐՎԵԼ ՄԵՂՔԵՐԻՍ ՀԱՄԱՐ:


Վիպակ: Մտեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2018, 48 էջ:



Անձնական խորը տառապանքը սուկ անհատական վարքի, սեփական՝ կարծես թե կանխորոշված ճակատագրի մաքուր արգասիք չէ, այլ ժամանակի ազդու գործոնների, մասնավորապես՝ պատերազմի և համամարդկային խղճի բաղիյունված, բազմազույն մի զգացողություն է առավել: Այն Մարտիրոս Ոքնի «Մոմերն իզուր են այրվել մեղքերիս համար» վիպակում խոստովանական պատմությունից վեր է անվում հոգու՝ մշտապես վերաբանվող փիլիսոփայության, ընթերցողին մղելով ավելի ուշադիր տնտղել իր ներաշխարհի անկյունները և հրապուրվել հեղինակի անկեղծ վերհուշի ելևէջումներով:

Ռեյսին ՄՅՈՒԸՆ, Սյուն ՃՈՒ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Չինաստանի համաշխարհային ժառանգությունը: Թարգմ. անգլերենից՝ Զ. Բալայան: Մտեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2018, 100 էջ:



Չինաստանը չափազանց հարուստ է պատմա-մշակութային հուշավայրերով ու քնատեսարաններով, մաս՝ ոչնյութական արժեքներով, որոնց մի զգալի մասը ներառված է Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում: Գիրքը նվիրված է այդ գեղատեսիլ ու զարմանահարաշ վայրերին՝ ծառայելով իբրև ուղեցույց այցելուների եւ այցեհրավերի դեր խաղալով մոտ ու հեռավոր հետաքրքրասերների համար:



Հակոբ ՄՈՎՍԵՍ

ՆԵՐՔԻՆ ՎԱՐԴ

Միջօրե եղավ, և ես տեղ հասա:
Եվ ես մոտեցա շուրթերով աղոտ:-
Լույսն իր սպաքն էր ջրերին շարել:
Հազար քամու մեջ այն քամին տեսա,
Որը պարտեզում, ցանկապատի մոտ
Իր ձեռքը վարդի կոնքին էր դրել:

Ջրերի վրա այստեղ մեղմօրոր՝
Մխիթարիչին, լավեց, կուղարկեմ:
Եվ վեց հոգի՝ վեց չքնաղ ձայնավոր
Հաջորդ վայրկյանին կանգնեցին մեր դեմ:

Հաջորդ վայրկյանին, Սո՛ւրբ Հոգի, մենք քո
Ջուրը բխեցինք հազարականի:
Եվ տեսանք թուխտ թփերի ներքո՝
Ոսկյա ճտերով իր շարականի:

Միրեններն այստեղ ինչքան էլ կանչեն՝
Ուրիշ ոչ ոքից չընդունեք դրանք -
Լեզվի ձեռքի՛ց են, լեզվի ձեռքի՛ց են
Երկրի շողշողուն շնորհները թանկ:
Եվ եթե նրանք լեզվի ձեռքից չեն՝
Ուրեմն չարի ձեռքից են նրանք:

Նա քարոզում է՝ կրծքաբաց կանգնած
Արիսպագոսում ահա մի քարի:-
Գնագոյացման հազար ձև կա, բայց
Միայն նա գիտի գինը դարերի:
Գնանշողը դուստրն է երգի,
Որ իր բառերի կուֆերն է շարում,

Գեղարմ Աշուն 2018

Ինչպես մայրը, որ իր առաջնեկի
Վերմակն է ձևում և մգրակարում:

Կրկնապատկե՛ց, պատկերս հատե՛ց,
Որդիս լցրե՛ց մեր ամբարներն անծիր:
Բայց երբ ծովահենն ինձ ծովը նետեց,
Նա իր դաշտերգն էր երգում հոգեթով:
- Լոկ դու էիր, որ - ճիշտ լսեցիր
Եվ փրկօղակը նետեցիր մթնով:

Նստեցին տանը, մեզ մոտ կանչեցին
Չայնավորները արդ քո վեց հոգով,
Սպասարկեցին, շուրթերը բացին,
Մեզ ողողեցին ոսպ ու կորեկով
Եվ փրկությունը մեկնաբանեցին՝
Մեկնեցին ազատ անկման օրենքով:

Դու ի՞նչ ես, արքա՛, գլխահակ նստել
Քո երկրի մոխրե ավերակներին:
Լոկ նա՛ կարող է այստեղ հավաստել
Հաղթանակների պատգամը վերին:
Մի եղանակ կա աստ ժամանակի
Մայրաքաղաքը մտնելու համար:-
Լեզվի ձին թամբել, որի գավակին
Շողում է աստղե պատմուճանը վառ:

- Կամավորների գունդը աներեր
Եվ գորքն իր արքան Իլիոն ուղարկեց:
Բայց ժամանակին համակ պճնասեր
Ժամանակակից նա մեզ չկարգեց:
Դու, բերան-դայակ, մետաքսով պատում՝
Ջուգում ես դստերն իմ ժողովրդի,
Բայց առավոտյան նա դեն է նետում
Իր զգեստներն ու դարձյալ անոթի
Մոխիր է ցանում մագերին իր սև,
Քաշում է դեմքին քողը լռության
Եվ դարձյալ ելնում խոհի մշտատև
Անվերջանալի մուրացկանության...

Գեղարմ Աշուն 2018

Քո գորքը, արքա՛, քեզ լքեց նորից:
Բայց այս որտեղի՞ց դարձյալ հավաքվեց
Շուրջդ բառերի գորքը լիահորդ:
Այդ Սիքայե՞լն է, որ իր բերանից
Կտրելով՝ դարձյալ երկիր ուղարկեց
Թիկնապահական իր գունդը պահնորդ:

- Ծփում էին երկրի ջրերը զվարթ:
Տեղանքներն էին զվարթ հուրհրում,
Եվ պարտեզներ էին այստեղ ծաղկազարդ:
Առավոտյան վաղ բերանս բացած՝
Վեց հոգի ներսս նայեցին դարձյալ,-
Եվ այնտեղ ահա դո՛ւ էիր բուրում՝
Բոլոր թերթերով վառվող ներքի՛ն վարդ:

Օգոստոս, 2018

ՄԱՏԻՐԱԿԱՆ

Մատրոսովը կողքանց՝ դիմացինից աննկատ, մոտեցել էր և կրծքով փակել գերմանացու մահասփյուռ ամբուքյունից դուրս ցցված գնդացիրը: Այդտեսակ մահը՝ շամփրող, կարճ, շոկի մեջ,- ահավոր ցավը վայրկյան էլ չի տևում: Նույնն արել էր մեր Հունան Ավետիսյանը: Ասում են՝ Չապակին Ուրալ գետում գնդակահարողը հետո, թռռան խնդրանքով, գնացած է եղել դպրոց՝ հանուն ռազմահայրենասիրական թեմայի հուշեր պատմելու, անգիտուն պատմել է - ու այդպես բացահայտվել է, որ այդ խեղճ երեխայի պապը... սպիտակգվարդիական է եղել իրականում...


«Պա՛պ,- ասում ենք՝ թռռներով շրջապատած,- պատմիր՝ տեսնենք էդ ո՞նց եղավ, որ գերի ընկար...» /«Կռվել չգիտեի՞ր՝ ինչ է, որ քեզանով էլ էսօր մենք պարծենայինք...», - մտքի մեջ ենք ասում/: Նեղացած նայում է. «Բա հիմի վա՞տ ա, որ կողքներիդ եմ, ողջ եմ...»:

1949-ին ընտանիքով Սիբիր աքսորեցին: Ստալինը պիտի մեռներ, որ ինքը տուն վերադառնար: Սիբիրից շատ նորություններ էր բերել գյուղ - գյուղի առաջին պատեֆոնը, ուսին գցելու մի հարմարանք /հայերեն անունը չգիտեմ/, որով կանայք ջուր են կրում՝ միանգամից երկու դուլ,- ու էդպես դեռ հնարավոր էլ է լինում ազատ մնացած ձեռքերով բամբասանքին զուգընթաց ժեստերն անել, խոզի սալ /ճարպ/ սարքելու հմտությունը, ուրիշ-ուրիշ այլ բաներ՝ ընդհուպ մինչև տզրուկ կայցնելու և ապա արդեն լեցուն տզրուկը մզելու-դատարկելու եղանակները...

Գյուղական գրադարանն սպառել-պրծել էր, բայց, չնայած դրան, գիրքը դույզն իսկ չէր մեղմացրել նրա վայրի բնույթը - և կողակիցը դա շատ լավ էր զգում մաշկի վրա, կոնկրետ՝ հենց թիկունքին, փափուկ մասերին, որտեղ որ

Չավեն ԲԵԿՅԱՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



պատահի՝ հարվածների տեսքով: Չնայած ինքն էլ մի խաղաղ պտուղ չէր: Գնում էր գյուղամեջ, գյուղի միակ աղբյուրից ջուր բերելու՝ կանացի հերթում անպայման մի բան պատահում էր: Գալիս էր՝ ասում՝ ախի՛նչն ինձ էս գեշ բանն ասաց, ասա՝ բերանս իսկի բա՞ց եմ արել... «Վա՛յ», - խփում էր ծնկներին պապը, լավ պատկերացնելով, թե իրականում ինչ է եղել:

Մինչև Միբիր գնալն էլ վարքից չէր փախում՝ թե ասես էն կողմերում է սովորել էդ բանը /կանանց հետ շեղ հարաբերությունները նկատի ունենք/: Մինչև գնալն էլ, բրի-գադիր եղած ժամանակ, ղեկավարած կանացի բրիգադը համարում էր կոլխոզի նվիրած, օրինական իր հարեմը: Ասում են /թաքուն տեսնող էր եղել/ կարտոֆիլով լի պարկերը տեղափոխելիս-պահեստում դատարկելիս, չի սպասել, որ իր կին ենթականերից մեկը պարկն իջեցնի շալակից՝ նոր... ինչ որ մտքով անցել է... Հենց այդպես՝ պարկը շալակին էլ անելիքն արել է, թիկունքի կողմն անցնելով...

Յոթանասունն անց էր, որ կինը մահացավ: Շատ խեղդեց, գյուղեգյուղ գցեց ազգականներին, թե մի կնիկ գտեք օջախի համար, բայց ասում են՝ էդ տարիքում զովեցրել էր իր շմահավանությամբ /«Ֆիգուրը լավը չի»/:

Մի օր հարևան գյուղից իր քրոջ տղան՝ ավարայի մեկը, գաղութի ապրանք, իր նմանների մի խմբով հյուր էր եկել՝ թե քեռի, արաղ կունենաս քաշած, հավերն էլ դռանը ոնց-որ թե քջուջ էին անում՝ տեսանք: Ճարն ի՞նչ, պատիվ տվեց, կերան-խմեցին, բայց էդ բանը չէր անի /ժլատ էր/, եթե..., եթե քրոջ տղան աչքով-ունքով հասկացրած չլիներ, թե էս տենու՞մ ես՝ էս ինչ ենք բերել, քեզ համար ենք բերել - ջահե՛լ, ամեն ինչը տե՛ղը... Մի ջահել խիզան էին բերել հետները, գուցե թե նույնիսկ՝ անչափահաս /իրենց նման մեկը/: Ու իրոք էլ մնաց գիշերը, թողեցին իր մոտ՝ թե քունն է:

Լույսը բացվելու հետ՝ պահը գտել՝ ծլկել էր: Հետո գյուղամիջում վշտացած պատմել, չամաչել՝ պատմել էր. «Ախրըր՛մ, տեսա՛ տեղից վեր կացել- հեչ պետքը չի, ոչ տուն ա ավլու՛մ, ոչ ասում ա՛՝ հավերին կուտ տա՛մ... Վա՛յ են քո դեսը դարգողի...»:

Իր պես շատ կարդացած, բայց վարքուբարքը տեղը մի տարիքավոր ասել էր. «Ժամանակին այժի ոտքերով, պոզ-մորոքով մարդանմաններ են եղել, որ ծնակ տեղերում հարսների հետևից են ընկել... Հեչ կարդացե՞լ ես էդ մասին...»:

ՊԱՏՄՎԱԾՔ ՊԱՏՄՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

«Մա ի՞նչ է,- օձից խայթվածի պես տեղից վեր թռավ խմբագիրը,- էս ի՞նչ բան է: Բեզնից հե՛չ չէի սպասում...»:

Ծանր լռություն տիրեց: Դ-րսից ավտոմեքենաների աղմուկն էր լավում /շարժիչների աղմուկը հիստերիկ է, երբ գագով են աշխատում, ասես որկրամոլին դիտմամբ կերակրես ցածր կալորիական սննդամթերքով .../:

««Մատիրակա՛ն», - շարունակեց, - ի՛նչ էլ վերնագի՛ր է... Մատիրն այժն է, չէ՞, վավաշոտ կենդանի է, հա՛, առասպելներում էլ է եղել, այժամարդն է, հավերժահարսների հետևից է ընկնում... Ամեն դեպքում՝ որպես վերնագիր լավ է, բայց քեզանից հե՛չ չէի սպասում...»: «Մատիրականն» իմ պատմվածքի վերնագիրն էր: Մեջը մի փոքրիկ հատված կար, ուր կոլտնտեսության բրիգադիրը մի թեթև էրոտիկ կոնտակտ է ունենում սոցիալիստական աշխատանքի հերոսուհիներից մեկի հետ /էն որ ասում էին՝ Կոլյան սիրում էր բրիգադի իր անդամակից Օլյային, բայց քանի որ պլանները թերա-

Գեղարմ Աշուն 2018

կատարում էր՝ ամաչում էր սեր խոստովանել.../։ Բնօրինակը, խոստովանեմ, մորական կողմից պապս է՝ Խեչանը, որ հիմի էն աշխարհից քֆուր-քյաֆար է դրել. «Տո շան լակոտ, էլ գրելու բան չունեի՞ր...»։ Մի տեղ էլ եմ գրել իր մասին՝ «Պանֆիլան» վերնագրով պատմվածքիս մեջ։

«Չէ, չեղա՛վ, քեզնից հե՛շ չէի սպասում...»։ «Ախր,- ասում եմ,- թանկագինս, աշխարհի գրականությունը դրանից ավելի թունդ բաներով է լի, էս ո՞ր դարն է... Ջովաննի Բոկաչչոն /մեր պատանեկության ընկերը/, Հենրի Միլլերը՝ խոսքի օրինակ, Նաբոկովը՝ եթե որպես ԱՊՀ-ի անդամ հիշենք մեզ...»։ «Հենրի Միլլերի անունը չտա՛ն, միլլերություն անելու համար պիտի Փարիզում գոնե մի անգամ եղած լինես... Ա՛խ, Փարիզը... Մի ամբողջ օր ոտքով թափառել եմ, բոկոտիկներս մաշվեցին... Փարի՛զ...»։ Ընկավ մի տեսակ ինքնամոռացության մեջ։ Ես Փարիզում չեմ եղել, ընդհանրապես, աշխարհ քիչ եմ տեսել։ Թող Հրանտ Ալեքսանյանը չնեղանա՝ Արցախում էլ չեմ եղել /եղ ե՛րբ կանչեց-ասաց՝ արի մի տեսնենք՝ ինչ ենք անում՝ քեֆից-բանից՝ ու ես չզնացի.../։

Ասում եմ. «Դե սեքսը մեր կյանքի մի մասն է՝ բավականին էլ թափով մասը՝ չթաքցնենք։ Եթե նորմալ էլ նկարագրում ես՝ առանց... սեռական ստորին մանրամասների... ի՞նչ է եղել որ...»։

«Չէ, սա տպելու բան չի,- ասաց,- կարգին բաներ էիր գրում... Քեզ ի՞նչ է եղել...»։ «Դե՛,- ասում եմ,- հա՛, իմ պոեզիան նկատի ունեք...»։ «Բայց էդտեղ էլ է համը դուրս եկել վերջերս,- լուռ խորհեցի,- միտքս ազատ է աշխատում:- Որ եղպես է՝ լա՛վ էլ անում է, աշխարհը հո մեռնակ փիլիսոփայություն, ձյուն ու ձնծաղիկ չի՞։ Վարուժանի պես պոետին ի՞նչ ասենք /ժամանակին հանիրավի քի՞չ են ասել/, Եվրոպա տեսած մա՛րդ...»։

«Օրինակ, վերջերս մի բանաստեղծություն եմ գրել,- շարունակում եմ մտքիս մեջ,- «Մեռահասունացման քրոնիկոնից» վերնագրով, այսպես է սկսվում.

*Արդեն սկսել էի հասկանալ,
թե ինչու է՝ տարվա մի հատվածում,
հովիվ պապս բրեզենտյա փաթեթով
փակում խոյի փորատակը
/որ գառների ծիճը
չսկսվի անհարմար մի ժամանակի.../։*

Է ի՞նչ անենք, կյանքից վերցրած բան է, էդ բրեզենտյա փաթեթը ժամանակին ոչ միայն ես, այլև ողջ գյուղն է տեսել...

Ջգում եմ, որ հիմա էլ մյուս պապս է՝ Գրիգորանց Ավետիքը, էն աշխարհից քֆուր-քյաֆարը դրել. «Տո շան լակոտ, էլ գրելու բան չունեի՞ր...»։

*Բուն օտար լեզուները թաքնված են
քո մայրենի լեզվի մեջ:
Եվ բանաստեղծությունն է, որ թույլ
է տալիս քո մայրենի
լեզուն բացել իբրև օտար լեզու:*

Յ. Մովսես. «Գրառումներ»¹

ՄԱՆԱՍԵ

**ՀԱԿՈՒՔ ՄՈՎՍԵՍԻ
«ՕՍԻՊ
ՄԱՆԴԵԼՇԱՍԸ»***



Բոլոր «բազումք»-ները տեքստ են կրօնտուն՝ կառչելու տեղ չթողնելով, որ վերականգնենք տեքստային «տեղանքի» ամբողջականությունը, իսկ վատթարագույնը, որ կարող են անել այդ «բազումք»-ները, Ծննդոց **նշանով** կանչվածներին,- ինչպես Յովսեփն ու Յակոբն էին,- խառնելն է այն «բազում» անանուններին, որ ահա «սակավ» չեն: Թեև մյուս կողմից էլ՝ գրի «տեղանքին» չափազանց կառչելը զրկում է ընդհանրացումներից, ուստի երկու իրարամերձ դիրքերում չհայտնվելու համար կօգտվենք երկուսից էլ՝ առավելություն չտալով երկուսից ոչ մեկին: Յակոբ Մովսեսի «Օսիպ Մանդելշտամ»-ից կխոսենք՝ ընդհանրականից անհատականին, անհատականից ընդհանրականին դիմելով, ինչը, որքան հետևել ենք, գերազանց է իրագործում Յ. Մովսեսը՝ բանաստեղծությունից ի՞ր միֆաստեղծումը և մյուսուսից ի՞ր բանաստեղծումը դուրս բերելով²:

.....
Սահմնկեցուցիչ դադար, որ ընկած է իրար հանդիպած ու դեմ առ դեմ հայտնվելու հանկարծակիությունից առանց այք թարթելու մեկմեկու զմնող վայրի կատվի ու մարդու հայացքների միջև: Վայրի կատուն պատրաստվում է ցատկի, ցնցվում է, ցցում մորթը, ճանկռում է դադարը, տնտղում է իր դեմ հայտնվածին ու նույնքան անսպասելի հեռանում, սողոսկում թփուտները: Վայ-

րի կատվի հայացքը մնում է: Ինքը հեռացել է՝ սև մորթու փայլը խառնելով խավարին, բայց և՛ հայացքը կա, և՛ փայլը: Մանդելշտամի «վայրի կատու-հայերենի» հետ իմ առաջին հանդիպումից մինչև այդ դադարը կես դար է ձգվում է, և հայ բառի ինչ որսի էլ դուրս գամ, հայերենի ինչ թեթև երերմունք էլ զգամ, ինչպես սիզախոտի երերմունքը այնտեղ հայտնված Որսորդի շարժումից, այդ սև փայլն են հիշում և հայոց լեզվի փշաքաղված մորթու սևափայլի հետ մի պահ հայտնված-չքացած վայրի-կատվային հայացքը:

Անթարթ գամվածությունն անբացատրելուն, սրված ունկնդրումն անորսալուն՝ ընկալումի մի լարվածությամբ, թե որտեղի՞ց է գալիս (հայերենին հղված մանդելշտամյան «հետքով») լեզվի «վայրիության» մեջ անցնի՞նչ նայելու բանաստեղծի մոգանքը,- որքան խորհում են այս մասին, այնքան չեն վստահում Դ. Մովսեսի պոեզիայի արտահայտչական կոնկրետ վերլուծումներին և ուզում են որոնել բացահայտումների «անդինը», որը դժվարությամբ է տրվում բացատրության, չի տրվում գրականագետի «որսին», չի տրվում երևույթացման: Դա երևի թե բանաստեղծի ու «վայրի կատու-հայերենի» հայացքների հանդիպման միջանկյալում ասածս դադարն է: Բանաստեղծի (և առհասարակ արվեստագետի) մարգարեացումներն այդ դադարի մեջ են:

Որովհետև եթե լինի այնպես, որ մենք Դ. Մովսեսի «Օսիպ Մանդելշտամի» մասին «հաղորդենք» «...իբրև վերջին լուր՝ հաղորդված վաղուց»՝ խրվելով բանաստեղծական այս «դեպքի» «մասերի մեջ» կամ քաշվելով «իրականության թևատակերը»՝ «որպես մակաբույժ», մենք էմմաուս տանող ճանա-

պարհից շեղված կլինենք, մենք կմանավենք մի որսորդի, ով ճեղքելով որսատեղի թավուտները՝ մտահոգված է սոսկ ավարով, «մսեղիքով», - այդ դեպքում մենք ո՞նց ենք հագեցնելու մեր քաղցը, որին զայթակողոր իմ ասած ճակատագրական «դադարն» է, ինչը մնչյունով մոտեցող որսի և որսորդի հայացքի հատման մի պահի մեջ խորհրդավորություն է հունցում, ասես՝ «բառով մեր բերաններում էոնը հունցվի»:

Հայերենը խոցում է օտարին (Մանդելշտամին): Իսկ նրա՞ն, ով այդ լեզվի մեջ է ծնվել ու այդ լեզվով է խոսում: Նրա համար նույնպե՞ս այն հնչում է այնպես, ասես «խոցի»: Ես, որ ունկնդրում են իմ մայրենի հայերենը, կարո՞ղ են այնքան օտար ձևանալ, որ «օտարի»՝ Մանդելշտամի լսած «վայրին» որսամ: Ու եթե որսում են՝ դա «խուժում» է (խուժանի. վերջինս Դ. Մովսեսի «բևեռումներից» է ընդհանրապես մշակութային «տեղանքը» տարբերակելիս), որ «վայրիի» հոմանիշ-գոյականն է, թե՞ Չարենցի «բարբարոսն ու ճկունը», թե՞ Միմփայի հմայքն է՝ «դեպի ներս» ուղղված,- վայրին, որպես կուսականը և ոչ թե հիշյալ խուժումն այն խուժանի, ով հանում է «իր մե սրտից իր հիշոցները, հանց քրոնիկոն...»: Մանդելշտամի «վայրին» այն ինքնեղն է, որը չի նվաճված, ես միմփա, և ուղղված չէ նվաճումի-խուժումի, ինչպես լեզվի սատիրներն են անում: Նիմփա և սատիր: Մեկի «վայրիությունը» նախաստեղծության մեջ է, մյուսինը՝ ագրեսիայի: «Իր սրնգի շուրթին» առած հայերենով բարբառել փորձող Մանդելշտամը հաստատում է. «...դարերի միջից ձայնաբերվող հայերենի ֆլեքսիան (խոնարհում-թեքումները, «ճկունը») «հնդեվրոպական արմատից» մի

փթթանք է ընծյուղում, որ «իր բերանից կախարդանք է բուրել տալիս ու ստեղծագործական տարերք» (Մաքս Ֆարսմեր): Հայոց բարբառը միմփա է իր այս «վայրիությանը», որ կարող է «ուճկ ճանկռոտել» (Հրաչյա Բեյլերյանի թարգմանությանը,- Дикая кошка – армянская речь- /Мучит меня и царапает ухо...), չարչարել, «խոցել» իր հմայունով, իրեն խոնարհված «ուճկնդրությանը» ներաճել տալ իր խոնարհումներում, նվաճել ոչ բռնի, առանց «զգացմունքի թափոն» թողնելու, ինչպես (սատիրներից) «մեկն է այստեղ կանգնելով, այսպես խոսում»: Այս միմփա-«վայրիության» մասին է խոսքը, եթե վերանալով երևութական հատկանիշներից՝ ուզեմանք հայտնվել Հ.Մովսեսի պոեզիայի «անդինում», որտեղ նա տիպաբանական հարազատություն է զգում «օտար» Մանդելշտամի հետ:

Ռուս բանաստեղծի հայերենի ընկալման վրա ներգործել է ոչ միայն այն, որ նա ստուգաբանական նմանություններ է որոնել ծագումնորեն նույն «հնդեվրոպականի» ֆոնի մեջ գործող հայերենի ու ռուսերենի միջև (օրինակ, «голова-գլուխ» բառը...), այլև տեսել է հայերի ու իրեաների՝ իբրև աստվածաշնչյան ցեղերի միջև զոհաբերական մերձությունը, որը Հ.Մովսեսի բանաստեղծության մեջ ծագումով իրեա բանաստեղծին ներկայացնում է ոչ միայն իբրև հայերենով ընկալողը, իբրև «հայերեն խոսողը», այլև ընկալողն ու խոսողը՝ որպես «տառապող». «...Թեև տառապանք, բայց բառով պիտի մեր/բերաններում էոնն այս հունցվի»: Կամ՝ «...սակայն պոեզիան ազդարարում է, որ կա Գամերի / Համաստեղություն, որը ծագում է միայն ձեռների»:- Հ. Մովսեսին «հայերեն խոսողը» գու-

ցեև չհետաքրքրի (որովհետև ինքը հայերենի կրողն է անմիջապես), բայց տարածությունը (զոհաբերական) իր և Մանդելշտամի միջև, կարծում եմ, նրա համար անշրջանցելի է: Երկուսի համար էլ (Օ. Մանդելշտամ - Հ. Մովսես) նույն **նշանն է** թողնված էմմաուսի ճանապարհին: Հիսուս հայտնակերպվեց այդ «արհամարհված» գյուղում երկու թերահավատների, որոնք հանդիմանվեցին Տիրոջից Երուսաղեմում «կատարվածներին» կասկածելու համար. «Ով անմիտ և թուլասիրտ մարդիկ,- ասաց նրանց Հիսուս,- որ դժվարանում եք հավատալ այն ամենին, որ ասացին մարգարեները: Չէ՞ որ Քրիստոս պետք է նույն այդ չարչարանքները կրեր և այնպես մտներ իր փառքի մեջ» (Ղուկաս, 23-24): «Յոթներորդ որսորդություն» գրքի «Օսիպ Մանդելշտամ»-ում այլաբանությունը պարզ է: Հ. Մովսեսի «զոհաբերականը» ինչքան էլ գեղագիտական է (...որպեսզի «պոեզիայի արտերը» չլցվեն «երկսեռ չուերը» մարախի), այնուհանդերձ, նույնքան էլ անձնական է. քիչ չեն դրվագները Մանդելշտամի անձնական ողբերգությունից («...դարը ելնում է և նրա վրա քսի է տալիս իր գամփոներին»), իսկ վերադառնալով ներկա-«էոնին», Հ.Մովսեսը այնտեղ կարծես և՛ պատճատները, և՛ հետևանքներն է տեսնում Մանդելշտամին իր զոհաբերական (տվյալ դեպքում ոչ թե ճակատագրով, այլ գեղագիտականորեն) մերձության ... «Սակայն պոեզիան մեր կողքին անտես քայլում է/դեպի էմմաուս տանող ճանապարհին և -/ իրեն չի հայտնում»,- ինչպես Քրիստոս իրեն չհայտնեց երկու թերահավատներին: Այստեղ զոհաբերական մերձությունը (երկու բանաստեղծների) իտերացիոն է: Մանդելշտամի «միջոցով» (որքան է չսիրենք այս բառը) «Յոթներորդ որսորդության» հեղինակը

վերապրում է մանդելշտամյան «նպատակագրորկ» դարաշրջանը, ինչպես Յ. Մովսեսի «միջոցով» Մանդելշտամն է ապրում մեր ժամանակների միևնույն ողբը. «Եվ ամբոխները ընտրում են իրենց բանաստեղծներին, /Յանց որսապետը՝ այդ օրվա որսի շներին որսկան... պոեզիան ճորտն է իրականությանը»: Ահա և միևնույն **նշանն է** թողնված («գուցե Ծննդո՞ց»), թե ինչպե՞ս ինքը (Յ. Մովսեսը) կխոսեր պոեզիայի մասին Մանդելշտամի լեզվով, և ինչպե՞ս Մանդելշտամը կխոսեր պոեզիայից Յ. Մովսեսի լեզվով: «Յոթներորդ որսորդություն» գրքի «Օսիպ Մանդելշտամ» բանաստեղծությունը հենց սրանով է ներծծված:

Այստեղ իմ միտքն ասես ավարտվում է, բայց ես, այնուամենայնիվ, նյութն ամփոփելու փոխարեն ուզում եմ համոզվել՝ ընթերցողին անհասկանալի չմնա՞ց, թե ես ի՞նչ **դադարի և փայլի** մասին էի խոսում, որով համակված բանաստեղծը «որսի ելնելիս» ասես **ընկնում է հիմփայի մեջ**:³

Երբ հայացքը ներաճում է ինքն իր խորքը, ավելի է տեսնում իրենից դուրսը, ինչպես վերքը, որը եթե խորանում է մարմնի մեջ, չի սեղմվում, չի փոքրանում, չի մեղմում: Շողացնելով իր փայլեցրած արտաքին հատկանիշները (երաժշտության մեջ մեղեդայնության միջոցները՝ նոտագրումից մինչև գործօժիքավորում, պոեզիայում՝ «պատկերների, փոխաբերությունների բարդումները, ասոցիացիաների բարդ, երբեմն տրամաբանական սահմաններից անդին ընկած փոխաբերությունները, որ դուրս են սոսկ հասկացումից և գործում են մոգության օրենքներով...»)⁴ գիտակցության այս ներսուզումն ունի ինքնապաշտանական հակընթաց-սահման, որին հասնելիս, իբրև ներս

ուղղված հայեցումի ներքնագույն կետի, այն արտաքին փայլը թողնում է մակերես՝ երկյուղելով ենթագիտակցական ընկալումների շլացումներից ու «ուշաթափումից» և ընկնում է հոգեսույզ մի «դադարի» մեջ, ինչպես նիմփային անսպասելի հանդիպած որսորդ, որի փնտրածը, ասենք, բառերի երամն է և ոչ թե ինչ-որ «ավար»: Եվ որպեսզի գիտակցությունն իր անվերջ սուզումների բազմապատկումից չխենթանա, դադար է առնում, - «դադար», որտեղ «բառերը կորցնում են իրենց իմաստները և հայտնվում երանության»⁵ կամ մի այլ «փայլի» մեջ, որն ի տարբերություն արտաքին շլացքի՝ աչք կկոցել չի տալիս, չի թարթեցնում, աչքն «անթարթ» է պահում, ուղիղ աչքի մեջ է, բայց «չի ծակում»: Այն «Վեդաներից», «Սեփեր հեցիրա»-ից («Գիրք արարչության») ու «Ենոքի գրքից» շողարծակվող «փայլն» է, որին անվերջ չէ և միշտ չէ, որ կարող ենք նայել: Այս «փայլ»-որսացումը ինչքան էլ մի ոստյունով («Յոթներորդ որսորդության» ոստյունով, որը, ըստ իս, կիզակետված է «Օսիպ Մանդելշտամ»-ում) տրված լինի մեզ, չի կարող անվերջ մնալ ինքնաբավ: Այն ուզում է հայտնված լինել, հայտնել իրեն, ու այստեղ է ահա, որ «հակընթաց-սահմանից» վերադառնալիս («...ուր բառերը կորցնում են իրենց իմաստները...») զարմանք է ապրում այդ «փայլ»-որսացողը, թե բանաստեղծներն ինչպե՞ս են կարողանում խոսել «սոսկ հասկացումով», այդքան «անսխալ», քերականորեն ու շարահյուսորեն «մոնումենտալ», այդքան ոչ «մանդելշտամային»՝ շլացած բառերի արտաքին էֆեկտներով: Այստեղ է, որ վերհիշվում է այն «դադարը», որ ինքնին փայլ է, ու այն «փայլը», որ դադարի հայտնությունն է: Այստեղ է, որ հայտնվելով իրերի աշխարհում, բանաստեղծը փնտրում է իր

նհմփային, նրան, ում մեջ ինքը մի անգամ ընկել է (թույլ տանք այսպես արտահայտվել): Յ. Մովսեսի համար դա իր հայերենն է («Չակոբնովսեսական» հայերեն-եզակին), Մանդելշտամինը՝ իր ռուսերենը («հովսեփենի»-եզակին), Ռիլկեինը՝ իր գերմաներենը, Սեն-ժոն Պերսինը՝ իր ֆրանսերենը:

Նհմփա-հայերենի նախաստեղծ տարերքի խոցելիությունը այն եղծելու սպառնալիքից չէ (հայերենի կողքին միշտ էլ սատիրներ եղել են), այլ նրանից, որ ինքը բաց է: Իր բացությունից է: Եվ ինքը մղված է սրբազնագրկության, թե չի հայտնվում իր տարերքը խոսեցնող Չայացքը: Եթե բացակայում է նա, ով ձգողության տարերքի մեջ է՝ լինել այնտեղ, ուր «եռնն է հունցվում. «Սակայն ես - ես այն ձգողությունն եմ ձեզ ասում, որով երկրի երեսին/ Լոկ մոր մագնիսն է օդում սավառնող սաղմն իրեն ձգում»: Չայացք, որ կայծքարերի բախման պես սուրբ մոլեգնումի առկայծումով ինքն է բախվում նհմփայի հայացքին ու բռնկվում է մարգարեությանը: Բանաստեղծումի մեր նախորդներից սկսած մինչև մեր նորագույնները՝ բառ-որոնումի ծիսականության մոլեգին պահերով հայերենին նետած Նարեկացու հայացքի ու նհմփա-հայերենի փոխադարձ հայեցումի միջև բռնկվող մարգարեությամբ չեն փայլել: Մի շփոթեք. ես Նարեկացու գրի վարպետությունից չեմ խոսում (թեև դա էլ կարող եմ պնդել), այլ հայոց լեզվի նհմփայի մեջ ընկնելու հմայվածությունից, լեզու, որն օտար Մանդելշտամին, բնականաբար, պետք է պատկերանար «վայրի» և ուրիշ ոչ այլ կերպ, և ուր «կատվայինը» խորհրդավորի, ճապուկ լինելու և «ճկունի» լրացումն է:

Քմահաճույք կամ համառություն չէ, եթե ես ուզում եմ նախապես փարատել

այն ընդդիմացումները, թե ես ինչի՞ց եմ խոսում,- ոչ Մանդելշտամն է այսքան հեռուն տանող իմաստ դրել հայերենի իր ընկալման մեջ, ոչ էլ Յ. Մովսեսի պարագայում է տեղին Նարեկացու «հմայվածությունից» խոսելը: Խիստ վարպետ չեմ հակաճառումներ լռեցնելու մեջ: Բայց և այնպես... Ես նա էլ չեմ, ով վստահ լինելով, որ քմահաճույքից ու համառությունից չէ, որ խոսում է, այնուամենայնիվ, ընկրկում է իր պնդումներից՝ վախենալով սխալ հասկացված լինելուց: Սխալվում եմ, թե չեմ սխալվում՝ յուրաքանչյուր մեծ բանաստեղծի լեզու միայն իրեն հատուկ «տեղանք» է (Մանդելշտամի դեպքում «հովսեփենի»): սա ասելով համոզված եմ, որ հայերենը ինչ «հողում» էլ հնչի՝ «...իր տասանորդը պարտադրելու է...», մինչդեռ իր հողի վրա «ինքն է իրեն հարկատու» և իրավունք ունի իր «տեղանքը» կողքից դիտելու: Բացատրեմ միտքս, կամ ավելի շուտ՝ հիշեցնեմ հարցը. հնարավո՞ր է, որ հայ գրողն իր լեզվի հանդեպ իրեն այնքան «օտար» երևակայի, որ հարազատ բարբառը ի հայտ գա իբրև այն, ինչ այն Մանդելշտամին է թվացել: Չամարեք «թելադրված» հարց՝ ում կողմից կուզեք: Իսկ ես կարծում եմ՝ պոեզիայի առեղծվածներից մեկն այս հարցն է:

Անկարելի բան է չհուզվելը, տեսնելով, թե ինչպես է վայրի նվիրվածությամբ, մունջ մայրությամբ վայրի կատուն (կամ որևէ այլ կենդանի) լեզվով մաքրում իր նորածնի դեռ չձևավորված մորթին, մինչև որ այն փայլ է առնում լեզվի զգվանքից: Արտաքին փայլ է սա, ինչին հմուտ հարդարանքներով ու «լեզվական լոգանքով» կարող են հասնել բանաստեղծները: Բայց կա վայրի կատվի աչքերի փայլը, որը ոչ մի խնամքով ու հոգատարությամբ, ոչ մի «շտկումով» ու «բարելավմամբ» (քիչ հետո կբացահայտվի, թե ինչ «շտկու-

մից» ու «բարելավումից» ենք խոսում) ձեռք չի բերվում: Այն նորածնի հետ է ծնվում, նա այդ **նշանով** է, նրան թողնված է այդ նշանը՝ անտառային աղմուկներում իրեն ընդմիջտ «օտար» զգալու նշանը...

Վարպետություն (արտաքին փայլ-«լեզվով մորթին փայլեցնելը»), ի վերջո, հնարավոր է ձեռք բերել «դժվարին վարժանքներով» [Զարենց], որի դեպքում այդ հմուտ գիրը տեղազննելիս տեսնում ես, որ ամեն ինչ տեղին է, անգամ անթերի է, ոչ մի ավելորդություն, տող, հնչյուն, անգամ ձայնարկություն, շեշտադրություն,- բայց նույն պահին էլ ուզում ես բացականքել. Աստված իմ, իսկ ու՞ր է այս գրի գեղեցիկն ու մահացուն, աչքերի վայրի փայլը, որ գրին հաղորդում է միմիայի հմայք, ու՞ր է Հայացքի քողարկված բացատը, որ Պրոստին թելադրել է (գուցե Պրո՞ւստն էլ ինձ է թելադրել) ասելու՝ **խորհմաստ գրքերը գրված են ասես օտար լեզվով:**

Խուսափենք նախադասությունների ծայրառկախ ծանոթագրումներից ու ծավալվենք հենց այստեղ:

Հաճախ մեջբերվող այս ասույթը անմիջապես «Ընդդեմ Սենտ Բյովի» էսսեից չէ, ինչպես երբեմն հղում են անում, այլ դրա «Հավելվածից» («Գրառումներ գրականության և քննադատության մասին»): «Խորհմաստ գրքերը օտար լեզվով գրվածի տպավորություն են թողնում: Ամեն մի բառ մեզնից յուրաքանչյուրը իմաստավորում է ըստ իր ընկալման, ծայրահեղ դեպքում ենթատեքստ ենք դարձնում այն, ինչը մասամբ կամ ամբողջովին խեղաթյուրում է տվյալ բառիմաստը, ընդհուպ լրիվ հակառակ նշանակությամբ: Բայց լրջագույն գրքերում խորը իմաստ ունի նաև «խեղաթյուրվածը»: Երբ ես ընթերցում եմ Բարբիեի «Հմայվածը», ինձ

կին կերպարներից մեկը (տիկին Տ-ն...) պատկերանում է ասես Մանտենյայի կտավից, որ Բոտտիչելլին իր որմնանկարում է վերակերտել: Իսկ հանարավոր է Բարբիեն միանգամայն այլ իմաստ է ենթադրել: Այնինչ նրա նկարագրածը, երբ դիտում եմ այս փոխկապակցված ամբողջության մեջ, անգամ իմ թյուր մեկնությամբ չի դադարում խորիմաստ մնալ:

Հայացքի քողարկված բացատը (ուր մեր հիշեցրած Հայացքների միջև վայրի «դադարն» է ու «փայլը») տանող մշուշ են հագել Հ. Մովսեսի բառերը, որոնց հետևելիս մի պահ կանգ ես առնում՝ արդյո՞ք թանձր չէ մշուշը այնքան, որ մեզ մոլորեցնի կիսաճամփի թավուտներում: Բայց ինչպես Մանդելշտամին, Հ. Մովսեսին ընթերցելը «ճեղքելով» է ընթացավորվում: Փայլատակող ցուանքով ջրի ընթացքի սահքն է իրեն հակված հայ բանաստեղծի Հայացքում ու այդ Հայացքի սահանքն է ջրերի մեջ, ընդսմին երկկողմ պահընթացի ֆիքսումն է, երբ հնարավոր է դառնում այն «դադարի» մեջ տեսնելը, որովհետև «դադարի» մեջ է լեզվի «փայլը», և որովհետև պահը եզակի է (Մանդելշտամի դեպքում՝ «հովսեփեցին»): «Մեկուսի նստած նայում է իրեն ջրերի վրա/ և արտասվում է ինքը իր դեմքին»... Ընթերցե՛ք «ճեղքելով» ու կհասկանաք: Քայլքով չէ այստեղ, ինչպես սովորել եք ձեր ոտքի «չափին», որ սերտած ուղիներ է «խմում» առանց ջանքի, ինչպես բանաստեղծություն եք գրում հեշտ ու «սովորած» ու «սովորածով» էլ ընթերցում եք, ըստ որում նախանձեղիորեն այնպես հանգիստ, ինչպես կխմեիք մի գավաթ զովացուցիչ: Հ. Մովսեսը ասես «օտար» բարբառով է գրում՝ միաժամանակ մնալով միմիայի մեջ: Մանդելշտամի «վայրին» այնքանով է իրենը, ինչքանով դա վերաբեր-

վում է հայերենի հնչյունախոսությամբ: Ընթերցե՛ք «ճեղքելով» - ու կհասկանաք: «Յոթներորդ որսորդություն» գրքի «Օսիպ Մանդելշտամի» սկզբում ասված «անանունը» («Մեկը դեզի մոտ, լուսաբացի դեմ անունն է կանչում,/ Գուցե մուրացիկ, գուցե, Ծննդո՛ց, արշալույսի քո այն անանունն է»...) բացահայտվում է բանաստեղծության վերջին բառով՝ **հովսեփենի** («Ծննդոցի» Հովսեփը, ռուսերենի Осип-ը), որպես աննմանն ու անվանելի «անանունը», որպես անթարգամանելին, Եզակին («Իրականությունն աղերսում է մեզ իրեն արարել/ և ոչ թե անվերջ կրկնապատկել»), առանց որի, ինչքան էլ փայլեք վարպետությամբ, անհաղորդ

կմնաք նիմփայի հմայքին, չեք որսա Հնայողի (նիմփա-հայերենի) և Հնայվողի (նիմփայի մեջ ընկած բանաստեղծի) հայացքների միջև «դադարը» ու այս «դադարի» հանկարծակիության մեջ «փայլը», որից լուսավորվում է Օսիպ Մանդելշտամի և Հակոբ Մովսեսի հայացքների քողարկված բացատրճ:

* Հակոբ Մովսես, «Յոթներորդ որսորդություն», բանաստեղծություններ, Երևան, 2013: «Օսիպ Մանդելշտամ», 227-232 էջ /բանաստեղծությունն ամբողջությամբ ստորել/

Ծանոթագրումներ

1. Հ. Մովսեսի նոր լույս տեսած «Գրառումների» ոչ մի տողին նախապես ծանոթ չեմ եղել: Գիրքընթերցել եմ, երբ սույն գրվածքը վաղուց ավարտված էր: Ու չափազանցություն թող չթվա՝ ավելի ուրախ եմ բնաբան ընտրած այդ մի քանի տողը կռահելու համար, քան... ամբողջի:

2. Անընդհատ ճիշտ գրելու միտքը խելագարեցնում է: Երբեմն հոգնեցնում է տեքստային «տեղանքը» ընդմիջտ չլքելը, նրանից կառչած մնալու սահմանափակությունը, և դու տենչում ես «այն կողմը» (մետա-ն), «անդինը», որը գրեթե չի տրվում ընկալումի, բայց թույլ է տալիս գոնե ընկալումի պատրանքն ունենալ,- որն իր անորսալիության մեջ քննողին նույնպես պահում է նիմփայի հմայքով, որքան իրեն՝ բանաստեղծին:

3. «Նիմփայի մեջ ընկնելու գրավչությունը ապրվում է արարչական-տարերային ակունքներին մերձությամբ, ամենայն նյութվածքից ազատագրումով, երբ մահկանացուն մարում է աննյութ-«ակունքներում», երբ տարրերը դեռ նյութառու չէին, տարածությունն ու ժամանակը հարդարված չէին արարվածքների նրբագեղությամբ ու կարգով ու չէին հագել մարմնավոր պատյանները, և համատարած դիարմա էր (նախատարրերի անվորդվություն): Ու սա ապրվում է որպես նաև պլատոնյան տրամա: Ու այս տրամա-կանչը որքան զեղագիտական է (տրամաի մեջ ընկնելը առանձնահատուկ է նիմփայի զեղեցկության մեջ ընկնելու դեպքում), նույնքան էլ գոյաբանական է, որովհետև դա առ չգոյը-մահը, տարերային նախածին վիճակը վերադառնալու հոգեմղումով է բացատրվում: «Այն կողմում» լինելը կարող է ցնծությամբ լինել (ինչը, համոզված եմ, ակնհայտ է եթե ոչ Մանդելշտամի, ապա Հ. Մովսեսի պարագայում), կարող է լինել հոռի մի մռայլությամբ (Շոպենհաուեր), կարող է նաև չեզոքությամբ լինել (Բուդդա): Քաղվածքը որոշ հավելումով մեր «Ֆուլքներ, «Ան երաժշտություն»» գրությունից է:

4. Սեն-ժոն Պերս. «Ծովեզերքներ», նախաբանը՝ Հ. Մովսեսի:

5. Նույն տեղում:

Գեղարմ Աշուն 2018

6. Այնուհանդերձ, այստեղ չեն խուսափի մի «ավելորդ» ծանոթագրումից: Իմ «Լեզու և տաբու» բանաստեղծական գրքի առնչությամբ մեղադրանքներ են լսել, թե ես «քառսի» են վերածել հայոց լեզուն, մեղանչելով բայական խոնարհումների, շարահյուսական «օրինաչափությունների», քերականության և այլնի դեմ, ինչը չեն ուզում այստեղ մանրամասնել, ու բավարարվում են մի պատկերով: Ես բարձր սիզախոտերի մեջ թաքնված մի տարիքում եմ, որ չի ուզում իրեն նկատած լինեն ու խոտերում պետք է պահ մտած մնա, քանի դեռ հույս ունի, որ բացատի եզրին խոտերի ու ծղրիղների, տերևների ու ցողերի միջից կհայտնվի իր նիմփան և այն ամենը, որ գետնամորու չբացված տերևների պես փռված է եղել իր գրվածքներում, կթողնի որսատեղում ու իր նիմփայի հմայքին գերված կհետևի նրան՝ մինչև իր քողարկված բացատը, ուր գետնամորու չբացված տերևներով հայերենը «բացվում» է նիմփայի հայացքում, ու «դադարը», որ տևում է իմ ու նրա հայացքների սևեռումից, հուսով եմ՝ մի օր «փայլ» կառնի,- ես նկատի ունեմ այն **նիմփայական փայլը**, որ ես տեսա Յակոբ Մովսեսի ու Օսիպ Մանդելշտամի լեզուների մեջ:

Հակոբ ՄՈՎՍԵՍ

ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄ

Մեկը դեզի մոտ լուսաբացի դեմ անունն է կանչում,
Գուցե մուրացիկ, գուցե, Ծննդո՜ց, արշալույսի քո այն անանունն է: -
Նա գոտուց կախված նրա թրից է նրան ճանաչում,
Որ մենությունն է:

-Մենք վեր կացանք և մթության ծանր դռնակը բացինք:
Գիշերվա ափին շերամն իր ոսկյա դագազին էր դրել:
Մեզ ի՞նչ է մնում՝ ունկերս պարզել մեզ աշտարակից հազիվհաս
հասնող ձայնին երգեցիկ
Եվ մատներին մեջ մեր մեղրամուսմած թելը ոլորել:

Այստեղ եմ,- ասում և մոտենում է, և կողքին է իր մտերիմն՝ հոգին,
Կրունկը՝ ճաքած, քուրջ ու փալաս է աստ հազինը իր,-
Երկրի կածանին սայթաքում, ընկնում, ելնում է կրկին,
Իսկ մյուս կողքին նա՝ է թևանցուկ – Հույսը՝ կինը իր:

Նա իր բառերի ողորմությունը դնում է քարին,
Ինքը՝ մուրացիկ, բայց այդ ինքն է, որ – ծոցից իրերին բաժին է հանում,
Մանրադրամն է բռնելով ցփնում պատի տակ մուրող ժամանակներին,
Մի կտոր հաց էլ, պատառն իր կիսած, նա տիեզերքի բերանն է դնում:

*

Մնունդը հունցող տարրը անապակ թուքն է բերանի,
Թեև տառապանք, բայց բառով պիտի մեր բերաններում էռնն այս հունցվի,
Մունկ ազարիկոն, միայն անունը բավական է մեզ, որ տառապանքը
հատուցված լինի,
Որ երկրի վրա կյանքն օրհնաբանվի և արդարացվի:

Գեղարմ Աշուն 2018

Տեղացի՞, բնի՞կ, գաղթակա՞ն, եկվո՞ր,- քահանան կասի, թե ինչ է գրված
ծխամատյանում:

Բայց դարը ելնում և նրա վրա քսի է տալիս իր գամփռներին,
-Երբումնե՛ր տուր ինձ, ինձ խոստովանի՛ր,- նրա ձեռքերը խաչին մեխելով՝
իր խարազանն է շրխկացնում,-
Սակայն Պոեզիան ազդարարում է, որ կա Գամերի Համաստեղություն,
որը ծագում է միայն ձեռներին:

Եվ բանաստեղծը բացում է մեր դեմ ծղոտով հյուսված դռնակը իր տան,
Մեզ ներս է կանչում, հյուրասիրում է, խոսում-կակազում,
-Տաղաչափությունն,- ասում է նա մեզ,- այստեղ խոստումի տեսակ է միայն:
-Եթե սրնգի շուրթից չի ելել՝ ես ոչ մի երդման երդում չեմ ասում:

*

Եվ ամբոխները ընտրում են իրենց բանաստեղծներին,
Հանց որսապետը՝ այդ օրվա որսի շներին որսկան:
-Որսն իրական է, եթե ոտմահետք է թողնում այստեղ այս ավազներին,-
Եվ այսուհետև պոեզիան ճորտն է իրականության:

-Ղու այսուհետև,- ասում են նրան,- դու պիտի ուտես նրա սեղանից, և,
ասում են, թող
Քո ծառայական զգեստը նրա նորաձևության սրահների մեջ ձևվի և կարվի:
Եվ բանաստեղծին իրականությունն ահա թողնում է թերմացքը իր ճոխ
Եվ ասում է, որ – թող նա դրանով սոսկ բավարարվի:

Քարտաշը էլ չի երգում իր բարձր տախտակամածին՝ քարն իր նախշելով,
Ինչը ասվում է՝ ո՛չ թե լեզվով է ասվում և խոսվում, այլ հաղորդվում է՝ իբրև
վերջին լուր՝ հաղորդված վաղուց,
Մեկը դեպքի և իրադարձության մսերի մեջ է կնճիթը խրում՝ կուշտ-կուշտ քաշելով,
Մյուսը խվլում, գեռում է, ուռչում՝ իրականության թևատակերը քաշված մակաբույծ:

*

Այս մեկը ահա իր մսե սրտից իր հիշոցներն է, հանց քրոնիկոն, ամեն օր
հանում ճիչ-աղաղակով,
Մյուսը, սակայն,- ժրաջան կցո՞րդ, թե՞ ականջմտուկ,- ամեն անկյունից
ականջ է մտնում,
Մեկն զգացմունքի ալկոհոլն է իր սեղանին դնում, մյուսը արդեն
թունավորել է ինքն իրեն մտքով,
Սակայն պոեզիան մեր կողքին անտես քայլում է դեպի Էմմաուս տանող
ճանապարհին և - իրեն չի հայտնում:

Մեկուսի նստած նայում է իրեն ջրերի վրա և արտասվում է ինքը իր դեմքին
Եվ քարերին է դնում իր ծոցի բլիթը աղի:
Ասպատակում է խոսքը հանց հորդա՝ իր տասանորդը պարտադրելով
այստեղ ամենքին,
Եվ պոեզիայի արտերն են լցվում երկսեռ չուերը ահա մարախի:

Գեղարմ Աշուն 2018

Իր տակ է առնում առարկա և իր ժամանակների ստվերն երկարող,
Նրանց պղնձե ջրորդաններով կեղտաջրերն են կաթում ու կաթում:
-Պոեզիան,- այստեղ մեկը կանգնելով այսպես է ասում,- մեր զգացմունքի
քափոնն է այստեղ, մտքի ծուխն ելնող,-
Եվ, տարածվելով, նա ինքն իր հերթին հողն է վարակում, օդն է աղտոտում:

-Եթե ես ասեմ, որ ձյունն առաջին՝ Մագթադիներն է ձեր ոտքերի տակ,
Եթե ես ասեմ՝ լույսի լիցքով է աստղը լցունված, գուցե շատ լինի - դուք չեք
հավատա:
Սակայն մեկն ահա գրկում է ձյունը, որ չկոխկրճեն,- նրան ասում է՝ քո՛ւյր իմ
անապակ,
Սակայն ջրերը վերցնում են աստղը անհունի թոնրից և մթնով իրենց
զամբյուղն են դնում, հանց քաղցր գաթա:

*

Իր հանքերակում իր բյուրեղներն է ոսկին ժողովում գիշերվա կեսին,
Մագնիսը միայն թուջ ու երկաթ է իր բևեռներին այստեղ հավաքում,
Սակայն ես – ես այն ձգողությունն են ձեզ ասում, որով երկրի երեսին
Լոկ մոր մագնիսն է օդում սավառնող սաղմն իրեն ձգում:

*

Յնցվում են, ցնցվում սյուններն աշխարհի, երկիրն է դողում
կայծակների տակ,
Ջրերի վրա օրորվում է մի նախշագարդ տապան:-
Նոյը բացում է դուռը երգեցիկ, և փռփռալով օդ է բարձրանում
աղավնին ճերմակ,
Եվ նրա կողքին՝ վեց ձայնավորներ հրեշտակաբան:

*

Շուտով աշխարհի շիկահավի ձագն էլի գլուխը ձվից կհանի:
Եվ ժամանակն իր բույնը կհյուսի: Եվ բանաստեղծը կելնի անարգել:
Նա կփարատի այստեղ սարսափը ամպրոպաբանի:
Իրականությունն աղերսում է մեզ իրեն արարել և ոչ թե անվերջ
կրկնապատկել:
Իսկ արևմուտքում կուտակվող ամպը լցակայանն է ագարիկոնի:

*

Գիշերվա կեսին բոբիկ ոտքերով դակտիլն է հայտնվում – ո՞ւր դիմավորենք
մենք աթենուհուն:
Գուցե նա ասի մեզ սիրո մասին, գուցե նա գիտի սիրո անունը:
Նա սփռվում է ջրերի վրա մագերը փռած երկրի մանկամարդ
ողբասացուհուն,
Նրան ասում է, որ մահն անմահի ստանձնությունն է:

Գեղարմ Աշուն 2018

*

Պահակության է կանգնած աշխարհում ջրերի վրա բառն` իրի հոգին,
Իրը իր անվան մարգարիտըն է իր մեջ խեցու պես հասունացնում
փեղկերում իր գույգ:
Երեք խնձոր կա Աստծու զամբյուղում, ճրագն է վառվում նրա թարեքին:
Իսկ բանաստեղծին մենք ի՞նչ անվանենք,- գուցե ձեթի մեջ թաթախված
պատրույգ:

*

Երկրի որդիներ, իջնելով այստեղ` ես ջրվորի պես
Ձեր գլուխներին թեքեցի կավե կուժն իմ ջրհոսի:
Նրա բերանից հեղեցի երգն իմ Եղերերգուի և իմ Պայծառի,
- Գուշակությունը գալիքի մասին – ահա գործը իմ հնչյունաբանի:

Քամի՛ Աքվիլոն, չքնաղ դո՛ւստրդ դու Օրփեոսի,
Քամի՛ Աքվիլոն, ես խոստանում եմ, երբ դու գարնանը դարձյալ հայտնվես,
Քո ցանցաճոճքը բաց կանեմ այստեղ սաղարթի ներքո այն կանաչ ծառի,
Որը իմ բարձրյալ բուսաբանների առաջարկությամբ աստեղ կոչեցի ես
հովսեփենի:

Բժիշկ N-ը՝ ընկերս, անհետացավ: Մի վարկածով՝ սպանել էին, մյուսով՝ խեղդվել էր Նովոռոսիյսկում նավ նստելիս, երրորդ վարկածով՝ ողջ-առողջ ու Բուենոս-Այրեսում է:

Ինչևէ, ճամպուրկը, որ պարունակում էր 3 գիշերաշապիկ, բժիշկ Ռաբովի գրպանի դեղագիրը (1916թ. հրատ.), երկու գույգ գուլպա, պրոֆեսոր Մեչնիկովի լուսանկարը, մի քարացած ֆրանսիական բուլկի, «Մարյա Լուսևան արտասահմանում» վեպը, փոշի պիրոմիդոնի 6 ծրար՝ 0,3 գրամով, ու բժշկի նոթատետրը, ընկավ նրա քրոջ ձեռքը:


Քույրը նոթատետրը փոստով ուղարկեց ինձ, նամակի հետ միասին, որը սկսվում էր հետևյալ բառերով. «Դուք գրող եք ու նրա ընկերը, տպագրեք, քանզի հետաքրքիր է» (Հետո «Ընթերցանության օգուտի մասին» թեմայով կանացի դատողություններ են՝ վրան շաղ եկած արցունքի բծերով):

Չեմ կարծում, որ գրառումներն առանձնապես հետաքրքիր են. որոշ հատվածներ բացարձակ անընթեռնելի են (բժիշկ N-ի ձեռագիրը նողկալի է), բայց և այնպես հրապարակում եմ բժշկի նոթատետրի անկապ գրառումներն առանց որևէ փոփոխության՝ միայն գլուխների բաժանելով ու վերնագրելով:

Ինքնին հասկանալի է, որ հոնորարն ուղարկելու եմ բժիշկ N-ին, Բուենոս-Այրես, հենց որ ստույգ տեղեկություններ ստանամ, որ իրոք այնտեղ է:

Միխայիլ ԲՈՒԼԳԱԿՈՎ

**ԲԺՇԿԻ
ԱՆԵՐԵՎԱԿԱՅԵԼԻ
ԱՐԿԱԾՆԵՐԸ**



I. Անվերնագիր՝ պարզապես աղաղակ

Ինչո՞ւ ես հալածում ինձ, ճակատագիր: Ինչո՞ւ հարյուր տարի առաջ չծնվեցի: Կամ ավելի լավ է՝ հարյուր տարի հետո: Իսկ ամենալավը՝ որ ընդհանրապես ծնված չլինեի: Այսօր մի տիպ ասաց. «Բայց հո՛ ձեր թռռներին պատմելու բան կունենաք»: Ապուշի մե՛կը: Կարծես միակ

երազանքս օր ծերության թռռներիս ամեն կարգի ցնդաբանություն պատմելն է այն մասին, թե ինչպես էի կախվել ցանկապատից...

Ընդ որում՝ ոչ միայն թռռներ, նույնիսկ երեխաներ չեմ ունենա, քանի որ այսպես շարունակվելու դեպքում ինձ անկասկած կսպանեն մոտակա ժամանակներս...

Գրողի ծոցը թռռները: Իմ մասնագիտությունը մանրէաբանությունն է: Իմ սերը՝ կանաչ լուսամտի մոտ ու գրքերն իմ աշխատասենյակում: Ես մանկուց առել եմ Ֆենիմոր Կուպերին, Շեռլոկ Հոլմսին, վագրերին ու հրացանի կրակոցները, Նապոլեոնին, պատերազմներն ու նավաստի Կոչկայի տարատեսակ կտրիճական սխրանքները:

Ես այդ ամենի հակում չունեմ: Ես մանրէաբանության հակում ունեմ:

Ընդամին...

Կանաչ լամպը մարեց: «Պարուրամանրեական հիվանդությունների քիմիաթերապիան» ընկած է հատակին: Նրբանցքում կրակում են: Ինձ գորակոչել է թվով հինգերորդ իշխանությունը:

.....

II. Յողը փրկում է կյանքը

Երեկո ... դեկտեմբերի

Հինգերորդ իշխանությանը դուրս շարտեցին, իսկ ես քիչ էր մնում կյանքից գրկվեի... Յերեկվա ժամը հինգի կողմերը ամեն ինչ իրար խառնվեց: Սառնամանիք: Արևելյան արվարձանում կտկտում են գնդացիները: «Նրանցն» են: Արևմտյան արվարձանում «մերոնք» են: Հրացանավոր ինչ-որ կերպարանքներ են վազվզում: Ընդհանրապես ցնդաբանություն է: Կառքեր են անցնում: Լսում եմ, ասում են՝ «Նոր իշխանություն է...»:

«Ձեր գորամասը (ի՛նչ իմը, գրողը տանի) Վլադիմիրսկիում է»: Վազում եմ Վլադիմիրսկիով ու բան չեմ հասկանում: Ինչ-որ խառնաշփոթ է: Բոլորին հարցնում եմ՝ որտեղ է «իմ» գորամասը... Բայց բոլորը թռչում են իմ կողքով, ու ոչ ոք չի պատասխանում: Ու հանկարծ տեսնեմ՝ կարմրապոչ գդակավորներ են կտրում փողոցն ու գոռում են.

- Բռնի՛ դրան: Բռնի՛:
- Շուրջս նայեցի՝ ո՞ւմ:
- Պարզվեց՝ ինձ:

Նոր միայն հասկացա, թե ինչ պիտի անեմ. պարզապես փախչել տուն: Ու փախա՛: Ինչ երջանկություն է, որ գլխի ընկա ծլկել նրբանցք: Իսկ այնտեղ այգի է: Ցանկապատ: Ես՝ ցանկապատի վրայով: Դրանք գոռում են.

- Կանգնի՛:

Բայց ինչքան էլ անփորձ եմ այդ բոլոր պատերազմներում, բնագործ հասկացա, որ կանգնել չի կարելի: Ու անցա ցանկապատը: Հետևիցս՝ թրխկ, թրխկ: Ու չգիտես՝ որտեղից մի չար, բուրդը բիզ-բիզ կանգնած սպիտակ շուն հարձակվեց վրաս: Բռնեց շիներև, ծվեն-ծվեն է անում: Կախվեցի ցանկապատից: Մի ձեռքով ինձ եմ պահում, մյուսով՝ յողի բանկան (200 գր.): Հրաշալի գերմանական յող է: Մտածելու ժամանակ չկա: Թիկունքից՝ ոտքերի թիփփոց: Շունն ինձ կկործանի: Թափ առա ու բանկայով հասցրի գլխին: Շունը ակնթարթորեն շիկակարմիր ներկվեց, վնասուց ու փախավ: Ես՝ այգու միջով: Դռնակ: Նրբանցք: Լռություն: Դեպի տուն...

...Մինչև հիմա շունչս տեղը չի գալիս:

Գեղարմ Աշուն 2018

Գիշերը հարավում կրակում էին թնդանոթներից, բայց ումն են՝ արդեն չգիտեմ:
Շա՛տ ափսոս էր յողը:

III. Լույս 3-ի գիշերը

Ինչ-որ աննկարագրելի բան է կատարվում... Նոր իշխանությանն էլ քչեցին: Աշ-
խարհում նրանից վատ բան լինել չէր կարող: Փառք Աստծո: Փառք Աստծո: Փա՛ռք...

Ինձ գորակոչեցին երեկ: Չէ՛, նախորդ օրը: Մի լրիվ օր անցկացրի սառած կամրջի
վրա: Գիշերը՝ 150 գրոյից ցածր (ըստ Ռեոմյուրի), քամու տակ: Ամբողջ գիշեր սուլում
էր կամրջի աչքերում: Քաղաքի լույսերը վառվում էին մյուս ափին: Ավանը այս ափին
է: Մենք մեջտեղն էինք: Հետո բողբոլ փախան քաղաք: Երբեք այդպիսի հրմշտոց չեմ
տեսել: Հեծելակներ: Հետևակներ: Թնդանոթներ էլ էին անցնում, դաշտային խոհա-
նոցներ: Խոհանոցի վրա՝ գթության քույր: Ասացին՝ ինձ Գալիցիա են տանում: Միայն
այդ ժամանակ գլխի ընկա, որ պետք է փախչել: Բոլոր փեղկերը փակ էին, բոլոր շքա-
մուտքերը՝ մեխած: Վազում էի թմբլիկ սպիտակ սյուններով եկեղեցու մոտով: Հետևիցս
կրակեցին: Բայց չկպան: Թաքնվեցի բակում, ծածկի տակ ու երկու ժամ նստեցի այն-
տեղ: Երբ լուսինը ամպի տակ անցավ, դուրս եկա: Մեռյալ փողոցներով վազում էի
տուն: Ոչ մեկը չհանդիպեց: Վազելիս մտածում էի իմ ճակատագրի մասին: Նա ծիծա-
ղում է վրաս: Ես բժիշկ եմ, ատենախոսություն եմ գրում, բայց գիշերով, առնետի պես
նստել եմ օտար բակում: Ժամանակ առ ժամանակ ափսոսում եմ, որ գրող չեմ: Բայց
ո՞վ կհավատա: Համոզված եմ՝ եթե գրառումներս որևէ մեկի ձեռքն ընկնեն, կմտածի,
որ այդ ամենը հորինել եմ:

Առավոտվա կողմ կրակում էին թնդանոթներից:

IV. Իտալական հարմոնիկը

15-ը փետրվարի

Այսօր հեծյալ գունդ ժամանեց, զբաղեցրին ամբողջ թաղամասը: Երեկոյան 2-րդ
էսկադրոնից մեկը ընդունելության եկավ (Էմֆիզեմա): Հերթին սպասելիս ընդունարա-
նում իտալական մեծ հարմոնիկ էր նվագում: Հրաշալի է նվագում այդ Էմֆիզեմայով
տառապողը («Մանջուրիայի բլուրներին»), բայց այցելուներն անհավոր անհանգիստ
են, ու կատարելապես անհնար է լսել: Նրան արտահերթ ընդունեցի: Բնակարանս
նրան շատ դուր եկավ: Ուզում է դասակապետի հետ տեղափոխվել ինձ մոտ: Հարց-
նում է՝ գրամոֆոն ունե՞մ...

Էմֆիզեմաայով տառապողի համար դեղատանը դեղը պատրաստեցին քսան բո-
պեում ու ձրի: Հրաշալի է, ազնիվ խոսք:

17-ը փետրվարի

Այս գիշեր քնեցի. գրամոֆոնը ներքևում փչացել էր:

Թղթեր ճարեցի՝ 18 կնիքներով, առ այն, որ բնակտարածությունս չի կարելի
խտացնել, և փակցրի շքամուտքի, աշխատասենյակի ու ճաշասենյակի դռներին:

21-ը փետրվ.

Բնակտարածությունս խտացրին...

...Ու գորակոչեցին:

... մարտի

Հեծյալ գունդը գնաց կռվելու ինչ-որ ատամանի դեմ: Գնդի ետևից սայլի վրա գրամոֆոնն էր գնում ու նվագում էր «Դուք երգեր եք խնդրում»: Ի՛նչ հաճելի գյուտ է, համենայնդեպս:

Առավոտվա կողմ թնդանոթներից կրակում էին:

V

VI. Հրետանային նախապատրաստություն ու սապոզներ

VII

Իհարկե: Ինձ տանում են:

...Թնդանոթներից

...ես

VIII. Խանկալիի կիրճը

Սեպտեմբեր

Ժամանակ առ ժամանակ ինձ թվում է, որ այս ամենը երազ է: Ահեղն Աստված կիտել է լեռները: Կիրճերում մշուշ է լողում: Լեռների բացվածքներում ամրուպաբեր ամպեր են: Ու խելառ խփվում է քարերին

...ալիքը պղտոր ու մռայլ.

Չար չեչենն է գգույշ սողում ափ

Ու սրում դաշույնը:

Ուզուն-Հաջին՝ Չեչեն աուլում: Աուլը հարթ ձգվում է լեռների կապտավուն ծխամշուշի ֆոնին: Հարթահատակ Խանկալիի կիրճում ճամփաներին փոշու ամպ են բարձրացնում արաբաները, երկանիվ սայլերը: Կիզլյարոգրեբենսկի կազակները կանգնել են ձախ թևում, հուսարները՝ աջ: Տրորված եգիպտացորենի արտերում մարտկոցներն են: Կոտորակառումբերով խփում են Ուզունին: Չեչենները չարքերի պես են կռվում «սալիտակ չարքերի» դեմ: Գետակի ափին, ուր ընկած է ձիու փքված դին, երկանիվ սայլակի վրա փողփողում է կարմրախաչ դրոշը: Այդտեղ, ինձ մոտ են հասցնում արնաթաթախ կազակներին, ու նրանք մեռնում են իմ ձեռքերի վրա:

Ամպրուպաբեր ամպը լեռների հետևն անցավ: Արևը կրակ է թափում, ու ես ազահո-

րեն կլլում են տափաշշի գարշահոտ ջուրը: Գթության քույրերը դեսուդեն են նետվում, բարձացնում սայլակների ծղոտին անգոր հակված, սայլտակ վիրակապերով պատած գլուխները, ջուր են տալիս:

Գնդացիները համերաշխ ճարճատում են երամի պես:

Չեչենները խփում են աուլից: Կատաղի են կռվում: Բայց ոչինչ չի ստացվի: Երկու քոստո երեքդույնանոցով ի՞նչ պիտի անեն կուբանյան հետևակի երեք մարտկոցների դեմ...

Կոկորդալին աղաղակներով սլացավ նրանց կտրիճ հեծելագունը տրորված, վառված եգիպտացորենային տարածություններով: Թևից հարվածեց թերեքյան կազակներին: Նրանք քիչ էր մնում փախչեին: Բայց վրա հասան կուբանցիները, նորից կտկտացին գնդացիներն ու հեծյակներին քշեցին եգիպտացորենի դաշտերից այն կողմ, սարահարթը, որտեղ հեռադիտակով երևում են դատապարտված հյուղերը:

Գիշեր

Ավելի ու ավելի խուլ է հրաձգությունը: Աղջամուղջը՝ խիտ, ստվերները՝ խորհրդավոր: Հետո՝ թավշյա վարագույր և անծայրածիր աստղային օվկիանոս: Առավակը բարկացած ծփում է: Փռչում են ձիերը, իսկ աջ կողմում՝ կուբանյան գումարտակներում թարթելով վառվում են խարույկները: Որքան մութ, այնքան սարսափելի ու տխուր է: Մեր խարույկը չքչում է: Ծուխը մեկ իմ վրա է գալիս, մեկ՝ հեռանում: Թրթռացող լույսի մեջ կազակների դեմքերը փոփոխվող են, տարօրինակ: Խավարից պոկվում, նորից սուզվում են մթին անդունդը: Իսկ գիշերը ծավալվում է՝ անծայր, սև, սողացող: Չարություն է անում, վախեցնում է: Կիրճը երկար է: Եվ անհայտություն է գիշերային թավիշներում: Թիկունք չունենք: Ու սկսում է թվալ, որ ետևում կաղնու թավուտը կենդանանում է: Գուցե այնտեղ արդեն սողո՞ւմ են ցողաթաց խոտին սեղմված, չերքեզկայով ստվերները: Սողո՞ւմ են, սողո՞ւմ են... Ու չես հասցնի աչք թարթել՝ դուրս կքոչեն կատաղի ստվերները, ատելությունից վառվելով, ոռնոցով, սուլոցով և... ամեն:

Թո՛ւ, գրողը տանի:

- Դժվար է երաշխավորել,- գիշերվա անկայունության ու նենգության մասին իմ դիլետանտական դատողություններին պատասխանում է կրակի մոտ նստած Թերեքյան 3-րդ հեծգնդի կազակը,- թևից վրա կտան: Պատահել է:

Ա՛խ, լեգուղ չորանա: «Թևի՛ց»: Տե՛ր Աստված: Մա ի՞նչ բան է: Չիերը թրիք են ծամում, հրացանների փողերին՝ կրակի ցուլեր: «Դժվար է երաշխավորել»: Մշուշները՝ խավարի մեջ: Ուզում-Հաջին՝ ճակատագրական աուլում:

Ես, ի՞նչ է, Լերմոնտո՞վն են: Մա, կարծես, նրա գծով է: Ե՞ս ինչ կապ ունեն:

Փլվում են բրեզենտի վրա, կծկվում շինելի մեջ ու մայում աղամանդե ցայտքերով թավշյա գմբեթին: Եվ իմ գլխավերևում անմիջապես թևածում է թախծի աղոտ-ճերմակ թռչունը: Հայտնվում է կանաչ լամպը, լույսի շրջանակը՝ սնդուսած էջերին, աշխատասենյակի պատերը... Ամեն ինչ գլխիվայր թռչում է ներքև ու գրողի ծոցը: Հազարավոր վերստեր հեռու, ահարկու գիշերվա մեջ: Խանկալիի կիրճում...

Համենայնդեպս քունը հաղթում է: Բայց ինչպիսի՞: Մեկ լամպը՝ լուսամփոփի տակ, մեկ գիշերվա առեղի մթին լուսամփոփն ու նրա մեջ պար բռնած խարույկի բոցը: Մեկ գրիչի կամացուկ ճռռոցը, մեկ հրկեզ եգիպտացորենի ցողունների ճթճթոցը: Հանկարծ սուզվում ես պղտոր, քնկոտ մեզի մեջ, բայց ցնցվում ու վեր ես թռչում: Չնգացին թրերը, կոկորդալին ձայներ տարածվեցին, շողացին դաշույնները, արծաթե գլխիկներով

փամփշտակայները... Ա՛խ... Հարձակվեցին:

Բայց չէ՛: Թ՛վացել է... խաղաղ է շուրջը: Ձիերը փռշտում են, շարվեշար պառկած են սև յափնջիները. քնած են հոգնատանջ կազակները: Ու մոխիր է նստում ածուխների վրա, ու ցուրտ է փշում վերևից: Բացվում է գունատ հեռավոր լուսաբացը:

Անմարդկային հոգնածություն է: Արդեն չեչենների վրա էլ թքած: Կոպերդ չես բարձրացնի. արճիճ է: Աչքից կորչում է մեռնող խարույկը... Վրա կտան «թևքից»: Հավի պես կմորթեն: Մորթում են, թող մորթեն: Ի՞նչ տարբերություն...

Ջգվելի է այդ Լերմոնտովը: Միշտ տանել չեմ կարողացել: Հաջի: Ուզում: Նույն կարմրաշապիկ հատորում: Շապիկին՝ չտեսնող աչքերով ոսկե սպա ու թևիկներով ուսադիր: Քե՞զ եմ, եթերի ազատ որդի... Եթերի սրվակը պայթեց արևի տակ... Մեղմ, ավելի մեղմ, խուլ, մթին: Քուն:

IX. Ծուխ ու փետուր

Առավոտ

Գործն արված է: Սարահարթից սև ծխի քուլաներ բարձրացան: Թերեքցիները սուրացին եգիպտացորենի տարածություններից այն կողմ: Նորից կտկտաց գնդացիրը, բայց շատ շուտով դադարեց:

Վերցրին Չեչեն-աուլը...

Եվ ահա սարահարթում ենք: Կրակի սյուներ են բարձրանում երկինք: Բոցկլտում են սպիտակ տնակները, ցանկապատները, ճռթճռթում են ծառերը: Ծուռումուռ գուկակներով վնգում է հրե հողմը, առանձին ծխաքուլաները ոլորվում՝ ամպ են կապում, և ամպը հանդարտ անցնում է հետին պլան՝ դեպի «Դ-Լը» օպերայի բեմանկարները:

Հող ու երկինք պատված է փետուրով: Գրեթեմյան կտրիճները մորիկի պես սուրում են աուլ, ապա՝ հետ: Թամբերից կախ, կապկպած խրճերով, սարսափած ծղրտում են հավերն ու սագերը:

Մեր կայանատեղում առավոտից լուկուլոսյան խրախճանք է: Տասնհինգ հավ լցրին կաթսան: Ոսկեգույն, յուղոտ արգանակ. մատներդ հետը կուտես: Հավերը Շուգան է մորթոտում, ինչպես Հերովդեսը՝ մանկանց:

Իսկ այնտեղ՝ ժայռազանգվածների խորհրդավոր խորխորատներում, որոնց լանջերով սողում ու հալվում է մշուշը, վրեժխնդրությամբ վառված՝ հեռանում է առեղծվածային Ուզունը՝ իր հեծյալների հետ:

Գլխովս եմ երդվում, որ այս ամենը վատ կվերջանա: Ու տեղն է. մի՛ վառիր աուլները:

Ինձ համար էլ վատ կվերջանա: Բայց արդեն հաշտվել եմ այդ մտքի հետ: Փորձում եմ ինձ ներշնչել, որ երազ եմ տեսնում: Երկար ու գարշելի:

Միշտ ասել եմ, որ բուժակ Գոլենդրյուկը խելացի մարդ է: Այս գիշեր նա անհետ կորավ: Բայց չնայած ոչինչ չէր ասել, կարծում եմ՝ իր նվիրական նպատակի ճանապարհին է, այն է՝ երկաթուղու ճանապարհին, որի ծայրին փոքրիկ քաղաք է: Այդ քաղաքում՝ ընտանիքը: Գեկավարությունն ինձ հրամայեց «հետաքննություն անել»: Հաճույքով: Նստել եմ դեղորայքի արկղին ու անում եմ: Հետաքննության արդյունքը, բուժակ Գոլենդրյուկը անհետ կորել է: Լույս այսինչ գիշերը: Վերջակետ:

X. Չեչեններին էլ հասա

Սեպտեմբերի շոգ օր:

...Սկանդա՛լ: Ես կորցրի ջոկատս: Ինչպե՞ս կարող էր պատահել: Հիմար հարց է. այստեղ ամեն ինչ կարող է պատահել: Ինչ ասեա: Կարճ ասած՝ ջոկատը չկա:

Գլխավերև շիկացած արևն է, շուրջը՝ խարկված խոտ: Մաշված անվահեռքի կողքին՝ երկանիվ սայլակ, սայլակում՝ ես, սանիտար Շուգանն ու հեռադիտակը: Ու գլխավորը՝ ոչ մի շունչ: Ոչ մի շունչ՝ սարահարթում: Ինչքան էլ պտտեցիմք Յեյսի ապակիները՝ ոչինչ: Գետնի տակ են անցել բոլորը: Ե՛վ տասնհազարանոց ջոկատը՝ թնդանոթներով, և՛ չեչենները: Եթե հինգ վերստի վրա ծխացող Չեչենը չլիներ, կմտածեի, որ այստեղ ընդհանրապես երբեք մարդ չի եղել:

Շուգանը հասակով մեկ կանգնեց սայլակի մեջ, նայեց ձախ, վերադարձավ 1800, նայեց աջ, և հետ, և առաջ, և վեր ու իջավ՝ ասելով.

- Վե՛րջն է:

Ավելի լավ չես ասի: Ինչ կլինի, եթե հանդիպենք չեչեններին, որոնց հինգ աուլը վանել ենք, դժվար չի գուշակել: Դրա համար մարգարե լինելու կարիք չկա...

Ինչ կա որ, նոթատետրս կլրացնեմ մինչև վերջ: Հետաքրքիր է:

Գնացիմք՝ բախտին ապավինելով:

...Մի ագռավ վեր թռավ: Մյուսը՝ ներքև: Ահա և երրորդը: Ի՞նչ են պտտվում: Մոտենում ենք: Լքված, խոտածածկ ճանապարհի եզրին չեչեն է պառկած: Չեչենը խաչակերպ տարածել է: Գլուխը՝ հետ գցած: Սև չերքեզկայի ցնցոտիներ: Ոտքերը բոբիկ են: Դաշույն չկա: Փամփշտակալները դատարկ են: Կազակները պաշար տեսնող ժողովուրդ են, Գոգոլի Օսիայի պես.

- Պարանն էլ պետք կգա:

Ձախ այտոսկրի տակ՝ սև անցք, անցքից կրծքին, շքանշանի ժապավենի պես, ձգվում է արևից խամրած արյան հետքը: Հավաքվել են գմբուխտե ճանճերը՝ անցքը փակելով: Լարից ընկած ագռավները ցածր պտտվում ու կռռում են...

Գնացիմք առաջ:

...Յեյսը ցնորվել է: Բլուր, իսկ բլրի վրա, ամենագագաթին՝ վիեննական աթոռ: Շուրջը ամայություն է: Ո՞վ է բլրի գագաթը հանել աթոռը: Ինչի՞՞ համար...

... Զգույշ շրջանցեցիմք բլուրը: Ոչ ոք: Հեռացանք, իսկ աթոռը դեռ այնտեղ է:

Շոգ է: Լավ է, որ լիքը տափաշիշ վերցրի:

Իրիկնադեմ

Ահա՛: Վրա տվին: Ահա լեռները՝ երկու քայլի վրա: Ահա կիրճը: Իսկ կիրճից սլանում են: Բա ձիե՛րը, ձիե՛րը: Թրերն՝ արծաթապատ... Հետաքրքիր է՝ ում բաժին կընկնի իմ նոթատետրը: Այդպես էլ ոչ ոք չի կարդա: Շուգանի դեմքը կանաչել է: Երևի իմն էլ: Գրպանումս ակամա շարժեցի բրաունինգը: Հիմարությո՛ւն: Ինչո՞վ է օգնելու: Շուգանը ցնցվեց: Ուզում էր մտրակել ձիերին ու քարացավ:

Հիմարությո՛ւն: Նրանց ձիերը տեսնելի՛ք են: Երկու գումակային ձիով ո՞ւր ես փախչելու: Մի քայլ էլ չես հասցնի: Ուզածդ կրարձրացնի հրացանը, նշան կբռնի, ու պարն ավարտվեց:

- Ա՛խ-խ-խ,- գուտ այսքան կարողացավ Շուգանը:

Նկատեցին: Փոշի բարձրացավ: Մեր կողմն են սլանում: Հասան: Շողում են ճերմակ ատամները, շողում է արծաթը: Նայեցի արևին: Ցտեսություն, արև'...

Գեղարմ Աշուն 2018

...Ու՛ չտեսնված հրա՛շք... Ձիերը պարում են մեր շուրջը: Մեզ չեն բռնում... դժվում են.

- Տա-լա-գա-գա:

Մատանան գիտի՝ ինչ են ուզում: Գրպանիս մեջ սեղմեցի բրաունինգի կոթը, ապա-հովիչն իջեցրի: Բռնեն՝ կխոթեմ բերանս: Այդպես ավելի լավ է: Այդպես են սովորեցրել:

Իսկ դրանք դժվում են, խփում կրծքներին, բացել են ասամները, հեռուն են ցույց տալիս:

- Ա-լյա-մա-մյա... Բոլգատո՛ւ-է-է՛:

- Շալի-առու: Գա-գո-գըռ-գըռ:

Շուգանն աշխարհ տեսած մարդ է: Փորձառու: Հանկարծ կանաչած այտերը վար-դագույն ներկվեցին, թափահարեց թևերը, ինչ-որ ապշեցուցիչ լեզվով խոսեց.

- Ասում ես՝ Շալի՞: Այդպե՛ս, այդպե՛ս: Ձերը Շալի-առ՞ու գնաց: Այդպե՛ս, այդպես: Բոլգատո՛ւ ե: Բա մերո՞նք ուր են: Էնտե՞ղ:

Ժպիտներ ծաղկեցին դեմքերին, ասամները հրաշալի են: Ձեռքներն են թափ տա-լիս, գլուխներն են օրորում:

Շուգանը վերջնականապես բնական գույնի եկավ:

- Խաղաղներից են, խաղաղներից, պարո՛ն բժիշկ: Խաղաղացրել են սրանց: Ասում են՝ մերոնք Բոլգատոտեով Շալի-առու են գնացել: Ուղեկցել են ուզում: Ահա և մերոնք: Մեռնեն, թե մերոնք չեն:

Նայեցի՝ փռչի է, լեռան ստորոտին: Շարասյան պոչն է հեռանում: Շուգանը Ցեյսից լավ է տեսնում:

Չեչենները սիրով են նայում: Աչքները չեն կտրում Ցեյսից:

- Դուր է եկել հեռադիտակը,- խնդմնդաց Շուգանը:

- Ա՛խ, ես էլ եմ տեսնում, որ դուր է եկել: Ո՛նց է դուր եկել: Շուտ հասնեինք շարաս-յան հետևից:

Շուգանը ցնցվում է նստիքին, կարողում է մտքերս, սփոփում է:

- Սի անհանգստացեք: Էստեղ ձեռ չեն տա: Մերոնք՝ հրեն: Իրանք՝ հրես: Բայց որ մի երկու վերստ հեռու լինեինք...,- նա միայն ձեռքը թափ տվեց:

Իսկ շուրջը.

- Գըռ... գըռ:

Գռնե մի բառ հասկանայի: Իսկ Շուգանը հասկանում և ինքն էլ է խոսում: Ե՛վ ձեռ-քերով, և՛ լեզվով: Սլանում են մեր կողքով, թրերը գնագանում: Կյանքում այսպիսի պա-հակախումբ չեն ունեցել...

XI. Խարույկի մոտ

Աուլը վառվում է: Ուզումին քշում են: Գիշերը սառն է: Մեղմվում ենք խարույկին: Կրակը խաղում է թրերի երախակալների վրա: Նրանք ծալապատիկ նստել ու խորհր-դավոր նայում են թևքիս կարմիր խաչին: Սրանք խաղաղված հնազանդներն են: Մեր դաշնակիցները: Շուգանը մատներով ու լեզվով պատմում է, որ ես ամենագլխավոր ու կարևոր բժիշկն եմ: Նրանք գլխով են անում, դեմքերին՝ հարգանք՝, աչքերում՝ փայլ: Բայց եթե մի երկու վերստ հեռո՛ւ լինեինք...

XII

XIII

Գեկտեմբեր

Էշելունը պատրաստ է: Բոլորը հարբած են: Հրամանատարը, կազակները, վագոնավարների բրիգադը և, որ ամենավատն է, մեքենավարը: 180 սառնամանիք: Տաքացվող վագոններում՝ սառույց: Ոչ մի վառարան: Մեկնեցինք խոր գիշերով: Պինդ փակեցինք վագոնների դռները: Ինչով պատահի փաթաթվեցինք: Անձամբ սայիրտ խմացրի բոլոր սանիտարներին: Հո մարդիկ չե՞ն կոտորվելու: Վագոնը ցնցվեց, զնգզնգաց, ներքևից թխկթխկոց լավեց:

Չեմ հիշում՝ ինչպես քնեցի ու ինչպես վեր թռա: Փոխարենը հստակ հիշում եմ, թե ձնածածկ լանջով գլորվելիս ինչպես էի տեսնում, որ վագոնները ճռնչոցով ճզմվում են լուցկու տուփերի պես: Իրար վրա էին բարձրանում: Պղտոր լուսաբացի մեջ վագոններից դուրս էին թափվում մարդիկ: Տնքոց ու ոռնոց: Մեքենավարը, լուսակրի նշանին չնայելով, էշելունը քշել էր հանդիպակաց գնացքի վրա...

Շուգակը մեղք է: Ոտքն է կոտրել: Մինչև առավոտ կայարանի սենյակում վիրակապում էի վիրավորներին ու զննում մահացածներին...

Երբ վերջինին վիրակապեցի, դուրս եկա բեկորներով ծածկված երկաթուղու պաստառ: Նայեցի գունատ երկնքին: Նայեցի շուրջս...

Բուժակ Գոլենդրյուկի ստվերը հառնեց իմ առաջ: Բայց ո՞ւր, գրողը տանի: Ես ինտելիգենտ եմ:

XIV. Մեծ մթազնում

Փետրվար

Քառս: Կայարանը վառվում էր: Հետո սլանում էի գնացքով: Վերջին վագոնը դետուդեն էր ընկնում... Խելագարություն է:

Եվ այստեղ այլքը ծածկեց...

.....

Այսօր վերջապես հասկացա: Օ՛, անմահ Գոլենդրյուկ: Վերջ հիմարություններին, խելագարությանը: Մի տարվա մեջ այնքան բան տեսա, որ Մայն Ռիդին կհերիքեր 10 հատորի համար: Բայց ես ոչ Մայն Ռիդ եմ, ոչ էլ Բուսենար: Մինչև կոկորդս կուշտ եմ ու լվերից լրիվ կծոտված: Ինտելիգենտ լինելը բոլորովին չի նշանակում ապուշ լինել... Բավական է:

Ծովն ավելի ու ավելի մոտ է: Ծո՛վը: Ծո՛վը:

.....

Անեծք բոլոր պատերազմներին հավիտյանս հավիտենից:

*«XX դարի ռուսական պատմվածք» ժողովածուից
/Շուտով լույս կտեսնի «Գեղարմ» հանդեսի մատենաշարով/*

Ռուսերենից թարգմանությունը՝
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Հրանտ ԱԼԵԶՍԱՆՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ.

մրցակցություն գրական երկի շուրջ



Հրատարակչի ու թարգմանչի միջեւ համագործակցությունն ուղղակի-անմիջական չէ մի շատ էական պատճառով. նրանց միջեւ անխոս ու անտեսանելի կանգնած է գրական ստեղծագործությունն իր հեղինակով, եւ հենց ստեղծագործություն-հեղինակն է որոշակիորեն թելադրում, թե ինչ պայմաններով պետք է համագործակցեն հրատարակիչն ու թարգմանիչը, եւ նրանցից յուրաքանչյուրն ինչ դիրք պետք է զբաղեցնի մինչեւ թարգմանական երկի լույսընծայումը: Երկու կողմն էլ, թաքուն թե ակներեւ, մրցակցում, ավելին՝ հակամարտում են միմյանց հետ, եւ որքան նրանք ազնիվ ու վճռական են իրենց մղումներում, այնքան վերջնարդյունքը շահեկան է ստացվում գրական գործի ու հեղինակի համար: Պահանջկոտ հրատարակիչը կարող է լուրջ հաջողության հասնել պահանջկոտ թարգմանչի հետ, երբ առկա են համատեղ աշխատանքի համար անհրաժեշտ պայմանները՝ հրատարակչական հնարավորություններ եւ թարգմանական-ստեղծագործական լավ ներուժ:

Իդեալական է այն իրավիճակը, երբ թարգմանիչն ու հրատարակիչն ունեն ազդեցության նույն լծակները. այս պարագայում նրանք, տվյալ ստեղծագործության թարգմանության ու հրատարակման առումով, պարզապես անփոխարինելի են՝ եզակի թարգմանիչը գործում է եզակի հրատարակչի հետ: Բայց ներկայիս ժամանակաշրջանը թերեւս հատկանշվում է նաեւ նրանով, որ ավելի ու ավելի է բացառում իդեալական, կատարյալ մոտեցումներն ու հանգամանքները եւ գործիչներին լուծումների է դրդում հիմնականում առարկայական-շոշափելի-մատչելի հենքի վրա: Հրատարակիչների մեծ մասն այսօր անմիջականորեն հանդես

է գալիս գործարարի գաղափարախոսությամբ ու տրամաբանությամբ, ինչը շփոթության է մատուցում նախեսառաջ այն թարգմանիչներին ու ընթերցողներին, ովքեր գեղարվեստական լուրջ գործերի ջատագովներ են, եւ մարդկային-հոգեւոր աշխարհի գորացումն ու «բարեկարգումը», իրոք, անհնար են համարում առանց բարձրակարգ գրականության: Հրատարակչի ու թարգմանչի միջեւ իսկական հակամարտությունը հաճախ ծագում է հենց այդ հողի վրա. բարձրարժեք գրականությանը հետամուտ թարգմանիչը հիմնավոր ձեւով ձգտում է լույս աշխարհի հանել հիանալի երկեր, իսկ հմուտ եւ իրատես հրատարակիչը ջանում է հրատարակել այնպիսի գրքեր, որոնք կվաճառվեն մեծաթիվ տպաքանակներով եւ մեծ շահույթ կբերեն հրատարակչությանը: Արվեստի, այդ թվում գեղարվեստական գրականության պարադոքսալ օրենքներից մեկն էլ այն է, որ բարձրակարգ՝ ավանդական կամ նոր դասականությանը միտված գործերն առանձնապես լայն մասսայականություն չեն վայելում, դրանք՝ իրենց գեղարվեստական բարդ ու հարուստ հյուսվածքով, մատչելի են սակավաթիվ զանգվածի, հենց նրանց, որ օժտված են մտավոր ու հոգեւոր մեծ լիցքերով եւ ունակ են արժանիորեն գնահատելու ու պաշտպանելու բարձր գեղարվեստը: Թարգմանական-հրատարակչական նման իրավիճակում իսկական փրկարարի դեր են խաղում բոլոր այն հիմնադրամները, տարբեր կազմակերպություններն ու անհատները, որոնք անհատույց միջոցներ են տրամադրում հրատարակչություններին ու թարգմանիչներին՝ արժեքավոր գեղարվեստական գրականություն թարգմանելու եւ հրատարակելու համար: Եթե թեկուզեւ հպանցիկ ուսումնասիրելու լինեինք

վերջին 1-2 տասնամյակի միջազգային թարգմանական գրականության ցանկերը, կարձանագրենք, որ բարձրարժեք ու նորաշունչ գործերի մեծ մասը լույս է տեսել հենց դրամաշնորհային աջակցությամբ: Այո, ակնհայտ անարդարություն է տիրում արվեստի աշխարհում. ուժեղ, արտակարգ, հիասքանչ ստեղծագործությունները կարիք ունեն լրացուցիչ պաշտպանության, իսկ միջակ կամ թույլ, այսպես կոչված մասսայական գրականությունն առանց հավելյալ ջանքերի էլ ի գորու է իր տեղն ու թեթեւ փառքը գտնել գրական աշխարհում: Արվեստում ուժեղին պետք է պաշտպանել ինտելեկտուալների սակավ զանգվածով, մինչդեռ գորշն ու թույլ-ցանցառը պաշտպանված են մտավոր խեղճության դրոշակակիր մասսաներով:

Հրատարակիչների ու թարգմանիչների մեծամասնությունը, հասկանալիորեն, հակված է շահավետ գործակցության, եւ նրանց միջեւ կնքվող պայմանագրերը ժամանակավորապես կասեցնում են առկա մրցակցությունն ու հակասությունները եւ հարկադրում մտածել առավել տեսանելի ու շոշափելի արդյունքների մասին: Իմ խորին համոզմամբ՝ իրական արդյունքն այն չէ, թե տվյալ երկի ինչ տպաքանակներ ու վաճառքներ եղան եւ ինչքան հոնորար վաստակեց թարգմանիչը: Դրանք ընդամենը նյութական-վիճակագրական, այսինքն՝ երկրորդական հարցեր են: Գլխավոր խնդիր պետք է դիտարկվի այն, թե ինչ ստեղծագործություն է ընտրվել թարգմանության համար, ինչ արվեստով է իրականացվել փոխադրությունն այլ լեզվի, հրատարակչական ինչ որակով է այն լույս տեսել եւ ինչ շիտակ գնահատանքի է արժանացել արհեստավարժ գրադատների ու խորագիտակ ընթերցողների կողմից:

Հենց այս վերջիններիս վերաբերմունքն է չափազանց կարեւոր, նրանք են իրականում վճռում, թե ինչ արժե հրատարակչի ու թարգմանչի համագործակցությունը, եւ արդյո՞ք նրանց միջեւ առկա հակասությունները պատճառաբանված են թարգմանվող գործի նորովի արժեւորման հրամայականով:

Հրատարակիչը նյութական կողմի կրողն ու պատասխանատուն է, թարգմանիչը՝ հոգեւոր-ստեղծագործական: Ավելի քան նախընտրելի է, երբ հրատարակիչը միաժամանակ ստեղծագործական ձիրքի ու փորձի տեր է, ավելին՝ թարգմանիչ է նույնպես եւ լավագույնս կարող է համագործակցել թարգմանիչների հետ՝ վարելով թարգմանական-հրատարակչական արժեքավոր ու հետաքրքիր քաղաքականություն: Իմ՝ հրատարակչի, թարգմանչի ու գրողի մասնավոր փորձառությունը ցույց է տալիս, որ բաղձալի թարգմանական նախագծերի իրագործման հնարավորություններն ի հայտ են գալիս հենց այն ժամանակ, երբ ընդհանուր լեզվով ես խոսում թարգմանչի հետ եւ առաջնորդվում ես գերազանցապես ստեղծագործական նպատակետերով: Հիշատակեմ մի տեղին օրինակ. երբ մեր հրատարակչական կենտրոնը ստացավ մի համեստ դրամաշնորհ՝ հայերեն լույսընծայելու Ա.Բելիի «Պետերբուրգ» վեպը, թարգմանիչ Վարդան Ֆերեշեթյանի հետ համաձայնվեցինք, որ երկուսիս համար առաջնահերթ է լինելու այդ հրաշալի՝ լեզվական բացառիկ արվեստով գր-

ված երկի համարժեք թարգմանությունը. մոռանա՞նք, թե որքան քիչ հոնորար կա նախատեսված, հիշենք, որ այդ վեպը պետք է հրատարակվի ընտիր թարգմանությամբ եւ պոլիգրաֆիական պատշաճ որակով: Այդպես էլ ստացվեց. հայերեն «Պետերբուրգը» ոչ պակաս զիլ լեզու ունի, այնտեղ շատ են թարգմանական վարպետության փայլատակումները:

Տաղանդավոր թարգմանիչներին տաղանդավոր հրատարակիչներ են պետք: Այս պարագայում է հրատարակչի ու թարգմանչի միջեւ հակամարտությունը վերածվում ստեղծագործական մրցակցության, ապա եւ՝ բեղուն համագործակցության: Քանի որ նրանք անվարան գիտեն, որ իրենք կոչված են ոչ թե սեփական հավակնությունները բավարարելու, այլ լեզվական մի ուրիշ միջավայրում վերծանելու այն բարձրարժեք ստեղծագործությունը, որ գրավել է իրենց ուշքն ու հոգին, եւ պատիվ ունեն այդ երկին շնորհելու գրական նոր ճամփորդություն, հարստացնելու հազարավոր, գուցե եւ միլիոնավոր ընթերցողների ներաշխարհը՝ նոր խոսքով ու նոր արվեստով: Հրատարակչի ու թարգմանչի սուրբ պարտքն է՝ միացյալ ջանքերով մեծարել գրական տաղանդավոր գործն ու նրա հեղինակին: Եվ երբ իրենց համագործակցության հիմքում նրանք տեսնում են այդ առաքելությունը, աշխարհը, իրոք, գեղեցկանում ու զորանում է թարգմանական, իմա՝ հոգեւոր-մշակութային նոր ստեղծվածքներով:


Հոդվածը՝ որպես զեկուցում, հեղինակը կարդացել է սեպտեմբերի 6-9-ը /2018թ./ Մոսկվայում կայացած թարգմանիչների միջազգային 5-րդ կոնգրեսում:

Երեկոյան ժամը չորսն էր, երբ դուրս եկա գործարանից և նայեցի աղի պայծառ, ճերմակ հարթություններին, որ սփռված էին շուրջը շուրջը, ուր աչքդ կտրեր: Լացս գալիս էր: Վերջին ժամանակներս ավելի ու ավելի հաճախ էի այդ ցանկությունն ունենում: Նոր էի հեռախոսազանգ ստացել Դինից: Ասաց, որ Տիրեթ է գնալու և մեր կողմերով է անցնելու: Ուզում էր ինձ տեսնել: Երբեք ոչ ոք հատուկ այցի չէր եկել այս կողմերն՝ ինձ տեսնելու: Բոլորն ինչ-որ գործով տեղ գնալիս էին միայն կարճ ժամանակով այցելում: Վաղուց սովորել էի դրան: Անգամ եթե պարզապես անցնում էին այս տարածքով, բավականին դժվար էր այստեղ: Մոտեցա լաբորատորիայի դռան առջևի աստիճաններին և նստեցի: Լսեցի, թե ինչպես է տանիքի բարձրախոսն ամենայն մանրամասնությամբ հաղորդում անվտանգության կանոնները: Սյա Լինի ձայնն այլևս այնքան հաճելի չէր, ինչպես մեր առաջին հանդիպման ժամանակ: Այն կոշտ էր ու կոպիտ, ինչպես՝ երբ կռվում էինք խոհանոցում:

Երբ Սյա Լինը հայտարարում էր այդ ամենը, չէի կարող ասել, թե ինչ տրամադրություն ունի: Չնայած միջադեպից արդեն մեկ ամիս էր անցել, բայց դեռ ի վիճակի չէի հաշտվել դրա հետ: Նախկին հարբեցողի նման՝ ընդհանրապես դադարեցրել էի խմելը: Դա չի նշանակում, թե նոր էջից էի սկսել և սեփական կամքով էի խմելը թողել. ավելի շուտ՝ չէի համարձակվում դիպչել շշին, քանի որ ամեն անգամ շիշը ձեռքս վերցնելիս հիշում էի Չժաոյի դեմքը: Այն երեկո մենք չափից դուրս շատ էինք խմել, և Չժաոն ընկել էր աղի լիճը: Երբ Չժաոյին գտան, նրա դեմքն ամբողջովին պատված էր աղի նստվածքից առաջացած ծաղկանախշերով, իսկ ակնախնձորները բարակ սպիտակ շերտով էին ծածկված, ասես աղն ինքը կյանք էր առել: Հենց միայն մի հա-

Վան ՎԵՅԼՅԱՆ
/Չինաստան/

ԱՐԻ ՉԱՅՆԸ



յացք գգելուց հետո ետ տվեցի նախորդ գիշերվա ամբողջ խմածս: Այն այրեց ներսս ամբողջությամբ: Փսխուքս դանդաղ ներծծվելով իջնում էր աղի գետնի խորքը՝ ստեղծելով գարշելի փոքրիկ մի ավազան, որ նման էր առասպելական արտառոց հրեշի սարսափելիորեն լայն բացված երախի: Չհամարձակվեցի մեկ անգամ էլ նայել՝ վախենալով, որ այդ գազանը կցատկի և կոլ կտա ինձ:

Հիմա Դինն ուզում էր այցի գալ ինձ: Մի տեսակ հուզախառն ոգևորությամբ նա ուզում էր տեսնել առասպելական աղի լիճը: Նայելով շուրջս սփռված կուրացուցիչ ճերմակությամբ՝ ոչ մի հրաշալի բան չէի տեսնում այդտեղ: Իհարկե, դեռ ուրախ էի, որ նորից կտեսնեմ Դինին այդքան տարիներ անց: Նա իմ դասընկերն էր ավագ դպրոցում: Մեզնից ոչ մեկը քննությունները կարգին չէր հանձնում: Դրա համար էլ ուսուցիչը դասարանում մեզ վերջին շարքում էր նստեցնում: Մենք թաքնվում էինք այդտեղ դասերի ժամանակ և միշտ մոռացված էինք: Քանի հիշեցի, ասեմ, որ իմ անկումն սկսվել է այդ ժամանակվանից: Դինն ավելի լավ բնավորություն ուներ, քան ես: Նա երբեք ցածր ինքնագնահատական չուներ և լուրջ չէր ընդունում, երբ իր հանդեպ սառն ու անտարբեր էին լինում: Դասարանում, եթե չէր առանձնանում բոլորից, ապա ինչ-որ բան էր նկարում: Հիշում եմ՝ մի անգամ կիսադեմից նկարեց մեր դասընկերուհիներից մեկին, և շատ նման ստացվեց: Ցավոք, մոռացել եմ այդ աղջկա անունը: Դինը պետք է որ թաքուն համակրանք ունենար նրա հանդեպ: Երբ նա նկարում էր, ես մի կողմ քաշված՝ թաքուն երգի բառեր էի հորինում: Քիչումիչ գիտեի երաժշտական նոտագրության համակարգը, և մտքիս մեջ մեղեդի էի դնում: Ապա համապատասխան արտահայտություններ էի փնտրում՝ հաճախ գրելով միայն մեկ կամ երկու տող մինչև դասի ավարտը: Ապա բոլորն աղմկում էին, դեսուդեն վազվզում, և ստիպված էի ավարտել իմ շաքարանքը: Դրա համար էլ ձգտում էի, որ դասարանը խաղաղ ու անաղմուկ լիներ:

Շատ տարիներ անց, աղի այս շերտերի լայնածավալ տարածության մեջ, հիմա արդեն իմ օրն ու գիշերն անցնում են խաղաղ ու հանդարտ: Բայցևայնպես, երգի ոչ մի տող չեմ գրել: Ճակատագրով էր այդպես վիճակված: Երբ բացահայտեցի, որ իմ ներքին էությունն մեջ դույզն-ինչ ներդաշնակություն չկա, սկսեցի չափից դուրս շատ խմել: Չժառն էր, որ ինձ տարավ այդ ճանապարհով: Ամենաուշ ժամին անգամ բավական է միայն թակեր պատուհանս, և ես շորերս հագնելով՝ դուրս էի վազում նրա ետևից: Խնում էինք գարու գինի՝ տասը յուանանոց շշերով, սովորաբար ոչինչ չուտելով: Յուրաքանչյուրս մեկ շիշ էինք վերցնում, զարկում իրար ու խմում միասին, և հենց որ շշերը դատարկվում էին, սովորաբար հեռանում էինք: Ես միշտ զարմանում էի, երբ հաջորդ օրն ինձ գտնում էի տանը, անկողնում պառկած: Երբեք չէի կարողանում հիշել, թե ինչպես եմ տուն հասել, բայց կոշիկներս խնամքով դրված էին լինում մահճակալիս կողքին՝ ծայրերը դեպի դուրս, ինչպես նավահանգստում նավարկության կազմ ու պատրաստ՝ իրար ուղեկցող ռազմանավեր: Սկզբում կարծում էի, թե Սյա Լինն է դա անում: Բայց հետո պարզեցի, որ նույնիսկ երբ նա ծնողների տուն էր գնացած լինում, կոշիկներս էլի նույն կերպ խնամքով դրված էին լինում մահճակալիս մոտ: Սա միակ բանն էր, որ ինձ ստիպում էր հավատալ ուրիշներին, երբ ասում էին, թե երբեք չեմ կարող հարբել: Իրականում վաղուց էի հարբում, պարզապես ոչ ուրիշները, ոչ ինքս չէինք կարող ասել, թե ինչպես: Երբեմն այդպես մտածելը սարսափեցնում էր ինձ, ասես մեկ այլ մարդ կար իմ ներսում, իսկ իմ իսկական եսը պարզապես ապրում էր այդ էության փոխարեն: Երբ այս եսը կորցնում էր գիտակցությունը, այն մյուս էությունը գալիս և վերահսկում էր իմ կյանքը:

Գեղարմ Աշուն 2018

Չէի խմում այլևս, բայց դրանից կյանքս չէր բարելավվում: Իմ և Սյա Լինի միջև սառը պատերազմն ավելի ու ավելի անտանելի էր դառնում: Հաճախ անկողնում կիսապառկած՝ գայրացած նայում էի նք մեկմեկու, վիճում ամեն հասարակ քանի պատճառով, ապա երկուսս էլ ընկնում էի նք ապշահար մի վիճակի մեջ՝ ճաշասենյակում հեռուստացույցը դեռ միացրած թողած, որի ձայնը դատարկ էր ու աննպատակ, ինչպես մեր կյանքը: Հյուրասենյակում, սակայն, հազվադեպ էի նք կռվում, քանի որ երկուսս էլ հեռուստացույց էի նք դիտում: Առաջ, երբ խմում էի, երբեք չէի անհանգստանում քնելու համար: Մի անգամ քնեցի ամբողջ օրը՝ առավոտից երեկո: Բայց խմելը թողնելուց հետո անքնություն ձեռք բերեցի: Անկախ նրանից, թե օրվա ընթացքում որքան հոգնած ու տանջված կլինեի, գիշերը կարողանում էի քնել միայն անկողնում մի քանի ժամ այս ու այն կողմ պտտվելուց հետո: Մի երեկո այլևս չկարողացա դիմանալ: Լոգարանում բնական կարիքներս հոգալուց հետո մտա խոհանոց և դատարկեցի մի շիշ խոհանոցային գինի, ապա պառկեցի մահճակալին և քնեցի մշուշի մեջ: Առավոտյան արթնացա՝ մղձավանջից ցնցված ու ահաբեկված: Երագունս Չժառն կանգնած էր աղի հարթությունների վրա, օդում թրթռում էին ձյան փաթիլներ, աշխարհը ճերմակ ու լայնարձակ մի տարածություն էր՝ ներթափանցված սուր, ծակող սառնամանիքով: «Ողջությունդ, եղբայր», - կանչում էր նա: Աղի^օ, թե^օ ձյան ճերմակ շերտերը մաքրվեցին նրա դեմքից՝ ի ցույց հանելով նեխած մի սևություն: Ամբողջ մի շաբաթ ուտել չէի կարողանում, հոգուս խորքում տանջալից ցավ էր: Չցանկանալով այլևս մղձավանջներ տեսնել՝ գերադասեցի տառապել անքնությունից:

Մեկ էլ ասեմ. Դինը գալիս էր ինձ տեսնելու: Եվ ես ուրախ էի: Ու որքան շատ էի մտածում այդ մասին, այնքան ավելի երջանիկ էի ինձ զգում: Որոշեցի մի քանի ազատ օր վերցնել ու մնալ քաղաքում նրա հետ: Դինն ինձ խնդրեց Լիսապոլի տոմսեր գնել վաղը չէ մյուս օրվա համար: Գնացքի կայարանում տոմսարկղի մոտ կանգնած՝ մի պահ երկմտեցի, ապա տոմսեր գնեցի հինգ օր հետոյի համար: Չանգեցի նրան և ասացի.

- Վաղը չէ մյուս օրվա տոմսերը բոլորը վաճառված են: Պետք է այստեղ մի քանի օր ավել մնաս:

Դինն անմիջապես արձագանքեց.

- Հրաշալի՛ է, եղբայր: Մի քիչ ավելի երկար կբամբասենք:

Սկսեցի կարգի բերել ամեն բան, մաքրեցի հյուրասենյակը, պատրաստեցի անկողնային պարագաները: Դինն ասել էր, որ «երկուսով» են լինելու. նրա ասածից ենթադրեցի, որ մյուսը կին է, և էլ հարցուփորձ չարեցի:

Սյա Լինի համար անսովոր հետաքրքիր էր այս ամենը, և նա մի քանի անգամ ինձ հարցրեց.

- Դինը լավ ընկե՞ր է քեզ համար: Ինչու՞ առաջ նրա մասին չեմ լսել քեզից:

- Ուրիշների մասին էլ չես լսել, բացի մի քանի գործընկերներից,- պատասխանեցի: Սյա Լինը գլխով արեց, բայց դեմքը դեռ դժգոհություն էր արտահայտում:

- Ե՞րբ ես վերջապես կարողանալու ինձ ամեն ինչ ասել: Դու ինձ ամենևին չես վստահում :

- Սա ի՞նչ կապ ունի վստահության հետ: Ես ինքս հազվադեպ եմ նրա մասին մտածում , - ասացի:

Նա գլուխը տարուբերեց.

Գեղարմ Աշուն 2018

- Գու, դու իրոք որ անխիղճ ես:

Բառ իսկ չասացի: Գիտեմ, որ անխիղճ մարդ չեմ:

Սյա Լինը հանկարծ անսպասելի հարցրեց.

- Ի՞նչ է անում այդ Գինը :

- Լսել եմ, որ իրենց մոտ ածխահանքում է աշխատում:

Գինն ու ես որոշ ժամանակ կապ չէինք ունեցել, և թվում էր, թե այդ ընթացքում ամեն բան հենց այդպես էլ կար:

- Ածխահա՞տ:

- Հազիվ թե: Ամենայն հավանականությամբ ինչ-որ վարչական աշխատանք է:

Սա ինձնից հորինեցի: Նույնիսկ ես տեխնիկի գործ էի անում, իսկ ինչու՞ Գինը չէր կարող:

- Ոնց որ թե այս ընկերոջը հետ ինչ-որ բան այն չէ,- արհամարհալից ծաղրանքով գնեց Սյա Լինը, ապա դուրս եկավ՝ շուկայից նպարեղեն գնելու:

Սյա Լինը մեր գործարանի ամենահմայիչ կինն է: Երբ սա ասում եմ, ամենևին էլ չեմ հպարտանում, որովհետև գործարանում ընդամենը տասը կին կա: Չեմ կարող մոռանալ, թե ինչպիսին էր, երբ առաջին անգամ նրան տեսա: Ծանր մի ճամպրուկ էր քարշ տալիս, ավտոբուսից էր իջել, և դեմքը կարմրատակել էր. կարծես շրջակա ամառային մեջ հանկարծակի արև հայտնվեց: Ես անմիջապես սիրահարվեցի նրան: Սիրո այս կերպն օգտակարության տարր ունի, քանի որ ես ձգտում էի ամեն գնով նվաճել նրան, ապա ամուսնանալ և զավակներ ունենալ: Այս կողմերում լավ կնոջ հանդիպելու հնարավորությունը նույնքան անհավանական է, որքան կանաչ բուսականության հետք գտնելը: Գուցե ճակատագիր էր, որ նրան նշանակել էին աշխատանքային իմ թիմում՝ համագործակցության լայն հնարավորությամբ: Բայց հենց սկզբից գիտեի, որ նրան ձեռք բերելը շատ դժվար կլինի: Սյա Լինի խոշոր աչքերը միշտ տխուր էին: Նույնիսկ երբ Սուրնն ու Լին ծամածռություններ ու կատակներ էին անում, Սյա Լինը մռայլ էր և անխառվ: Նա նույնիսկ իմ կողմը չէր էլ նայում: Ես հասկանում էի նրա հոգեվիճակը: Սկզբում ես էլ նույն վիճակում էի: Աղի շերտերին ընկած լույսը սաստիկ կսկծացնում էր աչքերս: Հաճախ չէի կարողանում արցունքներս զսպել ու երբեմն չէի էլ հասկանում՝ ցավի՞ց է դա, թե՞ տխրությունից: Չժառն ինձ ասում էր. «Երբ գարուն գա, ավելի լավ կլինի, ավազահողմերը կծածկեն այս ճերմակությունը»: Երբ գարնան ավազահողմերն սկսվեցին, մտա ծածկի տակ և հեկեկոցով սիրտս դատարկեցի: Գրողը տանի: Այդպիսի գարուն երբեք չէի տեսել: Այդ դարչնագույն-դեղին ավազահողմը դժոխքի վերածեց այս տարածքը:

Գինը զանգեց և ասաց, որ արդեն ժամանել է, և ես աստիճաններով վար սլացա, որպեսզի գնամ նրան դիմավորելու: Թեև մի քանի տարի էր անցել մեր վերջին հանդիպումից, բայց միանգամից ճանաչեցի նրան: Նրա թմբիկ, կլոր դեմքին դարձյալ նույն անտարբեր ժպիտն էր: Կողքին կանգնած էր սև, կարճ շրջազգեստով, մի աղջիկ: Ուսերին թափված երկար մազեր ուներ և արևային ակնոց էր կրում: Չկարողացա դեմքը լավ տեսնել, չնայած լավ տպավորություն ստացա: Գինը և ես ջերմորեն գրկախառնվեցինք, հետո նա ներկայացրեց աղջկան՝ ասելով, որ իր ընկերուհին է՝ Յին Յզինը:

- Դեռ չե՞ք ամուսնացել,- թոցրի բերանիցս:

- Չէ, դեռ ոչ,- ժպտալով ասաց Գինը: Նրա ժպիտը շատ բան էր ենթադրում և ինձ ստիպեց սուր գիտակցել սեփական կյանքիս լիակատար տաղտուկը: Ես նրանց բերեցի այնտեղ, ուր մնում էինք, և մենք աստիճանների մոտ դեմառդեմ հանդիպեցինք Սյա

Գեղարմ Աշուն 2018

Լինին, որ նպարտեղեն գնած՝ շուկայից էր վերադառնում:

- Սա իմ կինն է՝ Սյա Լինը,- ասացի Դինին:

Դինն իսկույն Սյա Լինի ձեռքից վերցրեց մթերքը և բացականչեց.

- Հարսի՛կ, մենք այնքա՛ն նեղություն ենք պատճառում ձեզ մեր այս այցելությամբ: Սյա Լինը պատասխանեց պատշաճ կերպով.

- Ոչ մի նեղություն, մենք միայն անհանգստանում էինք, թե չեք գա:

Ներս մտնելով՝ մենք Դինին ու իր ընկերուհուն մեկառմեկ ցույց տվեցինք սենյակները, իսկ նրանք բարեսիրտ կատակներով իրենց գոհունակությունն արտահայտեցին: Հետո նստեցին բազմոցին: Յին Յզինն անմիջապես հանեց արևային ակնոցը: Նրա գեղեցկությունն ասես սուր դաշույն լիներ, որը նույն պահին պատյանից դուրս գալով խոցեց ինձ: Հուզախոռով՝ նրանց համար թեյ լցրի, ասպա նստեցի Դինի կողքին: Նայեցի շուրջս՝ մեր բնակարանին և մտածեցի, որ այդքան ջանք թափելուց հետո, որպեսզի պատշաճ ու ներկայանալի լինի, հիմա այն հանկարծ տաղտկալի, միապաղաղ տեսք ուներ:

- Երկար ժամանակ կապեր չենք ունեցել: Գու ... ամխահանքում չե՞ս աշխատում,- չկարողացա հարցս զսպել:

- Չէ, չդիմացա, դրա համար էլ թողեցի,- անփութորեն ասաց Դինը:

- Իսկ հիմա ի՞նչ ես անում,- հետաքրքրվեցի:

- Նկարում եմ,- ասաց՝ ժպիտով ինձ նայելով: Կհիշես՝ միշտ սիրում էի նկարել:

- Իհարկե, հիշում եմ ,- ասացի՝ փութեռանդ գլխով անելով:

Դինն աչքերը կկոցեց և երազանքների գիրկն ընկավ.

- Երբ աշխատում էի ամխահանքում, խավարն ինձ խեղդո՞ւմ էր: Ամբողջ օրը մարդ ձյութի պես սև մթության մեջ էր, գետնի տակ: Իսկ երբ գիշերը վեր էիր ելնում, դարձյալ մութ էր: Երբեմն մտածում էի, թե աչքերս շուտով կկուրանան: Հետո մի օր սկսեցի նորից նկարել և տեսա գույների առատությունը, ճիշտ այնպես, ինչպես ծարավից մեռնող մարդն է մի մեծ բաժակ ջուր խմում: Օգտագործում էի ամենապայծառ գույները՝ մտադրված լինելով նկարել ամենագունագեղ նկարը: Սի քանի հարյուր մետր գետնի տակ՝ հենց որ ընդմիջում էր լինում, նկարում էի: Ուզում էի հոյակապ գործեր նկարել, եզակի ու անկրկնելի: Իմ գործընկեր բանվորներն ուղղակի հուզված էին, ավելի հուզված և ոգևորված, քան երբ ամեն օր աղջիկների մասին էին խոսում:

Դինը խոսում էր ու խոսում՝ ամբողջ էությամբ ոգևորված: Սենյակի մթնոլորտը կենդանացել էր, ինչպես՝ երբ հին բարեկամներն են կրկին հանդիպում իրար:

- Քանի որ այդպես ես ասում... մի՞թե իրոք ամխահատությամբ ես զբաղվել ,- ասացի: Չէի պատկերացնում, թե ինչ բացատրություն տամ նրա նկարչությանը:

- Իրոք ամխահատ էի: Հայրս՝ ամբողջ կյանքում ամխահատ է եղել: Նրա թոքերը երկար ժամանակ հիվանդ էին, բայց էլի ստիպեց ինձ դա անել: Նրա կարծիքով ուրիշ բան անել չէի կարող:

- Լավ է, որ կարող ես նկարել:

- Հա, լավ է, որ կարող եմ նկարել:

Խոսակցությունն այդ պահին ընդհատվեց կարճատև դադարով: Դինը վերհիշում էր անցյալը, և դա ինձ էլ ավելի էր ստիպում ներկա կյանքիս անհույս վիճակն զգալ: Սյա Լինն ավարտեց առաջին ուտեստի եփութափր, ասպա խնդրեց գնալ և սկսել հացկերույթը: Յին Յզինը վեր կացավ. «Թույլ տվեք օգնել»: Սյա Լինը ձեռքով նշան արեց նրան, որ պետք չէ, բայց չկարողացավ համոզել, և նրանք միասին անհետացան խո-

Գեղարմ Աշուն 2018

հանոցում: Նայեցի նրանց ետևից: Եվ վատ զգացի Սյա Լինի պատճառով: Չեմ կարող ասել, թե երբ սկսվեց այդ զգացողությունը, բայց առաջին անգամ հասկացա, որ Սյա Լինն այլևս հոգ չի տանում իր արտաքին տեսքի մասին: Ետևի կողմից նա այնքան գեր էր երևում, ասես քաղաքում աշխատանք փնտրելու եկած մի դայակ լիներ: Դա ինձ ցավ ու շփոթմունք պատճառեց: Չհամարձակվեցի նայել Դինի կողմը և քայլեցի ուղիղ դեպի հյուրասենյակի պահարանը: Մի շիշ խմիչք հանելով՝ ասացի Դինին.

- Կրկին հանդիպելու հազվագյուտ առիթ է: Խմե՛նք եղբայրների պես:

Հոնքերը կիտած նայեց, մի ստվեր սահեց նրա հայացքով, երբ ի վերջո գլխով արեց և արձագանքեց. «Լավ»:

Տարօրինակ է իսկապես, որ երկու երիտասարդ, որոնք ակնհայտորեն խմել չէին ուզում, պնդում էին, թե պիտի խմեն: Բայց իմ գլխում համառ մի ձայն պահանջում էր, որ պիտի խմեմ, չեմ կարող դա չանել: Գրեթե նույն պահին Սյա Լինն ու Յին Յզինը մտահոգ մի հայացք զցեցին մեր կողմը: Բայց Դինն ու ես վճռական ժպիտներով մեզ ստիպեցինք առաջին բաժակը զցել: Նրանք հայացքները շրջեցին առանց մի խոսքի:

Ճաշից հետո կազմակերպեցի նրանց ետճաշյա հանգիստը: Բազկաթոռին նստած հեռուստացույց էի նայում: Սյա Լինը խոհանոցում եփուփափով էր զբաղված: Չգիտեմ ինչու, բայց մտածեցի մեր երեխայի մասին, այն երեխայի, որ երբեք այս աշխարհ չեկավ: Այսպիսի մի կեսօր էր: Սյա Լինը խոհանոցում ամաններն էր լվանում և հանկարծ ասաց, որ որովայնի ներքևում ցավեր ունի: Առանց ժամանակ կորցնելու օգնեցի ցած իջնել, ապա մեքենա կանչեցի, որպեսզի նրան շտապ հիվանդանոց հասցնի: Բայց արդեն շատ ուշ էր: Վիժում. բառն ինձ վրա ցնցող ազդեցություն գործեց: Սա մահ էր, որը չէիր կարող տեսնել, հանկարծակի հարված: Սյա Լինը լալիս էր: Թեև լուռ էր լալիս, բայց այնքան խեղճացած տեսք ուներ: Վշտահար սիրտս կտոր-կտոր էր լինում: Մեղմած ատամների արանքից մրմնջում էր. «Գիտեմ, որ դա եղել է այս անիծյալ աղի տարածքի պատճառով»: «Հաստատ գիտե՞ս, որ այդպես է», - հարցրի: «Պետք չէ անգամ նայել: Մի քանի մղոն հեռավորության վրա կյանք կա՞ արդյոք, մեզմից բացի: Գրողը տանի»: «Գրողը տանի»: Սյա Լինն իսկապես ասել էր դա՝ «Գրողը տանի»: Ես սովոր չէի նրա հայիոյանքին, բայց մտածեցի, որ նրա ասածն իմաստ ունի:

Այդ ժամանակ հյուրասենյակի դուռը հանկարծ բացվեց: Դինը դուրս ելավ:

- Չեմ կարողանում քնել, - ասաց հորանջելով:

- Ի՞նչ է եղել, - հարցրի:

Նա մի հայք զցեց դեպի դուրս.

- Շատ պայծառ է: Ինչի՞ց է, որ այսքան պայծառ է:

- Ինչպե՞ս կարող էր պայծառ չլինել: Ծովի մակարդակից ավելի քան երեք հազար մետր բարձր է այստեղ, - պատասխանեցի:

Դինը վիհատված նստեց բազմոցին:

- Առաջ ատում էի խավարը, բայց հանքախորշից փախչելուց հետո խավարի հանդեպ մի տեսակ սիրով եմ լցված, ինչպես խլուրդը: Յերեկն իմ սենյակում քաշում եմ վարագույրները և այնտեղ եմ մնում՝ մթության մեջ նկարելու:

Ժպտալով պատասխանեցի.

- Բարի գալուստ իմ չափազանց պայծառ աշխարհը:

Դինն աչքերը փակեց և ծիծաղեց՝ ամբողջ մարմնով ցնցվելով, ասես կաթվածահար եղած: Վեր ելա և հյուրասենյակի վարագույրները քաշելով փակեցի: Սենյակը մթնեց, թեև պայծառ լույսը ներս էր թափանցում փոքրիկ ճեղքերից: Ինչպիսի՞ զգացողություն

Գեղարմ Աշուն 2018

կունենա սամբոջ տարին խավարում մնալով: Չէի կարող դա պատկերացնել:

- Ճի՞շտ է, որ ձեր աղի հանքը երկրում ամենամեծն է, ինչպես լսել եմ,- հարցրեց Դինը:

- Ոչ միայն երկրում, հնարավոր է, որ ամենամեծն է աշխարհում,- ասացի՝ ինքս ինձ ծաղրանմանակելով:

Հանկարծ Դինը ոգևորվեց.

- Տար ինձ այնտեղ տեսնելու:

- Նկատի ունես... հիմա՞:

Դինը գլխով արեց, բարձրացրեց ձեռքը և նայեց ժամացույցին:

- Դեռ ուշ չէ: Հանքը չի կարող հեռու լինել:

- Մեքենայով մեկ ժամից ավելի ճանապարհ է:

Ճիշտն ասած՝ չէի ուզում գնալ: Այդ առավոտ հենց հանքից էի վերադարձել: Բայց չկարողացա ասել, հատկապես նկատելով սպասումով լի նրա հայացքը:

- Ամեն օր ես գնում-գալիս:

- Չէ: Երբեմն շատ հոգնած եմ լինում և մնում եմ գործարանում: Այնտեղ հանրակացարան կա:

- Պետք է որ դժվար լինի:

- Նորմալ է: Ես տեխնիկ եմ:

Դինը ժպտալով նկատեց.

- Սի ժամանակ, հիշում եմ, քիմիայից շատ լավ էիր:

- Հա՞ որ...

Իսկապես չէի հիշում: Միայն հիշեցի, որ ոչ մի առարկայից կարգին գնահատականներ չէի ստանում: Ի վերջո, սակայն, ընդունելության քննություններին բախտս բերեց, և ընդունվեցի մասնագիտական դպրոց: Բայց Դինը դպրոցը թողեց ընդունելության քննությունների նախօրեին: Ինձ ասաց, որ արդեն լրիվ կորցրել էր վստահությունը: Փաստորեն, պարզվում է, որ իր անխռով վարքագծի ետևում այլ մարդ էր նա, ներքնապես վաղուց արդեն հանձնվել էր: Բայց պե՞տք էր արդյոք անցյալի այս բաներն այսօր վերհիշել:

- Սի քիչ էլ չիմե՞նք,- անսպասելի ցանկություն հայտնեց Դինը:

Երեք անգամ խմել էինք արդեն: Նոր էինք դադար առել, և նոր էին երկու կանայք իրենց թեթև զգացել: Հիմա նրանք երկուսն էլ հանգստանում էին: Այնպես որ՝ խմելու համար իրոք հարմար պահ էր: Շիշը վերցրի, և նորից սկսեցինք: Երկար-բարակ խոսեցինք շատուշատ բաների մասին միջնակարգ դպրոցի մեր օրերից: Ճիշտն ասած՝ անցյալն ամենևին չեմ կարոտում և չեմ կարծում, թե հրաշալի ժամանակ էր դա, բայց որպես գրույցի թեմա՝ առիթ էր, որպեսզի անհոգ ու անփույթ կարողանայինք խոսել այն օրերի մասին, որ մեզ համար մնացել էին թանկ և անփոխարինելի: Իրականում ուզում էի Դինին հարցնել Յին Յզինի մասին: Այդքան գեղեցիկ մի աղջիկ: Դինն ինչպե՞ս էր կարողացել ճանկը զցել նրան: Բայց դա ասելու քաջություն չունեցա՝ չցանկանալով բացահայտել զուտ տղամարդուն բնորոշ մտքերս: Խմեցինք, ասպա էլի խմեցինք, մինչև որ հոգնածություն զգացի: Ի վերջո, խմած և հոգնած, Դինն ու ես թախտին ընկնելով՝ քուն մտանք: Անսպասելի չէր, որ երազում Չժառյին տեսա: «Ո՞րչ լինենք», - ասաց: Դեմքն ամբողջովին աղի նստվածքով էր ծածկված: Նստել էր աղահանքի նավի տախտակամածին: Նրա ստվերը չէր արտացոլվում ջրի մակերեսին: «Չժառ, ընկերս է եկել ինձ տեսության», - ասացի: «Սի քիչ էլ խմիր ընկերոջդ հետ», - արձագանքեց նա: «Նա իրեն լավ է զգում», - պատասխանեցի: Չժառն ժպտաց՝ լայն բացելով բե-

Գեղարմ Աշուն 2018

բանի խոռոչը. «Դու էլ ես լավ գգում»: Յնգվելով արթնացա և տեսա՝ Սյա Լինն ու Յին Յզինը պատշգամբում նստած շշուկով գրուցում էին, ասես վաղեմի ընկերուհիներ լինեին, որ տարիներ շարունակ իրար չէին տեսել: Իսկ Դինը կողքիս պառկած՝ բարձր խոնավացնում էր: Աչքերս նորից փակեցի և ձևացրի, թե խորը քնած եմ: Ձղջում էի, որ տոմսերը մի քանի օր հետոյի համար եմ գնել, և պատկերացում իսկ չունեի, թե ինչ եմ անելու մյուս օրերին:

Երեկոյան պարզապես կերանք ճաշի ժամանակ թողածը: Հետո Սյա Լինն առաջարկեց միասին դուրս գալ զբոսնելու: Երբ փողոց ելանք, արևի ուժն արդեն թուլացել էր, լույսն էլ նվազել, թեև ամռան կեսն էր: Պաղ մի գեփյուռ փչեց անապատի հեռու խորքերից, և մենք թեթևակի սառնություն զգացինք:

- Բավականին զով է,-բացականչեց Դինը,- իսկապես հարմարավետ վայր է :
- Հոյակապ է, այո,- հավելեց Յին Յզինը:

Հայացքս մի պահ կանգ առավ նրա գեղեցիկ դեմքին, ապա սահեց և ձուլվեց երեկոյան հեռավոր ու խաղաղ լույսին: Ճանապարհի վերջում տեսա օրորվելով քայլող մի քանի հարբած տղամարդու: Հոգուս խորքում այս լքված, ամայի քաղաքն ինձ խոր ցավ էր պատճառում: Իսկ Յին Յզինն իր շլացուցիչ գեղեցկությունն էր այստեղ բերել. ինչպես կայծակի լուսապայծառ փայլատակում՝ նա էլ ավելի ակներև էր դարձնում իմ ցավը:

- Դեռ գրո՞ւմ ես երգեր,- հանկարծ հարցրեց Դինը:

Յին Յզինն ու Սյա Լինը շրջվեցին և նայեցին ինձ: Ես Սյա Լինին երբեք չէի ասել իմ երգերի մասին: Նա անկեղծորեն զարմացած էր: Ժպտացի և թփթփացրի Դինի ուսերին.

- Ի՞նչ անհեթեթ բաների մասին ես խոսում:

Դինը պատասխանեց.

- Չնայած ինձ երբեք ոչինչ չէիր ասում, որ բանաստեղծություններ ես գրում ու երգում, բայց ես վաղուց եմ այդ մասին գլխի ընկել, նույնիսկ լսել եմ, թե ինչպես էիր դնդնում բառերն արտաբերելիս:

Ամաչելով՝ ձեռքերս թափահարեցի և ասացի.

- Պարզապես պարապ զբաղմունք էր:

-Բոլորս ենք պարապ բաներով զբաղվում,- վրա բերեց Դինը:- Իմ նկարչությունն էլ պարապ զբաղմունք է: Մեր կյանք էլ պարապ զբաղմունք է:

Էլ ոչինչ չասացի, բայց ինքս ինձ մտածեցի. «Սակայն որոշ մարդիկ չեն կարող շարունակել պարապ զբաղմունքը»:

Հաջորդ օրը միտք էի անում՝ պե՞տք է արդյոք նրանց տանեն աղի լիճը տեսնելու: Իսկ հետո ի՞նչ էինք անելու: Մինչ տատանվում էի, մեկ օր էլ անցավ: Այդ օրն արևը պայծառ շողում էր: Շուրջն ամեն առարկա ճառագայթում էր՝ ասես լուսապսակով եզերված: Փակվել էինք սենյակում և ծուլորեն սպանում էինք ժամանակը՝ ոչինչ չանելով, մինչև որ երեկոն իջավ, և վերջապես դուրս ելանք՝ մոտակա սննդի կետում խորոված ուտելու: Ասում էին՝ այստեղ ոչխարի միսը լավն է, և ես ինձ փոքր-ինչ գոհ էի զգում: Երբ խորոված էինք ուտում, Յին Յզինն ուղիղ իմ դիմաց էր նստած, և մի քանի գողունի հայացք նետեցի նրա կողմը՝ պարզելով, որ հազվադեպ է ժպտում: Նրա աչքերը խորհրդավոր մի մելամաղձություն էին քողարկում: Եվ Դինն ու նա իմ պատկերացմամբ ոչ մի կերպ չէին կարող մոտ լինել: Բայց հետո մտածեցի, որ Սյա Լինն էլ

Գեղարմ Աշուն 2018

մեկամադճոտ տեսք ունի, և նա ու ես էլ մոտ մարդկանց տպավորություն չենք թողնում:

Քյաբաբի մեր բաժինն ուտելուց հետո, երբ արդեն կուշտ էինք, մեր խոսակցությունը կրկին աշխույժ բնույթ ստացավ: Սյա Լինը ժպտաց և հարցրեց.

- Դին, ինչպե՞ս նվաճեցիր Յին Յզինի սիրտը: Պատմիր հապա այդ մասին:

Մտքովս իսկ չէր անցնի, որ Սյա Լինը կարող է հարցնել այն, ինչն այդքան անհուսորեն ուզում էի իմանալ:

Դինը ժպտաց և ծիծաղելով ասաց.

- Դա գաղտնիք է:

- Մեզ անորոշության մեջ մի՛ պահիր: Պատմիր,- ասացի:

Դինը նայեց Յին Յզինին, իսկ վերջինս ասաց.

- Իրականում գաղտնիք չկա: Ես նրա հաճախորդն եմ: Մենք ծանոթացանք, երբ նա իմ դիմանակարն էր նկարում:

- Հա, այդպես էլ եղել է,- համաձայնեց Դինը: Ածխահանքից փախչելուց հետո միայն նկարչությանը կարող էի ապրուստի միջոց հայթայթել: Մի օր էլ հանդիպեցի Յին Յզինին: Առաջարկեցի ձրի նկարել նրան, բայց պայմանով, որ թողնի մի քանի դիմանկար անել: Ի զարմանս ինձ նա համաձայնեց:

Յին Յզինը նայեց ինձ և ասաց.

- Հիմնականում պատճառն այն էր, որ շատ լրջորեն էր նկարում, և առաջին անգամն էր, որ ինչ-որ մեկն ինձ վրա այդքան ուշադրություն էր դարձնում:

Ես էլ նրան նայեցի: Մեր հայացքներն ընդամենը մեկ վայրկյան հանդիպեցին, նախքան գլուխս կկախեի և կձևացնեի, թե ինչ-որ բան եմ ուտում, ու կխուսափեի նրա գեղեցկությունից: Գուցե միայն գեղանկարիչների՞ն էր թույլատրված անմիջականորեն դիտարկել այդպիսի գեղեցկությունը՝ արվեստ ստեղծելու պատրվակով:

Դինը հարցրեց.

- Ես լա՞վ էի նկարում:

Յին Յզինը պատասխանեց.

-Լավ էիր նկարում, բայց դա ես չէի:

Դինը զարմանքից լայն բացեց բերանը.

- Դու չէի՞ր: Իսկ ո՞վ էր:

Յին Յզինը ժպտաց.

- Քո երազանքը:

Սյա Լինն ու ես սկսեցինք ծիծաղել: Ես նայեցի Յին Յզինին և ասացի.

- Այն, ինչ ստեղծում են նկարիչները, նրանց երազանքներն են, բայց դու տվել ես նրան այդ երազանքը:

- Ճիշտ այդպես, ճիշտ այդպես,- Դինը մի քանի անգամ գլխով արեց և մի մեծ կում զարեջուր խմեց:

Յին Յզինը թեքեց գլուխը, որպեսզի նայի Դինին.

- Կարո՞ղ ես ինձ ետ վերադարձնել քեզ տվածս երազանքը:

Մի պահ բոլորս շվարեցինք, ապա սկսեցինք ծիծաղել: Յին Յզինը պարզապես սրամտել էր: Նրա ժպիտը նման էր շողացող երկնաքարի: Այս աղջիկն իրոք անբացատրելի խորհրդավոր հատկանիշներով էր օժտված: Նա և՛ խորապես հմայում, և՛ միաժամանակ խիստ վախեցնում էր ինձ: Անկարող էի ազատվել նրա հանդեպ ունեցած հետաքրքրասիրությունից:

Դինը քրքջալով շարունակեց.

Գեղարմ Աշուն 2018

- Ո՛չ միայն դա, ուրախ կլինեի քեզ ամեն ինչ տալ:

Բողոք սկսեցինք նորից ծիծաղել: Հանկարծ Սյա Լինը հոգոց հանեց.

- Հաճելի է տեսնել, որ այդքան գոհ եք:

- Չես ուզում ասել, որ դուք գոհ չեք, չէ՞,- հարցրեց Գինը:

Ի պատասխան ոչինչ չունեի ասելու, բայց դե մի բան պետք է անեի, այնպես որ կարողացա միայն ծիծաղել:

- Եղբայր, կենացդ,- Գինը մի լիքը բաժակ գարեջուր էր վեր պարզել և մեկ շնչում դատարկեց բաժակը: Ապա բերանը սրբեց և շարունակեց.

- Իրականում չեմ կարողանում խմել, բայց այնքան շատ ժամանակ է անցել մեր վերջին հանդիպումից: Ես շատ ուրախ եմ: Արդեն պատմել եմ Յին Յզինին այս մասին: Մի անգամ կրպակ բացեցի, և տեղական ոստիկաններից մի քանիսն ինձ լավ ջարդ տվեցին: Միայն երեսունքանի կար ստանալուց հետո իմ խղճուկ կյանքը փրկվեց, հա՛, հա՛:

Գինի դեմքին ժպիտ իջավ: Աչքերը կուլ էին գնացել ակնախոռոչների սովերնետում, և ես չէի կարողանում հատակ տեսնել դրանք: Թեև ընդամենը մի քանի բառ էր ասել, հասկացա, թե ինչ նկատի ունի: Ես նույնպես մի լիքը բաժակ խմիչք ւրցեցի, և մեկ շնչով խմեցի նրա կենացը:

- Արի՛ վաղն աղի լիճ գնանք,- հանկարծ ինձ դիմելով բացականչեց Գինը:

Ախ այդ անպիտանը: Որպեսզի կանխի գրույցը շարունակելու ամեն մի անհարմարություն, հենց հիմա է դա ասում: Գլուխս շրջեցի և տեսա, որ Յին Յզինն ինձ է նայում՝ սպասումով լի հայացքով:

- Շատ լավ, վաղը քեզ այնտեղ կտանեն,- ասացի՝ բարձրացնելով բաժակս:

Եվ այսպես՝ աղի լիճն էր:

Մեկ ժամ ավտոբուսով գնալուց և գործարանի մռայլ, ձանձրալի շենքերի միջով քայլելուց հետո պտույտ ես գործում, և աչքերիդ առջև աղի լիճն է: Գինը, բերանը բացած, հագիվ արտաբերեց.

- Ա՛յ քեզ բան, շշմեցուցիչ է...:

Այնպիսի տեսք ունեի, ինչպիսին պատկերացրել էի: Վաղուց իմ մտապատկերում արդեն ուրվագծվել էր այս տեսարանը: Բանն այն է, սակայն, որ չէի կարծում, թե Սյա Լինը նույնպես կգա: Պարզապես չէի կարող դա պատկերացնել: Նախկինում, երբ ընկերներիցս գալիս էին, և ամեն անգամ, երբ ուզում էի նրան էլ հետներս վերցնել որպես ուղեկից, Սյա Լինը միշտ կտրուկ հրաժարվում էր: «Ուզում եմ հնարավորինս քիչ լինել այդ գարշելի վայրում»,- ասում էր: Այս անգամ պարզապես չհարցրի նրան, քանի որ եթե չգար, ապա ավելի հանգիստ կլինեի ինձ համար, երբ Յին Յզինի հետ առանձին մնայինք: Բայց երբ Յին Յզինը ցանկացավ, որ նա միանա մեզ, Սյա Լինն, ի զարմանս ինձ, պատրաստակամորեն համաձայնեց, առանց դույզն-ինչ վարանելու: Մի՞թե միևնույն սեռի ներկայացուցչի համար էլ դժվար է ետ մղել գեղեցիկ կնոջ հմայքները: Սյա Լինը կանգնած էր Յին Յզինի կողքին և բռնել էր նրա թևից, մինչ քամին խառնչտում էր նրանց մազերը: Հենց այդ պահին զգացի, որ նրանք մման են կենսաբանական քույրերի:

Շարժվեցինք դեպի լճի եզրը: Մեր ոտքերի տակ լավում էր աղի կոշտ ու չոր մանրահատիկների ճռճոցը, ասես ձյան վրայով քայլելիս լինեիք: Շուրջբոլորն ամալի էր, թռչուն անգամ չէր երևում: Թեև երկինքը կապույտ էր, աղի ջուրը, սակայն, մռայլ, սև-կանաչ գույն ունեի: Լճի կենտրոնական մասում կանաչը խառնվում էր դեղինի հետ,

Գեղարմ Աշուն 2018

ասես թաքսն տագնապներով խռովված դեմք լինել:

- Եկանք այստեղ, և կարծես հանկարծակի ձմեռ սկսվեց,- ասաց Յին Յզինը:

- Գիտե՞ս՝ ինչպես է կոչվում այս գագոցողությունը,- ձայնակցեցի նրան:

Յին Յզինը նայեց ինձ, մի պահ մտածեց, ապա ասաց.

- Ամայություն:

Նրա արձագանքն ասես ուղիղ նշանակետին դիպած գնդակ լինել, որ խոցեց մտքումս արդեն պատրաստ պատասխանը:

- Այո, հենց այդպես,- հոգոց հանեցի,- ամայություն:

Քամին փչեց ուղիղ Սյա Լինի դեմքին, որը դրանից տզեղ տեսք ստացավ:

- Ես ուղղակի խորշում եմ այստեղ գալ,- ասաց նա:

Այդ պահին Դինը, որ քայլում էր մեր առջևից, շրջվեց և ասաց.

- Ինչպե՞ս կարող ես նման բան ասել, իմ կարծիքով՝ սա գեղեցիկ վայր է:

Իհարկե, տարածքն իր յուրահատուկ գեղեցկությունն ունի: Շուրջբոլորն ասես ձյուն լինել նստած: Աղի մաքուր նստվածքները լճերին, ինչպես նաև լճի ջրում գոյացած աղե ծաղիկները, այս ամենը կարելի էր հազվագյուտ հրաշքներ համարել: Նկարիչը չէր կարող անտարբեր մնալ այսպիսի տեսարանի հանդեպ: Բայց Մարսն էլ իր յուրահատուկ գեղեցկությունն ունի, այդուհանդերձ, ոչ որ չի ցանկանում ապրել այնտեղ: Եվ սակայն ցավալին այն էր, որ Սյա Լինը և ես պատկանում էինք այն մարսեցիների խմբին, ովքեր ստիպված էին մնալ այստեղ: Դինի խոսքերից քաջալերված՝ կեսկատակ ասացի նրան.

- Դու, իհարկե, կնկարես այս բնապատկերը. դա հաստատ անակնկալ կլինի բոլորիս համար:

Դինը պազեց և ձեռքը մտցրեց աղի ջրի մեջ:

- Իհարկե, կնկարեմ,- ասաց: - Եվ դուք մեծ տպավորություն կստանաք:

- Եթե մարզիկ ես, ոտքերդ ջրի մեջ դիր, և լավ կզգաս,- առաջարկեցի:

Դինը խոսքերս ընդունեց ամենայն լրջությամբ և գուլպաները հանելով՝ մտավ աղի ջուրը: Յին Յզինը նրա ետևից ձայն տվեց.

- Ուզում ես աղաջրի լոզանք ընդունած արագավազ տոտիկներ՞ն ունենալ,- և բոլորս սրտանց ծիծաղեցինք:

Ոչ շատ հեռվում աշխատում էր աղ արդյունահանող կապույտ նավը: Երբ մեզ նկատեցին, նավը շարժվեց մեր կողմը: Պետք է որ Ման լինել տախտակամածին: Գիտեի, որ միայն նա է նավը վարում:

Ինչպես և սպասվում էր՝ դա Ման էր: Նա գլուխը դուրս հանեց նավապետի խցիկից ու ձեռքով արեց մեզ, և մենք ի պատասխան ձեռքով արեցինք: Դինը ոգևորված էր.

- Եկեք բոլորս նավ բարձրանանք, լա՞վ:

Նա արդեն գնում էր դեպի նավը, երբ ասաց այդ խոսքերը:

- Այ քեզ հիմար,- գոչեցի:

- Մա նման է Մեռյալ ծովին, չես կարող խեղդվել,- պատասխանեց Դինը: Նա ուղղակի գլխովին սուզվեց՝ ամբողջ մարմնով լիճը նետվելով և լողաց դեպի նավը:

Սյա Լինն ու ես Յին Յզինին տարանք դեպի մոտակա հասարակ նավամատույցը: Մինչ այնտեղ կհասնեինք, Ման արդեն հանել էր լրիվ թրջված Դինին և մեր կողմն էր շարժվում: Դինը կանգնած էր նավի վրա, ուրախ-ուրախ ձայն էր տալիս մեզ՝ ձեռքերը վեր պարզած: Նրա ոգևորությունը դեռ չէր անցել:

Ման այնքան ուրախ էր թվում:

Գեղարմ Աշուն 2018

- Այս ընկերոջ շատ զվարճալի է,- ասաց նա:
- Դա հասկանալի է ,- ասացի:- Կարո՞ղ ես գուշակել, թե ինչ է անում:
Ման գլուխը տարուբերեց: Դինը ժպտալով պատասխանեց.
- Երկրի մակերևույթից մի քանի հարյուր մետր ներքև, ձյունի պես սև, երբեք արևի երես չեմ տեսնում ամբողջ տարին:
- Ածխահա՛տ է: Չարմանալի չէ: Այստեղ չափազանց շատ արև կա: Կարծես իսկապես երկու տարբեր աշխարհներից ենք,- նկատեց Ման:
- Բոլորս ծիծաղեցինք: Ման նավը տարավ դեպի լճի միջնամաս: Այն միջնամաս է կոչվում, բայց իրականում մեծ, աղի ջրավազանի հենց կենտրոնն է: Որպեսզի աշխատանքն ավելի հեշտ կարգավորվեր, այս հսկայական աղի լիճը բրնձի դաշտի պես տեղամասերի էր բաժանված:
- Ես քեզ կտանեմ տեսնելու մայրամուտն աղի լճի վրա: Հաստատ ամբողջ կյանքում չես մոռանա դա,- ասաց Ման՝ հստակ մտադրությամբ:
- Իսկապե՞ս,- հարցրեց Դինը՝ աչքերը լայն բացած նայելով դեպի արևմուտք:
- Անհաշիվ անգամներ էի տեսել այդ տեսարանը: Մայրամուտը նման է պատռված լյարդի, վառ կարմիր արյունը հոսում է ճերմակ վիրակապի վրայով: Այնպես էի գգում, ասես անտեսանելի մի թնդանոթից կրակում են արևին, անտեսանելի մի գնդացիի գնդակոծում է կյանքս: Արևի նման՝ ես կարմիր արյան մի ավազան էի... Այս տիպի վերքը գնահատելը նույնպես գեղեցիկ բան էր, եթե նույնիսկ վերքը սեփական մարմինդ էր ստացել: Մայր մտնող արևն անսահման հրաշալի է: Մթնշաղին շատ մոտ է, և իրերը, որ անչափ գեղեցիկ են, բոլորն էլ անչափ մոտ են մահին: Նայում էի Յին Յզինին: Երեկոյան ամպերն իջել էին վրան՝ վերածելով նրան մի գեղեցկության, որ շքեղություն էր ճառագում: Նա նստած նայում էր հեռավոր բնապատկերին: Թվում էր՝ անհաղորդ է սեփական գեղեցկությանը: Դինն ասես խորատուզվել էր աղի լճի տեսարանում և մոռացել էր ընկերակցել Յին Յզինին:
- Դե՛, խմե՛նք միասին,- Ման նավախցից գարու գինու մի շիշ հանեց:
- Այս տարածքում բոլոր տղամարդիկ են խմում:
- Եվ չի կարելի մերժել խմելու առաջարկը:
- Երեք տղաներով նստեցինք տախտակամածին, իսկ Յին Յզինը կանգնած էր նավի ճաղաշարի մոտ: Միայն Սյա Լինը մնաց և գնում-գալիս էր՝ մեզ համար խմիչք լցնելով: Նա նույնիսկ նավախցիկ գնաց մի տոպրակ գետնանուշ բերելու, որպեսզի խմիչքի հետ հյուրասիրի: Ման հուզումնալից հառաչեց և ինձ ասաց.
- Բախտավոր եք, տղաներ:
- Գլխով արեցի և նայեցի Սյա Լինին՝ ասելով.
- Հե՛յ, դու միշտ Մային դուր ես եկել:
- Սյա Լինն աչքերը ոլորեց և արձագանքեց խիստ ցատումնալից.
- Այդպե՛ս ես կնոջդ ծաղրում:
- Մա ապացուցում է, որ ես լավ կին ունեմ,- պատասխանեցի:
- Հա, ճիշտ ես:
- Նա շրջվեց և վերադարձավ նավախցիկ ու էլ չերևաց: Հավանաբար գնաց հեռու-տացույց դիտելու՝ այլևս ի վիճակի չլինելով գնահատել մեր առջև բացված գեղեցիկ բնապատկերը: Մա արդեն մի տեսակ կտտանք էր նրա համար: Հիշեցի այն օրերը, երբ Ման ու ես երկուսս էլ միաժամանակ սիրահետում էինք Սյա Լինին: Ի վերջո իմ բախտը բերեց: Միակ բանը, որից իսկապես կախվածություն ունեի, իմ հիմնական հե-

Գեղարմ Աշուն 2018

տաքըրբությունն էր՝ բանաստեղծություն գրելը: Բայց դեռ գրածս երգերից ոչ մի տող չէի երգել, և կարողացա միայն մի բանաստեղծություն ձուլել Սյա Լինին: Կյանքից զուրկ այս վայրում բանաստեղծության ռոմանտիզմը շատ ավելի օգտակար էր, քան որևէ այլ բան: Հաջորդ օրն, ի պատասխան, ստացա Սյա Լինի նամակը: Նա գրում էր. «Քո պոեզիան է, որ օգնում է ինձ այստեղ նկատել գեղեցկությունը: Գուցե միայն դա է ինձ քաջություն տալիս մնալու»: Ես մտածեցի, որ նրա խոսքերը շատ ավելի հզոր էին, քան իմ բանաստեղծությունը: Այդ խոսքերը տևական ժամանակ խորապես հուզում էին ինձ, և սիրտս ավեափ կարեկցանքով լցնում այդ աղջկա հանդեպ, երբ տեսնում էի նրան: Մենք արդեն հեռուն էինք գնացել՝ փոխադարձ սիրով ու մտերմությամբ համակված, բայց ի վերջո ամայության այս հավիտենական տարածությունը պարտության մատնեց մեր սերը: Մենք երկուսս էլ դարձանք ամայության մաս, իսկ հետո՝ անգամ փոխադարձ թշնամիներ:

Թունդ ոգելից խմիչքից բավականին խմել էինք: Մթնշաղի պաղ գեփյուռը փչում էր ուղիղ դեմքներին: Մի քիչ գլխապտույտ էի գգում: Մայի թուխ, արևահարված դեմքի ուրվագիծն ասես իմ դեմքի անդրադարձը լինելու հայելու մեջ: Չկարողացա զսպել արցունքներս, որ սկսեցին հոսել դեմքիս վրայով: Դինը զարմացավ՝ տեսնելով դա, բայց դրանք սրբելու համար արդեն շատ ուշ էր:

- Ոչինչ, ոչինչ, պարզապես կոկորդումս ինչ-որ բան կա:

Նորից չխկացրի Դինի հետ, ապա Մային ասացի.

- Հոգատար եղիր այս եղբորս հանդեպ: Եթե դեռ բավականին չի խմել, նրանից է, որ այնքան էլ հոգատար չես եղել իր հանդեպ:

Ման լսեց ասածս, ապա սկսեց Դինին ավելի հաճախ ստիպել, որ շատ խմի: Մի քանի բաժակից հետո Դինի հայացքը մի տեսակ մթագնեց: Չուզելով ետ մնալ՝ Դինն ինձ դրողում էր ավելի շատ խմել: Եվս երեք բաժակ խմեցի՝ մրցելով նրա հետ: Սրտումս ասարտու գգացի և ինքս ինձ հիշեցրի, որ այլևս չեմ կարող խմել:

- Քեզ մի՛ մեղադրիր Չժաոյի հետ պատահածի համար, - հանկարծ ասաց Ման:

Զգացի կրծքիցս դուրս հորդող արյան հոտը, որը խլացրեց բառերս:

- Չէ...,- ուզեցի բացատրել արցունքներինս պատճառը, բայց ինչպե՞ս հստակ բացատրել:

- Ի՞նչ է եղել, - Դինը պնդեց, որ Ման բացատրի:

Ման ինձ նայեց՝ ներողություն խնդրող հայացքով:

- Ոչինչ, Մա, ասա նրան, - ձեռքով նշան արեցի և նայեցի հեռուն:

Հասկացա, որ Յին Յզինն ինձ է նայում: Մեր հայացքները հանդիպեցին: Հենց այդ պահին երեկոյան արևը վերջնականապես մայր մտավ: Հսկայական բաց տարածության պատճառով դա շատ հանկարծակի թվաց. հորիզոնի մահացու գունատ այդ հատվածն անթաքթորեն սևացավ: Այդ խավարը, հակադրվելով երկնքի անհուն խորքերում թույլ փայլ արձակող հրացուլքին, քանձրախիտ էր, ինչպես ծանր մի մետաղ: Որոշ ժամանակ չէի կարող տեսնել Յին Յզինի դեմքը: Հանկարծ ուզեցի նրա դեմքը տեսնել՝ ինքս էլ չիմանալով, թե ինչու: Ոչ այն պատճառով, որ որոշակի թաքուն կիրք էի տածում նրա հանդեպ՝ լինելով ազդեցության տակ: Ավելի շուտ՝ դա պարզապես մաքուր ձգտում էր, ինչպես իմ ամբողջ կյանքում հազվադեպ ունեցած հույսի մի զգացում: Ոչ, ոչ, սա երազանք էր, ավելի գեղեցիկ, քան հույսը:

Մթան մեջ Դինն արցունքախեղ էր լինում: Գուցե Չժաոյի պատմությունն էր նրան ցավ պատճառել: Գուցե միայն իր համար էր լալիս: Ես վաղուց վարժվել եմ տղամարդ-

Գեղարմ Աշուն 2018

կանց հեկեկոցներին: Ոչ միայն իմ արցունքներին, այլև երբևէ այստեղ մնացած յուրաքանչյուր երիտասարդի: Ման շարունակում էր Դինին դողել, որ խմի: Նա այս հարցերում փորձառու էր: Մեկ անգամ նման իրավիճակների հանդիպելիս մարդիկ ոչ միայն չեն դադարում լաց լինել մի քիչ ավել խմելուց հետո, այլ նաև սկսում են ծիծաղել՝ անկարող լինելով վերջ տալ դրան: Ես ոտքի ելա, քայլեցի դեպի նավի ճաղաշարը և կանգնեցի Յին Յզինի կողքին: Այս կերպ կարողացա նորից պարզորոշ տեսնել նրա դեմքը: Երկար արտևանումներով այդ աչքերում ասես ջրի թույլ ցուլ կար, ճիշտ այնպես, ինչպես լճի մոտակա ջրում: Ես անդիմադրելիորեն գայթակղվել էի: Ի՞նչ կարող ես գգալ այդպիսի կնոջ հետ միասին ապրելիս: Չէի կարող խուսափել անբջալից բաղձանքներից՝ Յին Յզինին պատկերացնելով Սյա Լինի փոխարեն: Որքա՞ն տարբեր կլինեիր իմ կյանքն ի վերջո: Եվարած էի և հառաչանքս չէի կարող զսպել:

- Մա ի՞նչ է,- վերջապես խոսելով հարցրեց Յին Յզինը:

- Դու սիրո՞ւմ ես Դինին,- հանկարծ հարցրի՝ ի զարմանս ինձ:

- Չգիտեմ: Կարծում եմ՝ ոչ,- Յին Յզինի պատասխանը շատ վճռական էր, առանց ամենաաննշան վարանման:

- Բայց նրա հե՞տ ես դեռ:

- Ես ինձ էլ չեմ սիրում, բայց մի՞թե չպետք է ինքս ինձ հետ լինեմ:

- Ինքդ քեզ չե՞ս սիրում:

- Ըհը՛:

- Ինչո՞ւ: Դու այնքան գեղեցիկ ես:

- Որովհետև փախստական եմ: Ես մարդ եմ սպանել ...:

Չէի ուզում հավատալ լսածիս:

Արագ սթափվեցի, որովհետև ասատիկ ահավոր էր: Յին Յզինի պահվածքը, սակայն, շարունակում էր մնալ բնական, ասես սովորական գրույց էր անում: Բայց արցունքներն սկսեցին հոսել այտերն ի վար, ինչն ինձ ստիպեց իրոք հավատալ, որ այն, ինչ ասաց, ճշմարիտ էր:

- Դինը գիտի՞,- գգացի, որ կոկորդս քերծվում է, և հազացի:

Յին Յզինը գլուխը տարուբերեց.

- Նա երբեք չի հարցրել:

Մի պահ կանգ առավ, ապա շարունակեց.

- Եթե հարցներ, կասեի:

- Ավելի լավ է չասես,- հառաչեցի:

- Չնայած այդ մարդն արժանի էր դրան, բայց գիտեմ, որ հանցանքս լուրջ է: Երբեք մտադիր չեմ եղել այսպես խառն ու թափթփված ապրել: Թափառում եմ դեսուդեն՝ զնալով այնտեղ, ուր կյանքը կտանի:

- Ես ոչինչ չգիտեմ:

Իրոք, ինձ չէր հետաքրքրում մանրամասն իմանալ այդ ամենը: Թվում էր, թե այն, ինչ ինձ պատմեց Յին Յզինը, հեռուստատեսային դրամայի մի պատմություն է:

- Եթե մարդիկ հարցնեն, կասեմ նրանց: Բայց ոչ ոք երբեք չի հարցնում: Դու միակ մարդն ես, որ հարց ես տվել: Հարցրիր, թե ինչու չեմ ինձ սիրում: Խիստ հուզվեցի: Շատերին է դուր գալիս իմ գեղեցիկ տեսքը, բայց հազվադեպ են հարց տալիս՝ արդյո՞ք սիրում եմ ինձ:

- Հասկանում եմ:

- Իսկապե՞ս հասկանում ես:

- Իսկապես: Գիտեի՞ր՝ ինչ էինք հենց նոր խոսում Չժաոյի մասին :

Գեղարմ Աշուն 2018

- Մյա Լինն ինձ ասաց:

-Այն օրը, երբ Չժաոն մահացավ, մենք միայն երկուսով էինք: Հաճախ կասկածում եմ, թե դա իմ մեղքն էր: Արդյո՞ք ես էի նրան սպանողը:

- Այդ երեկո հարբած էիր:

- Այո, հարբած էի: Բայց տարօրինակն այն է, որ հարբելուց հետո էլ սքափ մարդու պես եմ ինձ պահում: Ուրիշները սխալմամբ կարծում են, թե բարձր դիմադրողականությամբ ունեն: Բայց իրականում այդպես չէ: Սթափվելուց հետո հաճախ չեմ էլ հիշում, թե ինչ եմ արել:

- Մի բան եմ ուզում իմանալ. ինչո՞ւ ես ինքդ քեզ կասկածում:- Ցին Ցզինն այնքան ամուր էր բռնել իմ աքիղեսյան գարշապարից և ինձ ստիպում էր ասել, թե ինչու:

Մտածեցի և նայելով քիչ հեռվում գործարանը լուսավորող լույսերին՝ պատասխանեցի.

- Բանն այն է, որ Չժաոյին շատ էի սիրում: Երբ միասին խմում էինք, կարող էինք աշխարհում ամեն ինչի մասին խոսել: Ժամանակն արագ էր անցնում, և կյանքը փոքր-ինչ բարելավվել էր: Իրականում չեմ կարող տանել այս կենսակերպը և ուզում եմ ընդդիմանալ դրան: Բայց Չժաոն այս կենսակերպի ներկայացուցիչն է, և ասե՛ք ինչու եմ այդպիսի մտքեր ունենում: Սակայն հիմա, երբ Չժաոն չկա, կյանքս է՛լ ավելի ծանր է ու դժվարին:

- Դե, լավ է, եթե կարծում ես, որ սպանել ես Չժաոյին: Այդպես փոքր-ինչ ավելի հեշտ կլինի քեզ համար,- Ցին Ցզինը խոսում էր մեղմ ձայնով և մոտեցավ ինձ: Նրա քեր շատ մոտ էր իմ քեփին:

Չգացի, որ մխիթարում է ինձ, բայց էլի քրթմնջացի.

- Մի՞թե:

- Նույնիսկ չգիտես, թե որքան եմ նախանձում քո ներկայիս կյանքին: Եթե իրոք լինեիր սպանության համար կասկածվող մեկը, ապա որպես փոխհատուցում չէիր ընտրի այս ամառի վայրում փակվելը: Դու նույնիսկ կին ունես, որը քեզ շատ է սիրում և ցանկացել է, որ երեխա ունենաք:

- Քեզ ասե՞լ է:

- Իհարկե,- Ցին Ցզինը ժպտաց՝ սա ասելով: Մթնշաղի մեջ, լամպի լույսի տակ նրա ժպիտը ճառագում էր սուրբ ու մաքուր: Դրանից գրեթե հալվում էի:

- Հե՛յ, այդ ի՞նչ եք խոսում: Եկե՛ք խմելու,- մեր կողմը նայելով բղավեց Դինը:

Նա արդեն հարբած էր և խնդում էր երջանիկ ապուշի նման:

Չեմ հիշում, թե այդ օրն ինչ եղավ հետո, որովհետև Ման, Ցին Ցզինը և ես շարունակեցինք խմել: Ես հարբել էի: Եվ տարօրինակ է, որ այդ երեկո Չժաոյին չտեսա երագում: Բայց երագ տեսա, այնուամենայնիվ: Երեկո էր, միայնակ քայլում էի լճի ափով: Խավարն այնպես էր իջել վրաս, որ շնչել չէի կարողանում: Հուսահատ փակեցի աչքերս և շուրջբոլորս հրաշալի երաժշտական հատվածների հնչյուններ լսեցի, ասես աճող ինչ-որ բանի ձայն լիներ: Սաստիկ վախեցա: Առավոտյան արթնանալով՝ մտածեցի, որ դա պարզապես աղագոյացման ձայնն էր: Այստեղ կարող է աղ գոյանալ, և այդ գեղեցիկ աղե ծաղիկներն անընդհատ ծաղկում են: Այսպիսով կարելի է մտածել, որ մեր կյանքից գատ՝ այստեղ կյանքի այլ ձևեր էլ գոյություն ունեն: Պարզապես աղը կյանքի մի ձև է՝ առանց կյանքի: Մի՞թե Արարչի համար իսկապես տարբերություն կա մարդկանց և աղի գոյությունների միջև: Ե՛վ մարդիկ, և՛ աղը՝ աճի ու անկման փոխակերպումներ են սուկ:

Դինի և Յին Յզինի մեկնումից ավելի քան երկու ամիս անցած կլիներ, երբ մի մեծ փաթեթ ստացա: Չկից կռահեցի, որ նկար կարող է լինել, ու երբ բացեցի, ինչպես ենթադրում էի, տեսա, որ շրջանակված և պատվերով ուղարկված յուղաներկ կտավ է: Դինի ստեղծագործությունն էր, որ պատկերում էր աղի լիճը: Աղի լիճն ու աղե ծաղիկները նկարում ամենատարօրինակ տեսքն ունեին: Առաջին հայացքից ասես տիեզերքից երևացող տեսարան լիներ կամ սյուրռեալիստական ոճի մի բան: Բայց երբ մի քիչ երկար նայեցի, նկատեցի, որ այլափոխված չափազանցումներն այդտեղ հենց այն էին, ինչն առավել ընդգծում էր աղի լճի ամենակարևոր ու էական առանձնահատկությունները: Նկարը դրեցի հյուրասենյակում և սպասեցի, որ Սյա Լինը վերադառնա ու իր գնահատականը տա: Բայց նա միայն մի հայացք գցեց և տազնապաժ ճչաց.

- Հենց հիմա հեռացրու: Չեմ ուզում այլևս տեսնել:

- Ինչո՞ւ,- շփոթված տարակուսեցի:

Սյա Լինը պատասխանեց.

- Ճիշտ այնպիսին է, ինչպիսին աղի լիճն է իմ երազներում, և աստիկ վախեցնում է ինձ:

Իսկապես տարօրինակ էր: Ինձ մնում էր միայն փաթաթել նկարը և դնել հեռու մի տեղ: Գուցե երբ աղի լճից հեռու մեկ այլ տեղ նորից բացեմ այն, ուրիշ տպավորություն գործի:

Դինին նամակ գրեցի և շնորհակալություն հայտնեցի նկարի համար: Ասացի, որ զանձի պես կպահեմ այն: Յին Յզինի մասին ոչինչ չհարցրի: Մտածեցի, որ դրանից լավ չի գգա: Այլևս չէի նախանձում Դինին: Թերևս նրանից էր, որ Յին Յզինն իսկապես չէր սիրում նրան, իսկ գուցե այն պատճառով, որ հաշտվել էի սեփական մեղքիս հետ և հետևաբար գտել էի սեփական երջանկությունս: Մտադիր էի բավարարվել այստեղ մնալով: Դինը նամակիս չպատասխանեց և այդ կերպ աներևութացավ, ինչպես աղի լճում լողացող աղահատիկն է լուծվում հորդ և հողմախառն անձրևի տակ:

Կյանքն, այսպիսով, նորից խաղաղ հունի մեջ ընկավ: Ալեկոծությունն աստիճանաբար հանդարտվեց: Այլևս չափից դուրս շատ չէի խմում, բայց ոչ այն պատճառով, որ վախենում էի, թե երազում Չժառոյին կտեսնեի (ժամանակ առ ժամանակ տեսնում էի նման երազներ): Ավելի շուտ այն պատճառով, որ ստիպված էինք վերջ տալ հարբեցողությանը՝ ապահովագրելով մեզ և նախաձննդյան մեր պատրաստությունները տեսնելով: Հենց որ Սյա Լինը հղիացավ, անվճար արձակուրդ վերցրեց և մեկնեց ծնողների տուն՝ զավառի մայրաքաղաք: Առանձին ապրելով երկու տարբեր վայրերում՝ մենք ավելի քիչ էինք վիճում, և մեր զգացմունքները վերստին ջերմացան: Արդեն չէի կարող պատկերացնել այնպիսի մի իրավիճակ, երբ կապրեի մեկ այլ կնոջ հետ: Հաջորդ տարի աշնանը Սյա Լինն առողջ մի տղա ունեցավ: Հայր դառնալուց հետո էլ դեռ գնում էի աղի լճի գործարան աշխատելու, բայց նաև աշխատանքս թողնելու մտադրություն ունեի: Տարօրինակն այն էր, սակայն, որ այդ անսահման աղի տարածքում ապրելիս հոգեվիճակս աստիճանաբար խաղաղվում էր: Հեռանալու մասին մտքերն էլ այդքան հաճախ չէին համակում ինձ: Երբ քայլում էի աղի լճի ափով և նայում էի արտառոց բնապատկերին, հաճախ էի մտածում Դինի նկարածի և Յին Յզինի գեղեցիկ դիմագծերի մասին: Անորոշ մի զգացում էի ունենում, ասես իրականում երբեք չէի տեսել նրանց, այլ տեսել էի սոսկ ցնորական մի երազում:

Չմռան սկզբին մի անսպասելի հյուսիսային քամի փչեց: Չարմանքով նկատեցի, որ աղի լճի մակերևութին բարակ սառույց է գոյացել և սերտաճել է փայլուն ու կիսա-

թափանցիկ աղաչերտի հետ: Գա հազվագյուտ տեսարան էր, քանի որ աղի լճերը հազվադեպ են սառչում: Հատուկ գնում էի նայելու գործարանի ջերմաչափին: Ամենացուրտ ջերմաստիճանը հասել էր զրոյից ցածր քսանհինգ աստիճանի: Բայց առավել ցավալին այն էր, որ այդ անսովոր ցուրտ ձմռանն այդպես էլ ձյուն չեկավ, և սարսափելի չոր եղանակ էր: Ամեն առավոտ արթնանալիս կոկորդոպ այրվում էր չորությունից: Մի առավոտ արթնացա և տեսա՝ նամակ են ստացել: Կարծես արտերկրից էր: Իմ սահմանափակ անգլերենով ի վերջո պարզեցի, որ հավանաբար Նեպալից է: Կռահեցի՝ ամենայն հավանականությամբ Յին Յզինից է: Նամակ երազի՞ց: Մի պահ կասկածեցի՝ արթնացե՞լ են, թե՞ ոչ:

Յին Յզինի ձեռագիրն իր նման գեղեցիկ էր: Գրում էր, որ ամեն ինչ լավ է: Ինձ գրելու պատճառն այն էր, որ մտածել էր իմ մասին, երբ ապաշխարելիս էր եղել Բուդհանաթ Ստուպայի առջև, Կատմանդուում: Ստուպայի ստորոտին, հիմքի մոտ, Բուդդայի շատ աչքեր են նկարված: Այդ ողորմած, բարեգութ աչքերը սենյակ էին իր վրա, և վերջնականապես հնարավոր դարձրին, որ այլևս չվախենա մահից: Ասում էր, որ Կատմանդուն շատ գեղեցիկ է: Շուրջբոլորը կանաչ լեռներ են, և քաղաքում ամենուր բարձր ծաղիկներ են: Յին Յզինը հույս էր հայտնում, որ մի օր ես էլ հնարավորություն կունենամ գնալ Կատմանդու: Աղի լճի տարածքից տարբերվող բոլորովին այլ տեսարան է այդտեղ: Գրել էր նաև, թե որտեղ է Դինը: Վերջինս մեկնել էր Շենժեն և այնտեղ պատկերասրահ էր բացել: Լսել էր, որ Դինի գործերը բավականին լավ են: Այդ ամենից հետո ասում էր, որ որոշել է կյանքի վերջին օրերն անցկացնել աղի լճի տարածքի նման մի վայրում և այդտեղ էլ մեռնել ու միանալ հավերժական նախնականությանը: Նա տեղեկություններ էր փնտրել, և պարզել էր, որ աշխարհի ամենամեծ աղի լիճն այստեղ չէ, այլ Հարավային Ամերիկայում՝ Բոլիվիայի հարավարևմտյան մասում գտնվող բարձրավանդակում: Այն կոչվում էր Սալար դե Ույունի: Ասում էր, որ հետագայում կուգեր գերեզման ունենալ Սալար դե Ույունիում՝ թաղվելով այդտեղ: Չանք էր թափել ներկայացնելու նաև որոշ տվյալներ.

«Այն ծովի մակարդակից 3000 մետր բարձրության վրա է և գրավում է 12 500 քառակուսի կիլոմետր տարածք: Ամեն ձմեռ աղի լիճը լցվում է անձրևաջրով՝ կազմելով ջրի բարակ, ոչ խոր մի շերտ: Ամռանը լճի ջուրը չորանում է՝ թողնելով հանքային նյութերի նստվածք, որ հիմնականում բաղկացած է աղից: Շատ տեղերում աղի շերտերը 10 մետրից ավելի հաստություն ունեն՝ մոտավորապես 650 միլիարդ տոննա ընդհանուր պաշարով, որը 1 000 տարի կրավարարի աշխարհի ողջ բնակչության պահանջարկը: Տեղի բնակիչները չոր եղանակին լճում ձևավորված աղային կարծր շերտերից աղյուսանման հաստ խորանարդներ են պատրաստում, որոնք օգտագործում են իրենց տները կառուցելիս: Բացի տանիքից, դռներից և լուսամուտներից, պատերն ու կահավորանքը, ներառյալ մահճակալները, աթոռները և մյուս կահույքը, բոլորն էլ պատրաստված են աղի խորանարդներից»:

Պատասխանելով Յին Յզինին՝ գրեցի. «Եթե Սալար դե Ույունիին վերաբերող թվային որոշ տվյալներ նվազեցնենք և եղանակն էլ նկատի ունենանք հյուսիսային կիսագնդի համար, ապա ոչ մի տարբերություն չկա այստեղի ու այնտեղի միջև: Հիմա գրում եմ՝ հենված աղի խորանարդներից պատրաստված սեղանին: Վրան ապակի է: Ապակու վրա թավե կապույտ կտոր է փռած, որից հուսալի մի ջերմություն է բխում: Ձեռք են տալիս սեղանին, որը թեև անսովոր կառուցվածք ունի, բայց ամենևին չի տարբերվում սովորական սեղանից...»:


Յին Յզինից այլևս նամակ չստացա: Որքան ժամանակն անցնում էր, այնքան ինձ

Գեղարմ Աշուն 2018

թվում էր, թե նույնիսկ այն ստացածս էլ անհրապական մի պատրանք էր, քանի որ ֆիզիկական ոչ մի ապացույց չկար. վախենալով, որ Սյա Լինը կտեսնի, կարդալուց հետո նամակն այրել էի: Գարունը մոտենում էր, և Սյա Լինը զանգահարեց՝ հորդորելով վերադառնալ ու տեսնել մեր երեխային, ինչպես նաև ներկայանալ հարցազրույցի՝ այնտեղ աշխատանքի տեղավորվելու համար: Ասաց, որ իր ազգականն օգնել էր ինձ՝ նոր աշխատանքի հնարավորություններ փնտրելով: Երբ ուղեքեռս կապում էի, մտածեցի, որ գուցե ոչ ոք չի եկել այստեղ ինձ տեսնելու: Միակ բանը, որ ուղեկցել է ինձ, աղի առաջացման անվերջ ձայնն է եղել: Այո, նույնիսկ առօրյա աղմուկ-ժխտրի մեջ ես դեռ կարող եմ զանազանել այդ հատվածների ձայնը: Գլուխս բարձրացրի և պատուհանից դուրս նայեցի աղի հարթությունների գունատ անվերջությանը՝ չիմանալով, թե արդյոք երբևէ կվերադառնա՞մ:

*«Չինական կարճ պատմվածքի» անթոլոգիայից
/Շուտով լույս կտեսնի «Գեղարմ» հանդեսի մատենաշարով/*

Թարգմանությունն անգլերեն տարբերակից՝
Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆԻ



**ԿՈՆԿՐԵՏ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Սկսած անցյալ դարի երկրորդ կեսից, հիմնականում Եվրոպայում, իր տեղը գտավ կոնկրետ պոեզիան: Այդ ուղղությանը հարող բանաստեղծները ցանկացան իրենց զգալ առավելս նկարիչներ, քան՝ գրաստեղծներ: Եվ նրանք սկսեցին գրել նկարելու պես: Տառերն ու բառերը դարձան ավելի գեղեցիկ ու բազմանշանակ: Մի բառի կրկնությունը կամ մի դարձվածքի բառերի տարափոխումը հնարավորություն տվեց ստանալ տեքստային-գրաֆիկական պատկեր կամ էլ արտահայտել փիլիսոփայական գաղափար՝ հաճախ հեզնական: Դա իսկական հայտնագործություն էր: Հին հարցերը՝ «Ի՞նչ է մարդը», «Ի՞նչ է աշխարհը», «Ի՞նչ են աշխարհն ու ես», կոնկրետ պոեզիայում հնչեցին նորովի, լսկոնիկ, թարմ: Այդպես է՝ ավանգարդը մշտապես ձգտում է հեռանալ գրականությունից, նրա կաղապարներից, եւ արդյունքում այն հարստացնում է գրականությունը:

Չեզ ենք ներկայացնում գերմանացի կոնկրետ բանաստեղծների առանձին ստեղծագործությունների մի շարք, որոնք ակնառու ցույց են տալիս վերը ասվածի ճշմարտացիությունը:

Թարգմանիչ

Օյենն ՀՈՍՐԻՆԳԵՐ

սա սեւ արկղ է
այստեղ կա
կա այստեղ
այդ սեւ արկողը

ոչ մի սխալ համակարգում

1

ոչ մի սխալ համակարգում
ոչ մի խսալ համակարգում

Գեղարմ Աշուն 2018

նչ մի խլամ համակարգում
նչ մի սպամ համակարգում
նչ մի սղղալ համակարգում
նչ մի սարսաղ համակարգում
նչ մի դժժալ համակարգում
նչ մի աղալ համակարգում
նչ մի մաղալ համակարգում
նչ մի արաղ համակարգում
նչ մի մագաղ համակարգին
նչ մի սագան համակարգին
նչ մի սալամ համակարգում

2

նչ մի սխալ չկա համակարգում
նչ մի սխալ արտահամակարգում
նչ մի սխալ անհամակարգում
նչ մի սխալ չկա անհամ կարգում
նչ մի սխալ համի կարգում
նչ մի սխալ համառ վարգում
նչ մի սխալ համառ վարքում
նչ մի սխալ համակառքում

Ֆրանց ՄՈՆ

պետք է անել մի բան
ինչ-որ բան անել է պետք
անել է պետք մի բան
այն ինչ-որ պետք է անել

պետք է անել այն ինչ
անել է պետք ահա թե ինչ
ինչ-որ անել է պետք
պետք է անել. որ դու

անես ինչ-որ պետք է
այն որ իրոք պետք է
անել հենց այն հիմա
ինչ-որ պետք է անել

մազեր
մազեր ցցուն
մազեր ապուրում
կյանքը մազի վրա
մազից ուղիղ կախված

ճիշտը ոտքերի մեջ
մի ոտքն այստեղ է հենց
ոտքեր ձեռքերի մեջ
ձեռքից ընկած ոտքեր

կյանքը ձեռքի վրա
ձեռքը ապուրի մեջ
ձեռքեր երկար ցցված
միշտ մազերից կախված

մեջքով դեպի պատը
պատով դեպի մեջքը
մեջքով դեպի դեմքը
դեմքով դեպի պատը
պատով դեպի դեմքը

դեմքով դեպի մեջքը
մեջքով դեպի մեջքը
մեջքով դեպի պատը
պատով դեպի պատը
դեմքով դեպի դեմքը

Գերհարդ Ռ-ՅՈՒՄ

մարմին մարմին մարմին մարմին
մարմին մարմին մարմին մարմին
մարմին մարմին մարմին մարմին
մարմին մարմին մարմին մարմին
մարմին մարմին մարմին մարմին
մարմին մարմին մարմին մարմին
մարմին մարմին մարմին մարմին
մարմին մարմին մարմին մարմին
մարմին մարմին մարմին մարմին
մարմին մարմին մարմին մարմին
մարմին մարմին մարմին մարմին

Գեղարմ Աշուն 2018

Թիմ ՈՒԼՐԻԽՍ

ՄՏԱ-ԽԱՂ

/Դեկարտի խաղաքարտերը/

ես մտածում եմ, ուստի եւ ապրում եմ.
ես ապրում եմ, ուստի եւ մտածում եմ.
քանզի մտածում եմ՝ ես իրո՞ք ապրում եմ,
դրա համա՞ր եմ՝ ապրում, մտածում:

Թարգմանությունները գերմաներենից՝
Նաիրի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Մարդը հազել էր ծոցագրպանի վրա կարմիր խորհրդանիշով կոստյում: Խորհրդանիշը կուսակցականի էր նման, բայց իր վրա կրում էր լուկ տիրոջ անունը: Նա Ստոկհոլմում հանդես էր գալիս Նոբելյան բանախոսությամբ, որով պարտավոր են հանդես գալ աշխարհի ամենահեղինակավոր գրական պարգեւին՝ Նոբելյան մրցանակին արժանացողները:


Դա 2012 թվականի դեկտեմբերի 7-ին էր, եւ չինացի գրողին, ում փափուկ բառերը, արտաբերելուն զուգահեռ, նման էին երգի, լսում էին հիասթափությամբ: Որ նա գրել է հրաշալի գրքեր՝ դրանում կասկած չկար: Նրանց թվում էին «Սխտորային բալլադներ»-ը, «Յոգնել եմ ծնվելուց ու մեռնելուց»-ը, էպիկական շնչով ու վառ, հյութեղ լեզվով գրված ընտանեկան սագաները: Դրանցում միշտ էլ առկա է վերջին տասնամյակներին Չինաստանի զարգացման արտացոլումը՝ սկզբի աղքատությունից մինչեւ կուլտուրական հեղափոխության միջով տնտեսական վերելք: Գրողը, կոմունիստական կուսակցության եւ նրա առաջամարտիկների ամբողջ քննադատությանը չնայած, ինչն ակնբերել է իր բոլոր գրքերում, առաջվա պես լոյալ է համարվում վարչակարգի նկատմամբ:

58-ամյա Մո Յանը Չինաստանի կոմունիստական կուսակցության անդամ է 1979 թվականից: Նա պաշտոնավարումն սկսել է բանակում, իսկ ներկայում հանդիսանում է Չինաստանի կուսակցամետ գրողների միության նախագահի տեղակալը: Արդեն երկար ժամանակ է, ինչ ընթերցողներին մտահոգում է նրա գրքերում պետության հանդեպ արտահայտվող աներկհմաստ քննադատության եւ հրապարակային ելույթներում դրսեւորվող կոնֆորմիզմի միջեւ առկա հակասությունը: Նոբելյան մրցանակի շնորհ-

Մո ՅԱՆ.

«ԵՍ ՄԵՂԱՎՈՐ ԵՄ»

/հարցազրույց/



ման հետ կապված արձագանքը եւս եղել է երկակի: Չինացի այլախոհերն, ինչպիսին գրող Լյաո Իուն է, «շշմած» էին, այն դեպքում, երբ գերմանացի գրող Մարտին Վալզերն ասել է, որ դա իր մոտ դույզն ինչ չի հարուցել «որեւէ անհանգստություն»:

Մո Յանը շատ քիչ է բացատրում իր դիրքորոշումը: Նա մերժել է ողջ աշխարհից իր գլխին թափվող՝ հարցազրույց տալու առաջարկները: Ստոկհոլմում արարողությունից առաջ տեղի ունեցած համաժողովում Յանը հայտնվել է ուշադրության գերկենտրոնում, երբ գրաքննչությունը Չինաստանում կոչել է «անհրաժեշտ չարիք», ինչն աշխարհի բոլոր մեկնաբանների մոտ վրդովմունք է հարուցել:

Դրանից քիչ առաջ Գերմանիայում լույս էր տեսել Մո Յանի՝ «Գորտը» վերտառությամբ գիրքը: Գրքի հրատարակմանը հինգ օր մնացած, Յանն անսպասելիորեն համաձայնվել է «Շպիգել» հանդեսին հարցազրույց տալ, որին, սկսվելուց առաջ, կոչել է «շատ կարճ»: Հանդիպման վայր էր ընտրել չինական թեյարանը: «Շատ կարճ» հարցազրույցն իրականում տևել է երկու ժամ...

Մո Յանը ծնվել է Չինաստանի արևելքում՝ Հոնգկոնգի գյուղերից մեկում, 1955 թվականին: «Մո Յան»-ը կեղծանուն է, իսկական անունն է Հուան Մոե: Սերել է գյուղացի ծնողներից: 1959-1961թթ. անցել է չինական մեծ սովի՝ քաղաքական ծանրագույն վրիպումների հարուցած՝ ուտելիքի սուր պակասության ժամանակահատվածով: Քաղցից վախճանվել են միլիոնավոր մարդիկ: Մո Յանին 12 տարեկանում հարկադրել են թողնել դպրոցը՝ որպես անվստահելի ընտանիքի զավակի, եւ նա դարձել է հովիվ, նաեւ աշխատել բամբակամշակման արդյունաբերությունում:

«Գորտը» վեպում առկա են գրողի մի քանի ինքնակենսագրական բաղկացուցիչներ: Նրա հերոսը նույնպես սերել է Հոնգկոնգի գյուղացիական ընտանիքից, մեկնում է բանակ եւ տատանվում է հարմարվելու ցանկության ու իր խղճով առաջնորդվելու անհրաժեշտության միջև: Հերոսն ունի մանկաբարձ մորաքույր՝ ու դա էլ է ինքնակենսագրական մանրամաս: Մորաքույրը վեպի գլխավոր հերոսուհին է ու շատ դաժան՝ պետության կողմից անցկացվող «մեկ երեխայի քաղաքականությանը» հետեւելու իր բուռն ձգտման մեջ: Եվ մինչեւ վերջ անհասկանալի է, թե ինչու է նա, չնայած կրկնվող ստորագումներին, հավատարիմ մնում կուսակցությանը: Նրանք, ովքեր ապրում են ավտորիտար հասարակությունում, մեծապես վտանգում են իրենց, երբ դիմադրում են: Չինաստանի կյանքի իրողություններից սկիզբ առնող այս մտքի հղումն ունեն Մո Յանի գրքերը: Սակայն Նոբելյան մրցանակակիրները կարող են պաշտպանության հույս ունենալ. Նոբելյան մրցանակակիրները կարող են բացախստելու ռիսկի դիմել:

Իրականում նրանց համար այլ ընտրություն չի էլ մնում:

-Պարոն Մո, Ձեր «Մո Յան» կեղծանունը բառացիորեն նշանակում է «մի ասա»: Երեւում է, որ շատ լուրջ եք դրան վերաբերվել եւ խուսափում եք հանրության առջեւ ելույթներից, մասնավորաբար՝ լրագրողների: Ինչու՞ է այդպես:

- Որովհետեւ ես չեմ սիրում քաղաքական հայտարարություններ անել: Ես արագ գրող եմ, բայց՝ մանրագնին մտածող: Երբ հանդես եմ գալիս հրապարակայնորեն, ինձ անհապաղ հարցնում են՝ արդյո՞ք ճիշտ արտահայտվեցի: Ի դեպ, իմ քաղաքական հայացքները բավականին որոշակի են: Հարկա-

վոր է ընդամենը կարողալ գրքերս...

-Նորեւյան մրցանակ ստանալուց հետո Ձեր առաջին գիրքը, որ լույս տեսավ Գերմանիայում, «Գորտը»-ն է: Այն նվիրված է «մեկ երեխայի» չինական քաղաքականությանը, որն ազդեցություն է գործում ավելի քան մեկ միլիարդ մարդկանց վրա: Ի՞նչ եք Դուք անձամբ մտածում այդ քաղաքականության մասին:

- Որպես հայր, ես միշտ գտել եմ, որ յուրաքանչյուր ոք պետք է այնքան երեխա ունենա՝ որքան ուզում է: Բայց որպես պետական պաշտոնյա, պարտավոր եմ ենթարկվել յուրաքանչյուր ծառայողի վրա տարածվող օրենքին. մեկ երեխա՝ եւ ոչ ավելին: Չին բնակչության հիմնախնդիրը հեշտ չի լուծվում: Ես վստահ եմ լոկ մեկ բանում. բռնի ճանապարհով ոչ ոքի չի կարելի հետ պահել երեխաներ ծնելուց:

-Չենց դա էլ տեղի է ունենում «Գորտի» մեջ: Ի՞նչն է ոգեւորության աղբյուր ծառայել այն գրելու համար: Արդյո՞ք դա եղել է վերոնշյալ քաղաքականության մասին սեփական կարծիքը: Կամ էլ՝ ինչ-որ պատկեր, կերպար, երկխոսություն:

-Դա եղել է էպիկական պատմությունն իմ մորաքրոջ կյանքի, ով տասնամյակներով մանկաբարձ է աշխատել իմ հայրենի Չաոմիում ու տեսել է անկարագրելին: Ես ներքին անհրաժեշտություն զգացի գրի առնել այդ ամենը:

-Դոկտոր Վանը՝ վեպի գլխավոր հերոսը, իրենից ներկայացնում է սեփական գործունեությամբ ահավոր տարված՝ բարդ եւ անզամ հրեշավուն կերպար: Ինչպե՞ս է նա արձագանքել գրքի երեւան գալու:

-Նա այն չի կարդացել: Ես նրան աներկիմաստ եմ հասկացրել, որ կարողալ պետք չէ, որովհետեւ կարող է բարկանալ ինձ վրա՝ եթե, այնուամեն-

նայնիվ, անի դա: Իհարկե, «Գորտում» կատարվող ամեն ինչը չէ, որ հիմնված է իմ մորաքրոջ պատմության վրա, ով, ի դեպ, չորս երեխա ուներ: Գիրքը ես լրացրել եմ այլ բժիշկների փորձով, ինչպես նաեւ՝ իմ իսկ տեսածով:

-Այնպիսի բաներ, որոնց մասին դժվար է խոսել, կան եւ Ձեր շատ այլ գրքերում: Օրինակ՝ «Սխտորային բալլադներ»-ում հղի կինն, զգալով, որ սկսվում է ծննդաբերությունն, իրեն կախում է: Իսկ «Գորտը» Ձեր ամենամոռյալ գիրքն է թվում: Այն գրելու համար շա՞տ ժամանակ է պահանջվել:

-Ես նրա մտահղացումը կրել եմ տեւականորեն, բայց գրել համեմատաբար արագ: Դուք ճիշտ եք. գրելու ընթացքում ճնշող զգացումներ եմ ունեցել: Եվ այն դիտարկում եմ որպես ինքնաքննադատության փորձ:

-Ի՞նչ իմաստով: Դուք անձնական ոչ մի պատասխանատվություն չեք կրում գրքում նկարագրված բռնության ու հարկադիր աբորտների համար:

-Վերջին տասնամյակներին Չինաստանն անցել է այնպիսի ահասարսուռ փոփոխություններով, որ մեծամասնությունը մեզնից իրեն համարում է զոհ: Ընդամին՝ ոմանք հարց են տալիս իրենց. «Ե՞ս էլ եմ վնասել ուրիշներին»: «Գորտը» նվիրված է այդ հարցին, դրա հնարավոր լինելուն: Ես, օրինակ, կարող էի լինել տարրական դպրոցի տասնմեկամյա աշակերտ միայն, բայց միացել եմ կարմիր ջոկատներին եւ մասնակցություն ունեցել իմ ուսուցչի հրապարակային քննադատությանը: Ես նախանձել եմ այլ մարդկանց տաղանդին ու հաջողությանը: Ավելի ուշ նույնիսկ կնոջս խնդրել եմ դիմել աբորտի՝ հանուն սեփական ապագայի: Ես մեղավոր եմ:

-Ձեր գրքերը նկարագրում են ժամանակակից Չինաստանի ճնշող պատկերը: Թվում է, թե չկա ոչ մի շար-

ժում առաջ: Ոչ Ձեր հերոսները, ոչ հասարակությունը, ոչ էլ երկիրը, որպես այդպիսին, կարծես չեն ձգտում ոչ մի ուղղությամբ:

-Այդ առումով ես չհնացի եմ ոչ լիովին: Չինական դրամաների մեծամասնությունն ունենում է երջանիկ ավարտ: Իմ վեպերի մեծամասնությունն ավարտվում է ողբերգությամբ: Սակայն կան նաեւ հույս, արժանապատվություն եւ ուժ:

-Ձեր որոշ գրքեր ընթերցվում են ֆիլմի նման: Դուք խուսափում եք Ձեր հերոսների հոգին չափազանց խորը թափանցելուց: Ինչու՞ է, օրինակ, դուրստոր Վանն այնչափ հետեւում կուսակցության հրահանգներին, թեւ հիանալի հասկանում է դրանց սխալակամությունը:

- Դա իմ սերնդի հոգեւոր փորձի մի մասն է: Որոշ մարդիկ գիտակցել են, որ կուլտուրական հեղափոխությունը եղել է սխալ, բայց նաեւ գիտակցել են, որ կուսակցությունն ուղղել է այն:

-Իսկ անձամբ Դուք ի՞նչ եք մտածում այդ հաշվով: Ի վերջո, Ձեզ դպրոցից հեռանալ են հարկադրել կուլտուրական հեղափոխության ժամանակ: Սակայն Դուք առաջվա պես կուսակցության անդամ եք:

-Չինաստանի կոմունիստական կուսակցությունն ավելի քան 80 միլիոն անդամ ունի, ու ես նրանցից մեկն եմ: Կուսակցության շարքերն են մտել 1979 թվականին, երբ ծառայում էի բանակում: Ես մտածում էի, որ կուլտուրական հեղափոխությունն առանձին առաջամարտիկների սխալն է: Որ այն կուսակցության հետ՝ որպես այդպիսին, քիչ է կապված:

-Գրքերում Դուք վճռականորեն քննադատում եք կուսակցական պաշտամատար անձանց, սակայն Ձեր քաղաքական հայտարարությունները, հենց նոր արածի հանգույն, զուրկ են սրու-

թյունից: Ինչպե՞ս կբացատրեիք այդ հակասությունը:

-Երբ ես կտրուկ քննադատում եմ կուսակցական գործիչներին, իմ քաղաքական հայացքների հետ հակասություն չկա: Ես բազմիցս եմ շեշտել, որ գրում եմ ոչ թե կուսակցության համար, այլ՝ ժողովրդի անունից: Ես արհամարհում եմ կոռումպացված չինովիկներին:

-Երբ անցյալ տարի գերմանական գրավաճառների Խաղաղության մրցանակ շնորհվեց չին գրող Լյաո Իուին, նա Ձեզ «Շպիգել» հանդեսում քննադատեց որպես «պետական գրողի» եւ ասաց, որ Դուք բավական տարածություն չեք պահում Ձեր ու կառավարության միջև:

-Ծանոթ եմ նրա արտահայտությանը, կարդացել եմ ելույթը պարզեւատրման արարողության ժամանակ: Այնտեղ նա չինական պետության պառակտման էր կոչում: Ես հստակ համաձայն չեմ դրան: Կարծում եմ, որ Սիչուանի, որտեղ իր ծնունդն է առել Լյաոն, բնակիչները չէին համաձայնվի իրենց գավառի օտարմանը Չինաստանից: Ես վստահ եմ, որ Լյաոյի ծնողները երբեք չէին ընդունի դա: Պատկերացնել անգամ չեմ կարող, որ նա ինքը սրտի խորքում կարող է համաձայն լինել իր ասածին: Գիտեմ, որ նախանձում է իմ պարզեւին եւ հասկանում եմ դա: Բայց նրա քննադատությունն անարդար է:

-Կոնկրետ ո՞ր քննադատությունը նկատի ունեք:

-Դե, ի թիվս մնացածի՝ ինձ մեղադրել է Բո Սիլային ...

-...ով շնորհագրվել է նախկին կուսակցական ղեկավար Չունցինի կողմից...

-...բանաստեղծությանս մեջ գովելուն: Բայց իրականում ճիշտը հակառակն է: Ես սարկազմով լի էի ու երգիծանք գրեցի: Թույլ տվեք այն ներկայացնել հակիրճ:

/Մո Յանը վերցնում է նշատետրը եւ գրում/.

*Փառաբանիր-կարմիրներին-
պայքարիր- սեւերի դեմ՝ հզոր է հնչում,
ժողովուրդը շրջվում է կողմը*

Չունցինի:

*Երբ սպիտակ սարդը միջատորս
ցանց է հյուսում իսկական,*

Սեւ ձին, դատարկ քարշ եկող

փորոտիքով՝

Երիտասարդությունը չէ զայրացած:

*Գրողը պետք է զգուշանա եւ աջ, եւ
ձախ կուսակցություններին ընտրելուց:*

*Չինովնիկը բարի անունն իր պահի
պիտի մինչ մահն ու հետո:*

*Ջենթլմենը, որ դու ես, անհանգիստ
ջրերում կետ է հեմման:*

*Ցզյալինցզյան գետի վրա փայլում են
լանջերը վեհատես՝ կրակի նման:*

2011 թվականին Չունցինից մի գրող ինձ խնդրեց վայելչագրական մի մակագրություն անել, ինչը սովորական, ընդունված բան է մեզ մոտ: Ես նրան ուղարկեցի այդ բանաստեղծությունը, որին նա պատասխանեց այսպես. «Չգիտեմ՝ լա՞ց լինել, թե՞ ծիծաղել»: Այն օրերին շատերն էին զովաբանում Բո Սիլային՝ կարմիր երգեր երգելու եւ մաֆիայի /«սեւերի»/ դեմ պայքարի կամպանիա սկսելու համար: Շատ գրողների նույնիսկ առաջարկել են զովաբանական գրել Չունցինի մասին: Երբ ես նշում եմ «սպիտակ սարդին»՝ ակնարկում եմ Չինաստանի այն մարդկանց, ովքեր նստած են համակարգչի մոնիտորի առջեւ ու ցանցեր են հյուսում, որոնք մերկացնում են իրական հանցագործներին ու կոռուսպացված պետպաշտոնյաներին: Հանձին «սեւ ձիու» նկատի են ունեցել նրանց, ովքեր լոկ երեւալ են ուզում որպես հրապարակային ինտելեկտուալներ: Իսկ բա-

նաստեղծության վերջում իմ մտերիմ գրողներին կոչում եմ ոչ աջ, ոչ էլ ձախ դիրք ընդունելուն, կոչում եմ ժողովրդի՝ դիրքորոշմանը հարելուն:

-Եվ Դուք պնդում եք, որ Ձեր քննադատները նպատակասլացորեն աղավաղել են այդ բանաստեղծությունը, որպեսզի Ձեզ ներկայացնեն Բո Սիլայի մտերի՞մը:

-Նրանք, ովքեր իմ դեմ են, գերազանցապես գրողներ են ու հիանալի գիտեն, որ այն երգիծական բանաստեղծություն է: Բայց հենց որ ինձ Նոբելյան մրցանակ շնորհեցին, խոշորացնող ապակի առան ձեռքները՝ ինձ մոտ թերություններ երեւակելու նպատակով, եւ անգամ բանաստեղծություններիս իմաստն աղավաղեցին:

- Մյուս փաստարկը, որին դիմում են Ձեր քննադատները, այն է, որ Դուք մասնակցել եք 1942 թվականին Մաո Ցզեդունի հայտնի տխրահռչակ ճառի հետ կապված գրքի գրմանը, ճառ, որով նա գծել էր այն սահմանները, որում հետայդու պիտի ստեղծագործեին գրողները:

-Այդ ճառն իրենից ներկայացնում է պատմական փաստաթուղթ, որն ունի իր ինչպես իմաստը, այնպես էլ՝ սահմանները: Երբ ես եւ իմ սերնդի գրողները սկսեցինք, քայլ առ քայլ ընդլայնեցինք այդ սահմաններն ու դուրս եկանք դրանցից: Ով էլ կարդա այդ ժամանակաշրջանի իմ ստեղծագործությունները, դրանց գիտակցաբար մոտենալու դեպքում չի կարող պնդել, թե ես քննադատաբար չեմ գրել:

-Բայց ինչու՞ եք մասնակցել գրքի կայանալուն:

-Եթե անկեղծ ասեմ՝ դա առեւտրային նախագիծ է եղել: Հրատարակչության խմբագրի մոտ, ով հին ընկերս էր, միտք հղացավ: Նա արդեն համոզել էր շուրջ հարյուր գրողների, և երբ միասին մասնակցեցինք համաժողովին, նա

գիրքն ու գրիչը ձեռքին մոտեցավ ինձ եւ խնդրեց Մառի ճառից ձեռագիր պարբերություն գրառել: Հարցրի. «Ի՞նչ պետք է գրեմ», ասաց. «Ես ընտրել եմ ահա այս պարբերությունը»: Ես բավականին սնափառ գտնվեցի՝ հնարավորությունն օգտագործելու եւ իմ վայելչագրությունը ցուցանելու համար:

-Ձեր «Հոգնել եմ ծնվելուց ու մեռնելուց» վեպում հերոսներից մեկը զուգարանում պատահաբար ձեռքից զգում է Մառի դեմքով կրծքանշանը: «Փոփոխություններ» ինքնակենսապատման մեջ նկարագրում եք, թե Մառի փոքրիկ արձանիկներով ինչպես կարելի է կացարանում ազատվել առնետներից: Ինչու՞ եք գրքերում արտահայտվում այդչափ հանդուգն, եւ այնքան զուշավոր՝ անձնական արտահայտություններում:

-Կարծում եք, որ անձնական արտահայտումներում ես զգուշավոր եմ: Եթե այդպես լիներ, չէի համաձայնվի այս հարցազրույցին: Ես գրող եմ, ոչ թե դերասան: Ու երբ գրում էի այդ տողերը, տաբուի մասին չէի մտածում: Եթե դրանով իսկ ապացուցել եմ, որ Մառն մարդ է եղել՝ եւ ո՛չ աստված, այդպես էլ կա: Երբ երեխա էի, մտածում է, թե նա աստված է:

-Այսօր Դուք Չինաստանի գրողների միության նախագահի տեղակալն եք: Հնարավոր է զբաղեցնել նման պաշտոն՝ միաժամանակ մերձ չլինել կառավարությանը:

- Դա պատվավոր պաշտոն է, եւ մինչ իմ Նոբելյան մրցանակ ստանալը ոչ ոք չի գանգատվել: Գոյություն ունեն մարդիկ, ովքեր գտնում են, որ այդ մրցանակը պետք է շնորհվի բացառապես նրանց, ովքեր կառավարության հանդեպ ընդդիմության մեջ են: Բայց դա իրո՞ք այդպես է: Մի՞թե Նոբելյան մրցանակը չպետք է տրվի գրականության

համար, գրված ստեղծագործությունների՝ համար:

-Ձեր երկրում, սակայն, կան մարդիկ, որոնց հետապնդում են եւ անգամ ձերբակալում գրածների համար: Անհրաժեշտություն չէ՞ք զգում՝ օգտագործել մրցանակը, փառքն ու հեղինակությունը՝ ձեր կոլեգաների անունից արտահայտվելու համար:

-Ես բացախստորեն եմ հույս արտահայտել առ այն, որ Լյու Սյաոբոն, որքան հնարավոր է, շուտ ազատություն ստանա: Բայց մեկ է, էլի ինձ իսկույն քննադատել եմ, պետք էր դարձյալ ու կրկի՞ն խոսելի մույն բանի մասին...

-Լյուն Նոբելյան մրցանակն ստացավ 2010 թվականին: Եվ իրոք, նրան աջակցելու կանոնավոր ելույթներն ավելի մեծ տպավորություն կթողնեին, քան՝ մեկանգամյա մեկնաբանությունը:

-Կրկնման ծեսերի մասին ինձ հիշեցրել են կուլտուրական հեղափոխության ժամանակ: Եթե ես որոշում եմ ինչ-որ բան ասել՝ ոչ ք չի կարող կասեցնել ինձ, իսկ եթե որոշում եմ չասել, ապա մույնիսկ կոկորդիս դեմ տրված դանակը չի կարող ստիպել խոսել:

-Ձեր մյուս քննադատը Այ Վեյվեյն է՝ Գերմանիայում առանձնապես հայտնի գեղանկարիչը:

-Եվ ի՞նչ ունի նա ասելու իմ մասին:

-Նա էլ է մեղադրում պետության հետ Ձեր մերժության մեջ: Պնդում է, որ նահանջել եք իրականությունից եւ ի գորու չեք ներկայացնելու ժամանակակից Չինաստանը:

-Իսկ շա՞տ նկարիչներ են բուն Չինաստանում մերձեցած պետությանը: Ի՞նչ կասեիք համալսարանների պրոֆեսորների մասին: Ի՞նչ՝ նրանց մասին, ովքեր գրում են պետական թերթերում: Եվ ընդհանրապես. այդ ո՞ր ինտելեկտուալն է, որ կարող է հավակնել

Չինաստանը ներկայացնելուն: Ես որոշակիորեն չեմ հավակնում դրան: Գուցե՞ Այ Վեյվեյը հավակնում է: Եթե կա մեկը, ով կարող է ներկայացնել Չինաստանը, ապա դա նա է, ով մերկ ձեռքերով փորում է ցեխտոտ հողն ու ճանապարհ կառուցում:

-Դուք ոչ միայն կուսակցության անդամ եք, այլև բազմիցս ասել եք, որ պահում եք կոմունիզմի ուտոպիական տեսլականը: Բայց մի՞թե Ձեր գրքերը քայլ առ քայլ ցույց չեն տալիս, որ այդ ուտոպիան միշտ չէ, որ իրականություն է դառնում: Եվ այդ պարագայում հարկ չէ՞ ազատվել այդ ուտոպիայից:

-Այն, ինչ գրել է Մարքսը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում»՝ լի էր մեծագույն գեղեցկությամբ: Սակայն, երբեւում է, շատ դժվար է նման երազանքն իրականություն դարձնել: Այդուհանդերձ, երբ նայում եմ եվրոպացիներին, հատկապես՝ հյուսիսային եվրոպացիներին, նրանց պետություններին ու հասարակություններին, ինձ հարց են տալիս. բարօրության մեջ գտնվող այդ պետություններին կարելի՞ է, արդյոք, պատկերացնել առանց Մարքսի: Մենք Չինաստանում հաճախ ենք ասում, թե մարքսիզմը որոշ իմաստով փրկել է կապիտալիզմը: Որովհետեւ արեւմտյան հասարակությունները, երբեւում է, այդ գաղափարախոսությունից առավելագույն օգուտն են ստացել: Մենք՝ չինացիներս, ռուսները եւ արեւելյան եվրոպացիները, թվում է, սխալ ենք հասկացել մարքսիզմը:

-Գերմանիայում Ձեր ամենաջերմ երկրպագուներից մեկը գրող Մարտին Վալզերն է: Նա Ձեր վեպերն անվանում է «Ճշգրտության, դաժանության եւ գեղեցկության խրախճանքներ»:

-Ես շատ եմ հարգում Մարտին Վալզերին: Կարդացել եմ չինարեն թարգ-

մանված նրա բոլոր գրքերը: Շատ ռեֆլեքսիվ հեղինակ է, ով մեզ բացատրել է գերմանացիների մենթալիտետը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Ինձ համար մեծ պատիվ է, որ նա այդպես գնահատում է իմ ստեղծագործությունները: Եթե ուզում եք իմանալ կարծիքս՝ Նոբելյան մրցանակի ամենաարժանի գերմանացի հեղինակը նա է: Գյունտեր Գրասսը, ում աշխատանքները եւս բարձր են գնահատում, արդեն Նոբելյան մրցանակակիր է: Կարդացել եմ նաեւ Նոբելյան մրցանակակիր Գերտա Մյուլլերի գրքերը չիներեն թարգմանությամբ, ու նրանց մի մասը համարում եմ գերազանց:

-Ի տարբերության Ձեզ՝ Գրասսը սիրում է սկանդալների մեջ մտնել կառավարության հետ:

-Այո, ես հիանում եմ նրանով եւ նման մյուս հեղինակներով՝ հրապարակային բանավեճերի մասնակցելու նրանց կարողության համար: Ես նման կարողություն, իրոք, չունեմ: Ինչպես սկզբում ասացի, չեմ սիրում հանդես գալ նույնիսկ ոչ շատ մեծ բազմության առջեւ:

-Այդ դեպքում Ստոկհոլմում տեղի ունեցած արարողությունը պետք է որ մեծ հաճույք պարգևած չլինի Ձեզ:

-Ժամանակի մեծ մասն անցկացրել եմ ափումս մի փայտե առարկա պահելով:

-Շնորհակալություն Ձեզ, պարոն Մո, հարցազրույցի համար:

*Չրուլեց Բեռնհարդ Չանդը
Անգլերենից ռուսերեն թարգմանեց
Ս.Սիրոտինը՝ NobLit.Ru կայքի համար*

Ռուսերենից թարգմանությունը՝
Նվարդ ԱՎԱԳՅԱՆԻ

Սովորիք հեռանալ

Ծակ գրկախառնությունների ապահովությունից,
Քեզ հետապնդող ձեռքսեղմումներից,
Մի կեղծ երջանկության հիշողությունից,
Հեռացիր՝ անաղմուկ, լուռ, առանց աղաղակի, երկարաշունչ հրաժեշտի:
Հետո ոչինչ մի վերցրու, ոչ հիշատակ, ոչ էլ տաք շոր ճանապարհի:
Վազելով հեռացիր սուտ ապաստաններից, թեկուզ և դրսում կարկուտ
տեղա:

Սովորիք նայել աչքերի խորքը հրաժեշտ տալիս, այլ ոչ թե ներքև կամ
անհունի մեջ:

Բառերիդ ճիշտ իմաստ տուր, մի արժեզրկիր նրանց, խնդրում եմ:
Սովորիք նայել ավազի ժամացույցին, տեսնել, որ ժամանակը վերջացել է:
Գրկախառնություններին, նամակներին, նվիրագրություններին վերջ՝
երբևէ կհանդիպենք, սեր իմ

(գիշերները բոլոր ու երգերը՝ ձերը չեն լինելու այլևս, հաշտվիր այդ
մտքի հետ):

Բավ է Ապագան սիրես, երբ ունեցածդ միայն Ներկան է:
Հեռացիր այնտեղից, ուր չգիտես ինչու ես գտնվում, ուր չգիտեն՝ ինչու եմ
պահում քեզ:

Երգերից քո սիրած, քայլած վայրերից բաժանվիր, գնա:
Երևակայությունդ քո կարծածիդ չափ սահմանափակ չէ:
Դու կարող ես բոլորովին նոր պատմություններ կերտել երկինք ու աղով,
Որ աշուն հիշեցնեն մի քիչ, շատ ամառ ու այն ամեզր Գարունը:
Հեռացիր այնտեղից, ուր չես ստանում քեզ անհրաժեշտը,

Անհամապատասխանից, միջակից, քչից,
Պահանջիր, որ տվածդ հետ ստանաս, դու պարտք չես նրանց:
Հարգել սովորիք դու քո սերը, քո ժամանակը, ու սիրտը քո,
Ասածներին դու մի հավատա, սերն անսպառ չի, այն վերջանում է:
Սիրտը կոտրվում է, մի օր կփորձես աշխատեցնել այն, բայց չի աշխատի:
Մի ներիք նրանց, ովքեր զոջման արցունքներով ոտքերդ չլվացին:
Հասկացիր, երկրորդ հնարավորությունները վախկոտների համար են,
երրորդները՝ ծիծաղելիների:

Մի վախեցիր բառ-նշանակություն համարժեքությունից,
հարաբերությունը հարաբերություն անվանիր,
խաբեությունը՝ խաբեություն:

Կշտամբիր ինքդ քեզ, որ երբեմն նստում ու մանկան պես գանգատվում ես,
ու հետո նրան սառնաշաքար տալիս, որ ծծկերը հանկարծ չնեղսրտի:
Եվ

Սովորիք հեռանալ այնտեղից, ուր իրականում երբեք գոյություն չես ունեցել:
Հեռացիր, գնա, նույնիսկ թե թվա, ասես արգանդիցդ երեխայիդ են պոկում:
Հեռացիր այն ամենից, ինչ ճշմարիտ ես կարծել, միգուց երբևէ հասնես
դրանց:

Միտո հրավեր

Եկ ինձ մոտ: Կրակ չեմ ես:
Գետերն են կրակներ մարում:
Հորդ անձրևներն են խեղդում նրանց,
Ու քամիները հալածում:
Ես կրակ չեմ, չէ:
Եկ ինձ մոտ: Քամի չեմ ես:
Սարերն են կանգնեցնում նրանց:
Կիզիչ արևներն են լռեցնում,
Ու ջրհեղեղները սրբում-տանում:
Քամի չեմ ես, չէ:
Եկ ինձ մոտ: Օվկիանոս էլ չեմ ես:
Օվկիանոսը Տրիտոններն են սանձում:
Ջեփյուռներն են մեղմում նրանց,
Ծովահարսերը հմայում:
Օվկիանոս չեմ, չէ:
Եկ ինձ մոտ: Նավակայան էլ չեմ:
Անդորր չեմ խոստանում ես քեզ,
Մեղմանուշ գիշերահավասարներ,
Ծղնիների ջերմություն նույնպես:
Նավակայան չեմ, չէ:
Ես... հոգնած մի ճամփորդ եմ լոկ...
Խոնջաբեկ թափառական,
Չիթենու արմատին թեք ընկած,
Ծղրիղների երգելն եմ լսում:
Թե կուգես... միասին լսենք:

Թարգմանությունները հունարենից՝
Շամրիկ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
Granish.org

Երկինք-մարդ կապը հնագույն հարաբերություններից է: Ըստ գոյություն ունեցող գիտական աշխատությունների և առկա նյութերի՝ այն նաև թերևս չին ժողովրդի՝ իրերի հարաբերության հասկացության կամ ըմբռնման հնագույն վկայությունն ու ձևն էր: Հին չինական մտածողության մեջ երկինք-մարդ հարաբերությունը շատ բարդ էր, քանի որ կապված էր փիլիսոփայական, կրոնական և ինտելեկտուալ գաղափարների հետ: Կրոնական տեսանկյունից վերաբերում էր Երկինք-Մարդ ներդաշնակությանն ու ճակատագրին (Մին), իսկ վերջինը միաժամանակ ներառում էր Աստծո կամքը (*Թիան Մին*) և ճակատագիրը (Մին Յուն): Ինտելեկտուալ տեսանկյունից այն վերաբերում էր Երկինք-Մարդ տարբերությանն ու Երկինք-մարդ օրենքին, ինչպես նաև Վայելչություն (պատշաճություն) (Յի), Կախվածություն (Ին), Ուժ (Լի) և այլ գաղափարներին:

Կրոնական մոտեցումը երկինք-մարդ հարաբերությանը


Կրոնում երկինք-մարդ հարաբերությունն ի սկզբանե Աստծո և մարդու հարաբերություն էր, որի առաջին նշույլները հայտնաբերվել են դեռևս Լյանջու մշակություն (մոտ 5000 տարի առաջ): Մեծ թվով նեֆրիտե առարկաներ, ինչպիսիք են, օրինակ, *Յու Բին* և *Յու Ցունը*, հայտնաբերվել են Լյանջու մշակույթի ավերակներից: Ինչպես հուշում է «Ջոու դինաստիայի ծեսերից» («Ջոու Լի») մի տող, «Սպիտակ նեֆրիտը (Յու Բի)նախատեսված է Երկինքը երկրպագելու, իսկ դեղին նեֆրիտը՝ («Յու Ցուն»)՝ Երկիրը երկրպագելու համար», դրանք օգտագործվում էին երկնքի ու Երկրի երկրպագության հա-

ՈՒ ՉՈՒՆ

/Չինաստան/

ԵՐԿՆՔԻ ՈՒ ՄԱՐԴՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԿՐՈՆԱԿԱՆ ՈՒ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽՈՐԱՊԱՏԿԵՐԸ

/Հատված «ՉԻՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՔ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ» գրքից/



մար: Ջան Գուանջին նշում է, որ Յու Յունի տեսողական պատկերը կլոր ու քառակուսի է երևում: Հատկանշական է, որ կլորն ու քառակուսին իրար կապելով, *Յու Յունը* խորհրդանշորեն երկիրն ասոցացնում է երկնքի հետ¹: *Յու Յունի* խորհրդանշական իմաստը կարող է դրսևորվել չինական տառանշաններով: Օրինակ, Գուո Մորուոն դիտարկում է, որ շենը (甲) պատկերագրական տեսանկյունից նման է թելի, որը միացնում է երկու բան²: Յան Սիանկույը հետազայում նշում է, որ այդ երկուսն իրականում երկինքն ու երկիրն են, և որ Շենն այստեղ իրականացնում է միջնորդի գործառույթներ³: Ըստ էության, շեն (甲) տառանշանը ենթադրաբար ստեղծվել է՝ հիմնվելով *Յու Յունի* ձևի վրա: Երկինք-երկիր հարաբերությունը մեծապես հենվում է երկինք-երկիր ներդաշնակության գաղափարի վրա:

Քաղաքակիրթ հասարակության մեջ երկինք-մարդ ներդաշնակության գաղափարը ներկայացված է թագավորության աստվածային իրավունքի տեսությամբ: Օրինակ, «Փաստաթղթերի գիրքը» («Շան Շու») արձանագրում է երկնքի պատիժը մարդու նկատմամբ. «Յուուհուն անարգեց Հինգ տարրերը և հեռացավ Սիա, Շան և Ջուու դինաստաների օրացույցից: Երկինքը նրան զրկեց կյանքից» («Ցի արքայի դիմումը Գանին»): «Սիան հանցանք գործեց: Նա վախեցավ երկնքից և ուղղեց իր սխալը («Ցի արքայի դիմումը»): «Հիմա պատրաստվում ենք ճանապարհ ընկնել: Մենք պիտի հարգենք Երկինքն ու

ընդունենք նրա պատիժը: («Վու արքայի դիմումը»):

Երկինք-մարդ ներդաշնակությունը մեծ ներգործություն ուներ չինացի փիլիսոփաների վրա: Ամենաներկայացուցչականը Երկինք-մարդ պատասխանի (արձագանք), Երկինք-մարդ կապի և Երկինք-մարդ կապակցվածության տեսություններն են, որոնք առաջադրել է Հան դինաստիայի փիլիսոփա Դուոն Ջունշուն: Ըստ Դուոն Ջունշուի՝ «Այն, ինչ մարդուն մարդ էր դարձնում, Երկինքն էր: Երկինքն էր մարդ արարածի նախահայրը: Դա է պատճառը, որ մարդը նման է երկնքին: Մարդու մարմինը ձևավորվեց՝ հետևելով Երկնքի նախասահմանմանը, մարդու արյունը դարձավ բարեգործ (բարյացակամ)՝ հնազանդվելով Երկնքի կամքին, իսկ մարդկային առաքինությունը բարեփոխվեց՝ ձևափոխելով Երկնքի օրենքը: Մարդու նախապատվություններն ու հակակրանքներն էին ենթադրում Երկնքի տաքությունը կամ ցուրտը, մարդու ուրախությունը կամ բարկությունը ցույց էին տալիս Երկնքի ձմեռը կամ ամառը, իսկ մարդկային բախտը նյութականացնում էր Երկնքի չորս եղանակները: Մարդկային ուրախությունը, բարկությունը, վիշտն ու երջանկությունը համապատասխանում էին գարնանը, աշնանը, ձմռանն ու ամռանը: Ուրախությունը գարնան խորհրդանիշն էր, բարկությունը՝ աշնան, երջանկությունը ամռան խորհրդանիշն էր, վիշտը՝ ձմռան»: Մարդը Երկնքի լրացուցիչ պարագան էր (գործակից)

¹ Ջան Գուանցի. «Չինաստանի բրոնզեդարը», հատոր 2, Պեկին, Էս Դի Էքս, միացյալ հրատարակչական ընկերություն, 1990թ., էջ 71:

² Գուո Մորուո. «Գուշակության ոսկորի փորագրությունների ուսումնասիրություն. երկնային ցողունների, երկրային ճյուղերի բացատրություններ», մեջբերված է «Հին չինական տառանշանների բացատրություններից», Հատոր 10, Շանհայի կրթական հրատարակչություն, 2004, էջ 1148:

³ Յան Սյանկույ. «Հին չինական հասարակության և մտքի ուսումնասիրություն», հատոր 1, Շանհայի ժողովրդական հրատարակչություն, 1962, էջ 162:

(«Գարնան և ամռան տարեգրքերի առատ ցողը»[Չուն Յիու Ֆան Լու], «Երկինքը և մարդը»):

Երկինքը ստեղծեց մարդուն՝ հիմնվելով տարվա թվերի վրա: Մարդու մարմնում կար 366 փոքր և 12 մեծ կոնդիլ, որոնք խորհրդանշում են տարվա օրերն ու ամիսները: Կար հինգ ներքին օրգան, որոնք համապատասխանում են Հինգ տարրերին, և չորս վերջույթ, որոնք խորհրդանշում են տարվա չորս եղանակները: Տեսնելու ունակությունն ու կուրությունը խորհրդանշում էին օրն ու գիշերը, կարծրությունն ու փափկությունը՝ զարուսն ու ամառը, վիշտն ու ուրախությունը՝ *Ինն* ու *Յանը*: Մարդու ծրագիրն ու նկատառումները նման էին *Դու*-չափմանը, իսկ գործողությունն ու բարոյականությունը նմանակում էին Երկինքն ու Երկիրը: («Երկինք-մարդ մերձակցություն»):

Անկասկած, Դուն Ջունշուի տեսակետներն անմիտ էին թվում: Հետագայում Դունի տեսություններն արժանացան Ուան Չունի կոշտ քննադատությանը: «Քննադատական էսսեներ» (Լուն Հեն) գրքում Ուան Չունը հերքում էր. «Կոնֆուցիոսն ասում էր՝ Երկինքն ու Երկիրը գիտակցաբար ստեղծեցին մարդուն: Սա անհիմն է հնչում: Օդի հոսքը երկնքում ու Երկրի վրա հավաքվեց, ու ծնվեց մարդը: Տղամարդ ու կին բավարարեցին իրենց տարփանքը, ու ծնվեց երեխան» («Արարածների օրենքը»): Ապա նա հայտարարեց, որ մարդն իր գործողություններով չի կարող ազդել երկնքի վրա. Երկինքը՝ նույնպես («Անձրևի աղոթքի մասին»):

Հարկ է նշել, որ կրոնական երկինք-մարդ հարաբերություններում Բախտի գաղափարն իսկապես կարևոր էր: Մասնավորապես, Բախտը ներառում էր Աստծո կամքն ու ճակատագիրը, ու

երկուսն էլ վերաբերում էին երկինք-մարդ հարաբերությանը:

Դժվար չէր հասկանալ երկինք-մարդ հարաբերությունը Աստծո կամքի գաղափարում, ինչն էական էր կրոնական ճակատագրապաշտության (ֆատալիզմ) մեջ: Ջոու դինաստիայում, օրինակ, կրոնական ճակատագրապաշտության էությունը Տալ-ստանալ հարաբերությունն է երկնքի ու մարդու միջև, ինչպես ենթադրում էր «Փաստաթղթերի գրքից» («Շան Շու») մեջբերումը. «Հուսով եմ՝ Թագավորն ու նրա քաղաքացիներն ընդմիջտ համձն առան Աստծո կամքը» («Ջաո դքսի խնդրագիրը Թագավորին»): Բացի այդ, Ջոու դինաստիայում մարդիկ զարգացրին Աստծո կամքին հնազանդվելու գաղափարը. «Հիմա, երբ կա Աստծո կամք, մենք չպետք է արհամարհենք այն» (Իմաստուններ): Ավելի ուշ այս գաղափարները տարածվեցին կոնֆուցիականների շրջանում: Օրինակ, Կոնֆուցիոսի կարծիքով՝ ազնվականը պիտի վախենա ու ճանաչի Աստծո կամքը. «Կար երեք բան, որից ազնվականը պիտի վախենար: Առաջինը Աստծո կամքն էր: Հասարակ մարդը վախի նշույլ ցույց չէր տալիս, որովհետև գաղափար չուներ Աստծո կամքի մասին» («Անալեկտներ», Չի Շի): Կոնֆուցիոսը մեկնաբանում էր նաև իրեն. «Հիսուն տարեկանում ես հասկացա Աստծո կամքը» («Ուեյ Ջեն»): «Ոսկե միջինի դոկտրինում» (Ջուն Յուն) Աստծո կամքն առնչվում է մարդկային էության, բարոյականության ու կրթության հետ. «Հարգել մարդկային էությունը նշանակում էր Աստծո կամք, հետևել մարդկային էությանը նշանակում էր օրենք, իսկ զարգացնել մարդկային էությունը նշանակում էր կրթություն»: Թեև երկինք-մարդ հարաբերության մասին այս գա-

ղափարներն առեղծվածային էին թվում, դրանք լայնորեն ընդունված էին կոնֆուցիականների կողմից:

Այժմ քննարկենք երկինք-մարդ հարաբերությունը ճակատագրի գաղափարում, ինչը նույնպես առնչվում է մարդու և արտաքին միջավայրի կամ աշխարհի հարաբերության հետ: Հնագույն ժամանակներում մարդիկ հասկանում կամ վերահսկում էին իրենց ճակատագիրը գուշակության միջոցով: Ըստ «Փոփոխության գրքի մեկնաբանությունների», օրինակ, գուշակության երկու խորհրդանիշերը համապատասխանում էին մարդու կյանքի աղետին ու օրհնանքին. այստեղից ի հայտ է եկել ճակատագրի գաղափարը:

Կոնֆուցիոսը բարձր էր գնահատում ճակատագրի գաղափարը. «Կյանքն ու մահը վճռված են ճակատագրով. հաջողությունն ու պատիվը՝ Երկնքի կողմից» («Անալեկտներ», Յան Յուան): «Օրենքի պրակտիկան հենվում էր ճակատագրի վրա. օրենքի ոչնչացումը՝ նույնպես» («Անալեկտներ», Սիան Ուեն):

Այստեղ Կոնֆուցիոսը պաշտպանում էր այն տեսակետը, որ մարդիկ չեն կարող սեփական ջանքով փոխել իրերի վիճակը, ուստի դրանք վստահում են ճակատագրին: Նույն կերպ նաև Մենցիուսը հաստատում էր. «Անձնանում էր այն, ինչ իրենից չէին խնդրում. ճակատագիրը՝ նույնպես. անձը եկավ, թեև նրա կարիքը չկար. ճակատագիրը՝ նույնպես» (Մենցիուս, «Ուան Ջան II»): «Քիմքն ուզում էր ճաշակել, աչքերը՝ պատկերացնել, ականջները՝ լսել, քիթը՝ զգալ, իսկ վերջույթները՝ վայելել: Այս ամենը դուր էր գալիս մարդուն, բայց վճռողը ճակատագիրն էր: Ուստի, ազնվականը հազվադեպ էր գերազանահատում մարդու էությունը» («Չին Սին II»):

Այստեղ Մենցիուսը մատնանշում էր, որ հարմարավետություն սիրելը հատուկ է մարդու էությանը, բայց մարդու ճակատագրից էր կախված՝ ձեռք կբերի այն, թե ոչ: Կոնֆուցիոսի ու Մենցիուսի համար ճակատագիրն Աստծո կամքի մի տեսակ էր:

Թաոիստ Չուան Ցուան նույնպես քննարկում էր ճակատագիրը. «Կյանք թե մահ, չքավորություն թե հարստություն, առաքինություն թե նենգություն, փառաբանություն թե զրպարտություն, քաղց թե հագեցածություն, ցուրտ թե տաք՝ բոլորը փոփոխության արդյունք են ու ճակատագրի արտահայտություն (Չուան Ցու. «Մարդու հոգևոր աշխարհը»):

Չուան Ցուի կարծիքով՝ մարդը ցուցադրում էր գովասանքի արժանի վարք, եթե հանգիստ ընդունում էր նախասահմանված կարգը («Հասարակության վարքը»): Չուան Ցուան նշում էր, որ մարդիկ չեն կարող իրենց մասին մոռանալ մինչև մահ՝ սկսած մարմինների ձևավորման պահից: Անկախ նրանից՝ մարդը հակադրվում թե հարմարվում էր արտաքին միջավայրին, նա գործում էր արագ, քառատրոփ վարգող ձիու պես: Ցավոք, ոչինչ չէր կարող խանգարել նրանց: Մարդիկ ողջ կյանքի ընթացքում հանդուրժում էին դժբախտությունը՝ չիմանալով իրենց ճակատագրի մասին: Թախծալի՞ է հնչում («Իրերի նմանության մասին»): Կոնֆուցիոսի և Մենցիուսի համեմատ՝ Չուան Ցուի տեսակետն ակնհայտորեն ավելի ճակատագրապաշտական էր:

Ճակատագրապաշտական տեսակետը հսկայական ազդեցություն ունեցավ Հան դինաստիայի փիլիսոփաների վրա: Նույնիսկ Ուան Չուանը՝ քննադատական ոգով մեծ փիլիսոփան, հզոր ճակատագրապաշտական մոտեցումը սկսեց: Ուան Չուանը դիտարկում է.

«Մարդու կյանքը կամ մահը, չքավորությունը կամ հարստությունը, ամենայն ինչ վճռվում է ճակատագրով» («Քննադատական էսսեներ», «Բախտի ու հաջողության մասին»): «Մարդուն կժպտա հաջողությունը, թե ոչ, կախված է նրանից, թե արդյոք հետևել է ճատագրին, թե չի հնազանդվել: Եթե հանդիպում էր հաջողության, երջանիկ կյանք էր վարում, եթե հանդիպում էր դժբախտության, ամեն ինչ ավարտվում էր թշվառությամբ» («Կյանք»):

Ուան Չունն այստեղ քննարկում էր անհրաժեշտությունն ու հավանականությունը. սակայն նրան չհաջողվեց մանրամասն մշակել դրանց հարաբերությունը: Արդյունքում Ուան Չունը կրճատեց ճակատագրի գաղափարը՝ հասցնելով հոգեկերտվածքի ու ֆրենոլոգիայի ոլորտ, և հանգեց անհիմն եզրակացության. «Մարդու ճակատագիրը որոշվում է Երկնքի կողմից և ներկայացվում նաև մարդու արտաքին տեսքում. սա կոչվում էր ֆրենոլոգիա» («Ոսկորի ձևը»): Արդարացի լինելու համար ասենք, որ ճակատագրի գաղափարի Ուան Չունի ընկալումն ի սկզբանե հիմնված էր «Յետևելով երկնային օրենքին» սկզբունքի վրա: Սակայն պատմական սահմանափակման պատճառով նա ընկավ խորհրդապաշտության ծուղակը:

Ամփոփելով կարելի է ասել, որ ճակատագրի հարցն ավանդական հիմնախնդիր էր Չինաստանում⁴:

Ինտելեկտուալ մոտեցումը երկինք-մարդ հարաբերությանը

Ինտելեկտուալ կամ բնական մոտեցումը երկինք-մարդ հարաբերությանը կարելի է ուսումնասիրել երկու տեսանկյունից:

Առաջինը հարգանքն ու վստահությունն է օբյեկտիվ օրենքների հանդեպ, որոնք ամփոփված են երկու կարևոր գաղափարում՝ Վայելչություն կամ պատշաճություն (Յի) և Անկախություն (Յին):

Պատշաճության (Յի) գաղափարը զարգացել է գյուղատնտեսական գործունեությունից և բաղկացած է երկու մասից՝ պատշաճություն ժամանակի մեջ(ժամանակային պատշաճություն) և պատշաճություն տեղի մեջ (տեղային պատշաճություն): Սիա և Շան դինաստիաներում ժամանակի մեջ պատշաճություն և տեղի մեջ պատշաճություն գաղափարները հիշատակվել են այնպիսի գրքերում, ինչպիսիք են «Օրացուցագրքեր Սիա դինաստիայում» («Սիա Սյաո Ջեն»), «Յաոյի կանոնը» և «Փաստաթղթերի գրքի»«Տուրք Յուին» («Շան Շու») գլուխը, «Շեն Սինը» և «Գուն Լիուն» «Դասական պոեզիայից»: Ջոու դինաստիայում պատշաճության գաղափարը լիարժեք զարգացավ պրակտիկ կիրառման զուգահեռ. «Պատշաճությունը կիրառվում է՝ 12 համաստեղություններ տարբերակելու, մարդու տան հաջողությունը կամ դժբախտությունը գուշակելու, մարդկանց հարստացնելու, թռչնին ու գազանին սահմանափակելու, խոտ ու ծառ մշակելու և գյուղատնտեսությանը բարիք

⁴ Անհայտորեն, ճակատագրի վրա հենվելը տարբերվում էր արևմտյան գաղափարից, որ հենվում էր Աստծո վրա, և «ինքնաօգնության» գաղափարից: Ավելի կոնկրետ՝ ճակատագրի մասին չինական տեսակետը մոտ էր «Մարդը ենթադրում է, Աստված՝ վճռում» և «Մարդն անում է առավելագույնը, իսկ մնացյալը թողնում է Աստծո կամքին» գաղափարներին, որոնք ենթադրում էին մարդու ունակությունը և ոչ թե ճակատագրին ենթարկվելը:

բերելու համար» («Ջոու դինաստիայի ծեսեր», «Երկրի պաշտոնյան», «Ղեկավար»): Գարնան և աշնան ժամանակահատվածում պատշաճության գաղափարը լիարժեքորեն զարգացավ և լրամշակվեց: «Ջոու դինաստիայի ծեսերում» և «Գուան Ցի» գրքում տեղային պատշաճությունը նույնպես մեկնաբանվել է: «Գուան Ցիում» պատշաճություն տեղի մեջ գաղափարը քննարկվում էր կարգի և տարբերության գաղափարների հետ. «Բոլոր բույսերն ապրում են 12 ամիս, ապա քայքայվում են» («Երկրի վրա»): Որոշ գաղափարներ ի հայտ են եկել պատշաճություն ժամանակի մեջ գաղափարից. դրանք են՝ ըստ ժամանակի, համապատասխանել ժամանակին և հաշվի առնել իրավիճակը. «Թագավորը պետք է հաշվի առնի իրավիճակը և գործի ժամանակի համաձայն, ներդաշնակեցնի Երկինքն ու մարդուն ու հարգի բնական օրենքը» («Նահանգների տրամասություններ»), «Ջոու II-ի տրամասությունը»): Այս գաղափարները ցույց էին տալիս բնական օրենքներին հետևելու կարևորությունը: Ձևավորվեց նաև կախվածության (Յի) գաղափարը: Պատշաճությունը (Յի) և կախվածությունը (Յին) արտահայտում էին նման իմաստներ: Վերցնենք, օրինակ, «Երկինքն ու Երկիրն օժտված են յուրօրինակությամբ» տողը (Ցուո Ջուան, «Ջաո դքսի իշխանության 25-րդ տարին»): Երկրի յուրօրինակությանը հետևելը ենթադրում էր տեղային պատշաճության գաղափարի անհրաժեշտությունը: Կախվածության գաղափարը (Յին), սակայն, ավելի մեծ շեշտ էր դնում բնական օրենքին ենթարկվելու վրա. «Մենք պետք է ընդունենք բնական աղետը» («Նահանգների տրամասություններ»), «Ցուե II-ի տրամասությունը»): «Կախում ունենալ արտաքին միջավայրից» («Գուան Ցի»,

«Տնտեսական ծրագիր»): Երկինք-երկիր ներդաշնակ հարաբերությունը պարզ էր և ուղղակի: Գարնան և աշնան ժամանակահատվածի ավարտին պատշաճություն (Յի) գաղափարն այլևս չէր սահմանափակվում Երկինք-մարդ հարաբերությամբ: Ավելին, այն ընդլայնվում է՝ հասնելով ռազմական (Սուե Ցուեի կողմից՝ պատերազմում), կրթական (Կոնֆուցիոսի կողմից՝ կրթության ոլորտում), քաղաքական (լեգալիզմի քաղաքական տեսություն), բժշկական (հիվանդության բուժումը «Դեղին կայսեր ներքին կանոնում») և փիլիսոփայական (օգտագործումը «Փոփոխության գրքի մեկնաբանություններում») ոլորտներ: Հետագայում Պատշաճության գաղափարը (Յին) կարևոր դեր խաղաց չինական ինտելեկտուալ և գաղափարական շրջանակներում:

Երկրորդը մարդու նախածեռնողական ոգու արժեքն էր:

«Փաստաթղթերի գրքում» («Շան Շու») հանդիպում ենք հետևյալ գրառմանը. «Մարդը կարող է իր վրա վերցնել Երկնքի խնդիրը» («Գաո Թաոյի սխեման»): Սուե Ցին առաջին փիլիսոփան էր, որը հստակ լուսաբանեց մարդու նախածեռնողական ոգին: Նրա կարծիքով՝ երկինք-մարդ հարաբերությունը երկինք-մարդ տարբերությունն էր. «Մարդը, որը կարող է պարզաբանել Երկնքի և մարդու տարբերությունը, կարող է կոչվել իմաստուն» («Սուե Ցի», «Քննախոսություն Երկնքի մասին»): Այստեղ տարբերությունը վերաբերում էր Երկնքի ու մարդու պարտականություններին: Մարդու պարտականություն ասելով Սուե Ցին նկատի ուներ հարգանք օբյեկտիվ օրենքի կամ կանոնի հանդեպ. «Եթե մարդը քրտնաջան աշխատի ու կրճատի ծախսերը, Երկինքը չի աղքատացնի նրան. եթե

մարդը պահուստ հավաքի ու հարգի տարվա եղանակը, Երկինքը հիվանդություն չի ուղարկի նրան. Եթե մարդը հետևի օրենքին ու խուսափի շեղումից, Երկինքն աղետ չի բերի նրան... Եթե մարդը թողնի գյուղատնտեսությունն ու ընկնի շքեղության ետևից, Երկինքը չի հարստացնի նրան. Եթե մարդը տառապի պակասությունից ու խորշի գյուղատնտեսական աշխատանքից, Երկինքն առողջություն չի պարգևի նրան. Եթե մարդը խախտի օրենքը ու սխալ թույլ տա, Երկինքը հարստություն չի բերի նրան» («Քննախոսություն Երկնքի մասին»):

Միևնույն ժամանակ, Սուև Ցիև ընդգծում էր, որ մարդը պետք է նախածեռնողական ոգի դրսևորի՝ միաժամանակ հարգելով բնական օրենքը, ինչը նկատելի է ջերմ դիտարկումներից. «Մարդը պետք է ոչ թե երկրպագի Երկինքը, այլ տիրապետի բնական օրենքին. պիտի օգտագործի բնական օրենքը, և ոչ թե հիանա Երկնքով. պիտի վերահսկի բնական օրենքը, ու ոչ թե հույսը դնի Երկնքի վրա: Պիտի օգտագործի իր տաղանդը՝ գյուղատնտեսությունն ընդլայնելու համար, ևչակնկալի, որ այն ինքնիրեն կաճի. պիտի հսկի ամեն ինչ, որ պահպանի դրանք, և ոչ թե կորստից հետո կարոտի. պիտի իմանա բույսերի աճի օրենքը, և ոչ թե հուսա, որ դրանք կաճեն: Երբեք չպիտի հասկանա իրերի օրենքը և օգտագործի այն, եթե ջանք չի գործադրում ու չի երկրպագում Երկինքը» («Քննախոսություն Երկնքի մասին»):

Այստեղ Սուև Ցիև մեջբերում էր մարդկային նախածեռնողական ոգու վեց տեսակ: Դրական ոգով տոգորված Սուև Ցիի տողերը, մասնավորապես՝ «վերահսկել և օգտագործել բնական օրենքը» հայտնի պնդումը խոր ազդեցություն ունեցավ հետագա շրջանի

փիլիսոփաների վրա: Օրինակ, Լիու Յուսին Սուև Ցիի տեսությունը զարգացրեց ու վերածեց Երկինք-մարդ օրենքի:

Հարկ է նշել, որ մարդու նախածեռնողական ոգու արժեքը կապված էր ինտելեկտուալ գործունեության հետ, որն արտահայտվում էր Ուժի (Lh) գաղափարով: Ուժ (Lh) գաղափարը հակադրում էր Բախտի գաղափարին ու հերքում էր ճակատագրապաշտությունը: Իլրումն դրա, Ուժի գաղափարը ժխտում էր պատշաճությունը տեղում և գեոմանտիկ միտքը և հակադրվում պատշաճության գաղափարին (Ցի): Ինչ-որ առումով, մարդու նախածեռնողական ոգի և ուժ (Lh) գաղափարները մեծ առաջընթաց ունեցան, երբ դրվեցին ինտելեկտուալ, և ոչ թե գաղափարական գործունեության համատեքստում:

Ըստ էության, մարդու դերի արժեքն ինտելեկտուալ գործունեության մեջ գնահատվում էր դեռևս Ցիև և Հան դիմաստիաներում: «Ֆան Շենջիի գրքում» նկարագրված էր ակոսներ փորելու մեթոդը («Ցու Ջուև Ֆա»): Ուեյ, Չիև, Հարավային և Հյուսիսային դիմաստիաներում Ուժի և Բախտի բախումն ուժգնացավ ալքիմիայի զարգացման և թաոսիստական տեսության վերելքին զուգահեռ: «Բաո Փու Ցի» գրքում Չիև դիմաստիայի դաոսիստ Գե Հուևը պնդում էր. «Իմ բախտը վճռում են ես, ոչ թե Երկինքը: Երբ էլիքսիրը պատրաստ լինի, ես կանմահանամ» (Հատոր 1, «Հուևն Բայ», մեջբերված է «Փորագրություններ գուշակության ոսկորի վրա»): Անկասկած, Գե Հուևի տեսակետը հռետեսական աշխարհայացք էր և մարտահրավեր էր նետում բախտի ավանդական գաղափարին:

Սուև և Յուևն դիմաստիաներում, այգեգործության տեխնոլոգիայի զարգացմանը զուգահեռ, մարդիկ ծառեր

տնկելու ավելի մեծ ընտրություն ունե-
ին և, այսպիսով, սկսեցին ավելի խոր
ընկալել մարդկային նախաձեռնողա-
կան ոգին և ուժը: Օրինակ, «Մարդու
ուժը նպաստում է բույսի աճին»(Հան
Յանջի, «Գրառումներ նարնջի մա-
սին»): «Մարդկային ուժը ստեղծեց
գլուխգործոց, որը Երկնքի իշխանու-
թյունից անդին է» (Ուան Գուան, «Քաջ-
վարդը Յանջոուում»):

Մարդկային ուժի ընկալումն ազդե-
ցություն ունեցավ գյուղատնտեսական
գործունեության վրա: «Գյուղատնտե-
սության առանցքային կետեր» («Նուր
Սան Չի Յաո») գրքում գեոմանտիկ
միտքը հերքվեց: Մին և Ցին դինաստի-
աներում մարդկային ուժը շարունակեց
կարևորվել: Ամենաբնութագրական
տեսակետի հեղինակը Լյու Կուեն էր,
որն ասում էր. «Կասկած չկա, որ մարդը
կարող է նվաճել բնությունը» («Ընթեր-
ցելու ընթացքում արված գրառումներ»
[Շեն Ին Յու Ջայ], Հատոր 1): Լու Կյունի
դիտարկմամբ՝ ձմռանն օդի հոսքը
փակվում էր, բայց հին այգում ծաղիկ-
ները ծաղկում են ու պտուղ տալիս:
Լյու Կունի տեսակետն այն ժամանակ
տարածված էր, և այն կիսում էին բազ-
մաթիվ մտածողներ. «Բույսը հարմար-
վում է հողին կամ չի համաձայնում
դրա հետ: Մարդն ուժ է բանեցնում կամ
թողնում է այն: Մարդը կարող է նվաճել
Երկինքը, եթե ուժ կիրառի. հողը՝ նույն-
պես (Ցիու Ջուն. «Լրացումներ մեծ ուս-
ման մեկնաբանությունների», Հատոր
14):

Առաջինը ժամանակը իմանալն է,
երկրորդը՝ հողը իմանալը: Նախ հաս-
կանալով պատշաճություն գաղափա-

րը, ապա օգտվելով պատեհ առիթնե-
րից և խուսափելով անբարենպաստ
պայմաններից՝ կարող ես ուժով հաղ-
թել Երկնքին (Մա Յիլուն, «Գիտելիք
գյուղատնտեսության մասին»):

Եթե բույսը հարմարվի հողին, այն չի
փոփոխվի(Սու Գուանցի, «Գյուղատն-
տեսական գործունեության հանրագի-
տարան», «Գյուղատնտեսությունը՝ որ-
պես հիմք»):

Եթե մարդը հաշվի առնի չորու-
թյունն ու խոնավորությունը և խուսա-
փի ցրտից ու տաքից, ծաղիկները
հրաշալի կաճեն: Նույնիսկ տարբեր
կլիմայով հեռու-հեռավոր տարածքնե-
րում մարդկային ուժը կարող է փոխել
ծաղկի կենսական սովորությունը (Չեն
Հաոցի, «Ծաղիկներ աճեցնելու մա-
սին»):

Ակնհայտ է, որ մարդկային ուժի
ավելի խոր ընկալումն առաջացել է այ-
գեգործության և գյուղատնտեսության
առաջխաղացումից, և հաստատում էր,
որ ինտելեկտուալ առաջընթացը
նպաստում է գաղափարախոսական
առաջընթացին⁵:

Կարճ ասած, ուժի գաղափարն ու
դրա զարգացումը մեզ տրամադրում են
մոդել, որով կարող ենք հետազոտել,
թե փիլիսոփայությունն ինչպես է ներ-
գործում գիտության վրա, իսկ գիտու-
թյունն ինչպես է խորացնում փիլիսո-
փայությունը: Այս երևույթը կարող ենք
կոչել գիտական-փիլիսոփայական
միտք:

Անգլերենից թարգմանությունը՝
Աստղիկ ԱՄԱԲԵԿՅԱՆԻ

⁵ Բացի այդ, գաղափարախոսական գործունեությունը, որը հիմնված է ինտելեկտուալ գործունեու-
թյան վրա, բնութագրվում էր իրականությամբ և ամբողջությամբ, ուստի ազդում էր մտածողների և
փիլիսոփաների վրա: Օրինակ, Ցին դինաստիայի գիտնական Ջան Սուչենը նույնպես այն կարծիքի
էր, որ մարդը կարող է նվաճել բնությունը: (Տես «Տեսություն պատմության մասին», «Թիան Յու»):
Նրա տեսակետն, անկասկած, ինտելեկտուալ գործունեության ազդեցության տակ էր:

Literary translations

Paruyr SEVAK



YOUR NAME

I hate your name as much
As you may hate my hands
Which fondled you once.

I hate your name
Being stuck in my tongue
Like silverberry's thorn.

And why don't you ask me, either
What color has the name of mine?
I hate even that name's color.

.....

... And if I had a girl one day
She would be called by your sweet name.

I hate your name...

A LETTER

I don't know
If she's writing to me
Or I'm writing to my dear friend.
"I wonder to see you...
May be in winter or in summer
Either in autumn or just in spring..."

Գեղարմ Աշուն 2018

And where is the fifth season of the year
Which would be deemed to ours? "
Is she writing to me
Or I'm writing to my dear friend -
I don't know even myself.
"Have you noticed that in winter
It's impossible to go through the place,
You've crossed in summer while walking in forest,
Because twigs and sprigs close your way
Writhing in hard cold and
Bending lowly under snowfall,
They scratch your face,
Threaten your eyes
In the twilight and dusk.
I was walking in the twilight
So distracted, may be
Lost in thoughts
And I understood
The following:
When we are excited,
We hide our hands,
When we are unsure,
We hide our legs.
And when do people hide their face?
Do they hide it from the shame?
(I am not ashamed of my love).
Maybe they hide it from the missing.
(I want to see you standing before me).
Or they hide it from the scratching twigs,
Maybe from the cold bending me lowly
And making to huddle myself up
(I want rolling up and taking your arm)...

Is she finishing her letter or me instead of her?
I don't know even myself.
"Don't answer these questions,
Just answer one of my question:
The spring passed,
I did not see you,
The Summer passed,

I did not see you,
The autumn passed,
I did not see you,
The Winter will pass too,
I'll not see you,
And where is the fifth season of the year
Which would be ours...? Wouldn't it come once? "

LONGING ANALYSIS

I recognize my deep longing as well
As the blind recognizes his old apartment...
I do not see my own movements,
Things are concealed themselves from me,
But I move there
Not to mistaken and to stumble
And I live there
Like the watch winding up itself
Which works even after removing the hands,
It works showing
Neither the hours nor the minutes...

And wobbling between darkness and loneliness
I want to decompound the longing
Like a chemist to understand
Its nature and deep mystery.
And from afar the tap's water begins to laugh
At my appetence and my efforts -
From the incredible distance
From the inaudible distance.
A winged bird makes its poor existence
To a melody with its washy trill -
From the inaudible distance
From the imperceptible distance.
The words begin to offend my pride
Because they respond to me -
From the imperceptible distance
From the inexcusable distance.

Գեղարմ Աշուն 2018

I walk from the wall to the other and the sounds
Of my steps seem to come from the very distance -
From the inexcusable distance
From the impossible distance.

Though I'm not blind,
While looking around
I see nothing
Because
Our eyes are often pulled out
Escaping from us and reach there
From where we are very afar -
From the impossible distance
From the unbelievable distance.

We run after us
But we can't reach us.
And we can't reach us...

Isn't it the feeling just calling "longing"...?

LOVE SHOULDN'T BE IN SUCH A WAY

I've stuck about
Between duty and love
Like a toll bar log...

I'm just trying
To rise to my feet
To go straight
To the Law
To say,
"Take me
To make a point in code -
Make me that "May not",
That "No"
Or that "Don't"
Which hurts us
Like incurable pain of heart...

And if you asked a wag,
He would smile and laugh loud:
A rooster hasn't got hands because
A hen hasn't got waist and cloths.
And I say groaning ... (joking apart) ...
I ask, supplicate,
" Take my hands and cut them off
For I've stuck about
Between duty and love
Like a toll bar log,
Moreover, from now on
I needn't these hands
If she isn't mine
Who was mine before;
Once I said "She's mine" in such a way
That all the frogs squatting like
Buddhists on the waterside
Just goggled at me, may be,
Trying to remember
The short but shot word ("mine")...

Now you are mine, as far as ... Madagascar
Now you are mine,
As far as ... the Abyssinian princess
For
I've stuck about between duty and love
Like a toll bar log...

Love shouldn't be in such a way.
In such a way ... one may die slowly
Just as the old boats putrefy in seas...

IN TAXIS' HAVEN

When the dawn spies upon the darkness of our glasses,
And the owl light rummages the corners of our homes,
You probably rise
With the sun.

The haze goes on holiday.
The night dreams' smithereens are swept
By the hand of the wind-cleaner.
The day comes as an inspector.
The banished troubles come back
And knock at the closed doors of justice...

I don't know what are you doing
On the other side of your closed door?
You probably wash yourself first
In order... the world to freshen up...
Then perhaps you fix your hair to get
Mild electric current by the friction
Of your hair and comb,
In order... all the people to feel tremor
And get the gooseflesh agreeably...
Then maybe you've a cup of coffee
Which has the color your eyes have
And is as hot as your eyes are
In order the smell of it to circulate
Always in the veins of the whole world...
You change your cloths afterwards
And go out
In order...to meet me in the taxis' haven
At the end of the century
After passing a whole century.
And flushing, trying to pretend to be innocent
Looking at me with your blameless eyes
You whisper, "Don't feel hurt".

I don't feel hurt.
Let's go, driver!
Where to drive?
I don't know.
Let's go, driver!
The sun has left home and got lost
Like a puppy or a baby.
Let's go to find and get back it.
Let's go, driver...

GOOD EVENING

The sun is down.
The day grows short.
And the mountains give birth again
In the form of shadows
Which grow little by little
And bury their mother.

The whirlwind
Flies up the sky
Resting upon its feet
Confirming
The refuted myth of Ascension.

In the cold air is slowly fluttering
A piece of warm body
Which is called bird.
There is a woman standing in a closed field,
And under her feet passes
The invisible axis of the equator
For which the only visible thing is she.

I admit my guilt
Without being caught
Without a witness
And murmur fearful from afar -
I murmur not to this one
But to that one who is far away
And who was mine,
"Good evening, my lone one..."


Translated from Armenian by
Christina KOCHARIAN

**Հայրերի ու որդիների խնդիրը
Դոստոևսկու մոտ**

Կարեն ԱՏԵՓԱՆՅԱՆ

/Ռուսաստան/

**ՄԵՏԱՖԻԶԻԿԱԿԱՆ
ՈՐԲՈՒԹՅԱՆ
ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ**



Զգիտեմ՝ մեկը ուշադրություն դարձրել է, որ Դոստոևսկու ստեղծագործությունների գրեթե բոլոր հերոսները որբեր են (ըստ Դալի բառարանի՝ որբ համարվում են նրանք, ովքեր կորցրել են կամ զույգ ծնողներին, կամ ծնողներից մեկին): Այստեղ հնարավոր չէ բոլորին նշել. որբեր էին «Տանտիրուհուց» Վարենկա Դոբրոսելովան, Գոլյադկինը, Օրդինովը և Կատերինան, Երազդըն ու Նաստենկան «Սպիտակ գիշերներից», Նետոչկա Նեզվանովան, Պոդպոլնին, Սոնյա Մարմելադովան, Դունյա Ռասկոլնիկովան, Ռոգոժինը, Նաստասյա Ֆիլիպովան, Իպոլիտը, Պյոտր Վերխովենսկին, Շատովն ու նրա քույր Դաշան, Լիզա Տուշինան, Կոլյա Կրասուկինը, ծերունի Ջոսիմն ու նրա եղբայր Մարկելը, Հեզաբարոն ... Բայց ամենից կարևորը, ըստ իս, որ որբեր են հինգ մեծ վեպերի գլխավոր հերոսները. Ռասկոլնիկովը մանուկ հասակում զրկվում է հորից, Միշկինը՝ և՛ հորից, և՛ մորից, Ստավրոգինը՝ հորից: Որոշակի առանձնանում է «Դեռահասը», սակայն այստեղ էլ դե-յուրե ունենալով և՛ հայր, և՛ մայր՝ Արկադին գրեթե չէր տեսել ու չէր ճանաչում նրանց, ընդհուպ մինչև 19 տարեկանը (քաղաքացիական հասունության տարիքը)՝ մեծանալով ու դաստիրարակվելով օտար մարդկանց մոտ: Եվ վերջապես, Կարամազով չորս եղբայրների մոտ հակառակ վիճակն է. նրանք բոլորը վաղ մանկությունից զրկվում են մայրերից, բայց նրանք ունեն հայր, որին նրանք, փաստորեն առաջին անգամ մեկտեղ հայտնվելով, համատեղ ուժերով սպանում են:

Հայրերի մեղքը

Հոյակապ սերբ աստվածաբան և մշակութաբան Ժարկո Վիդովիչը իր «Ողբերգություն և պատարագ» աշխատության մեջ գրում է, որ հունական ողբերգության իրական բովանդակությունը մարդու կողմից իր բնատուր արժանապատվության և փառքի ձեռքբերումն է, Աստծո հետ կորսված միասնության վերականգնումը: Նոր ժամանակներում դա աստիճանաբար անհետացավ. ողբերգության բովանդակությունն դարձավ մարդկային կրքերի դրաման: Դոստոևսկին ընդհանրապես գրականությանը վերադարձնում էր նրա իսկական նշանակությունը (մարդը «ծնվում է գիտակցելու և ասելու համար», այսինքն՝ Բարձրագույն ճշմարտությունը իմանալու և այդ իմացությունը մարդկանց փոխանցելու համար. «Պոետը ոգեշնչման պահին կռահում է Աստծուն»), վերադարձնում էր և ողբերգության ժանրի իսկական նշանակությունը: Այստեղ տեղին է հիշել որք բառի երկրորդ նշանակությունը, ըստ Դալի՝ անօգնական, միայնակ, անօթևան, ընչազուրկ: Դոստոևսկին իր ստեղծագործական ճանապարհը սկսել էր «Աղքատ մարդիկ» կոչվող ստեղծագործությամբ (կասկածից վեր է այդ խորագրի բազմանշանակ լինելը), և ավարտել էր «Կարամազով եղբայրներ» վեպով, որի սկզբում Միտյան մեջբերում է Շիլլերի «Էլզբիթյան տոնը».

«Տխուր հայացքով ուր էլ նայում էր Ցերերան/ Խորապես ստորացված/-/Ամենուր մարդ էր տեսնում/»: «Եղբայրս, ես գրեթե միշտ այդ մասին էլ մտածում եմ, այդ ստորացված մարդու մասին, իսկապես չեմ ստում», - ավելացնում է նա:

Առայժմ մի կողմ թողնենք Ցերերա-Դեմետրա-Աստվածամայր կարևոր գիծը և ասենք, որ Դոստոևսկու մոտ տեղի է ունենում որբության հաղթահարում և՛ ֆիզիկական, և՛ մետաֆիզիկական առումով: Առաջին դեպքում խոսքը վերաբերում է կորսված ծնողին մեկ ուրիշով փոխարինելուն (կամ փոխարինման փորձին). Դևուշկինը հավակնում է փոխարինել Վարենկայի հորը, Իխմենևները՝ Նելիի հորն ու մորը, Պավլիշչևը փոխարինում է Միշկինի և Բուրդովսկու հորը, Ստեփան Տրոֆիմովիչը՝ Ստավրոգինին ու Լիզային, Գրիգորի ծառան ու Մարֆա Իգնատևնան փոխարինում են Միտյայի և Սմերդյակովի հորն ու մորը, Միուսովը՝ Միտյայի հորը, Եֆիմ Պետրովիչը՝ Իվանին ու Ալյոշային: Կատարելության մեջ դա կարելի է ներկայացնել որպես Աստծուն կորցրած ու դրանից էլ որբացած մարդկություն՝ Վերսիլովի տեսլականից. «Յուրաքանչյուր երեխա կզգար ու կիմանար, որ երկրի վրա յուրաքանչյուրը նրա մայրն ու հայրն են»: Սակայն Դոստոևսկու մոտ բոլոր այդ «փոխարինումները» որբերին երջանկություն չեն բերում ու չեն փրկում նրանց: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ ֆիզիկական որբության հաղթահարումն անհնար է առանց մետաֆիզիկական որբության հաղթահարման, առանց Աստծո հետ մարդու իսկական հարաբերությունների վերականգնման:

Այստեղ մենք պիտի մի քիչ շեղվենք ու հիշենք այն մասին, ինչ գրում էր Դոստոևսկին ժամանակակից երիտասարդության կողմից իդեալների կորստի պատճառների մասին: Նա պնդում էր, որ դա տեղի է ունենում մեծ մասամբ ներընտանեկան կապերի խզման,

ավանդույթները և բարոյականության հիմնական դրույթները նախորդ սերունդների կողմից հաջորդներին փոխանցելու կապի խզման պատճառով: Փոխանցումն այդ տեղի է ունենում հայրերի միջոցով: Աստված Եգիպտոսում Սինա լեռան վրա իր առաջին Ուխտը կնքեց Իր ընտրյալ ժողովրդի հետ, «նրանց հայրերի հետ» (Եր. 31:31-34): Պատահական չէ, որ Դոստոնսկին մտորելով ժամանակակից երիտասարդության մասին, որ գրկվել է իդեալներից և բարու ու չարի մասին ճշմարիտ հասկացություններից կամ ինքնուրույն մշակել է բոլորովին տակնուվրա եղած հասկացություններ, անընդհատ ընդգծում էր հայրերի մեղքը, որոնք իրենց երեխաների համար միշտ պետք է լինեին «հոգեպես լեռան վրա», ինչպես նա էր ասում, բայց չեն կատարում իրենց այդ առաքելությունը: Այդպիսով ավերվում էր Աստծո հետ մարդկանց կապը (բնորոշիչ է, որ Գոլբեյնի «Քրիստոսը դագաղի մեջ» հայտնի վերարտադրությունը Ռոգոժիկի մոտ կախված է հոր նկարի դիմաց):

Որդիների մեղքը

Վերադառնալիս Դոստոնսկու վեպերին: Առաջին երեք վեպերի անհայր մնացած հերոսները, պոկված լինելով ավանդույթից, տարբեր կերպ են արձագանքում դրան: Նրանց ընդհանրացնողը ակտիվ գործողությունների դրողը ինչ-որ արտաքին ուժի ճնշման զգացողությունն է: Այստեղ տեղին է մի անգամ ևս շեղվել ու հիշել, որ գրեթե բոլոր ժողովրդական էպոսների հերոսները նույնպես կամ «լրիվ» որբ են կամ անհայր, ուստի և պատանի տարիքում

չեն տիրապետում վարքի կանոններին ու այդ պատճառով իրենց դյուցազնական կորովը սխալ հունով են ուղղորդում և միայն հասունության հասնելով են ճանաչում ճշմարիտ ուղին: Դոստոնսկին հազիվ թե իմանար բոլոր այն էպոսները, որոնք ուսումնասիրողները վկայակոչում են մնան դեպքերում, սակայն կա բանաստեղծական ճշմարտություն, որ բաց է բոլոր մեծ ստեղծագործողների առջև: Իզոր Եվլամպիևի հողվածը, որով բացվում է «Դոստոնսկին և համաշխարհային մշակույթը» ավանախի վերջին համարը, նկարագրում է, որ Դոստոնսկու վաղ ժամանակաշրջանի ստեղծագործությունության բազմաթիվ հերոս-երագողներ մեղքի յուրօրինակ զգացում ունեն նրանից, որ իրենց կոչումն են համարում «սխալ» կառուցված աշխարհը «փոխելը» և համարում են, որ շատ քիչ բան են կատարել դրա համար: Սակայն այդ հերոսները դեռ թույլ են. բայց մնան «երազանքները», անկասկած, Խաբեբայի ներշնչանքով (հիշենք ուշ Դոստոնսկու դրոշմային ձևակերպումը. «Այնտեղ, որտեղ վերջանում է կրոնը, սկսվում են լոկ երազանքները»), գերակշռում են մեծ վեպերի հերոս-ընդվզող-որբերի գիտակցության մեջ:

Հիշենք մահվան հասցնելու աստիճան ծեծված ձիուկի մասին Ռասկոլնիկովի երազը, որում, ըստ էության՝ եզակիորեն որպես ինքնուրույն դեմք՝ հանդես է գալիս նրա հայրը: Այդ երազն, իհարկե, իրականում տեղի ունեցած իրադարձության մասին հիշողությունն չէ, այլ հերոսի աշխարհընկալման խորհրդանշական արտահայտություն. աշխարհի, որ ընկղմված է չարի մեջ, իր՝ որպես այդ աշխարհի անխոս

զոհերի պաշտպանի, և հոր, որ խանգարում է այդ առաքելության իրականացմանը («Մեր գործը չէ, գնանք», - երազի մեջ ասում է հայրը որդուն; «Ոչ, մեր գործն է», - կտրուկ պատասխանում է Ռասկոլնիկովը): Նա ինքն էլ գիտակցում է, որ «մարդկության բոլոր օրենսդիրներն ու հիմնադիրները... նոր օրենքի հիմքերը դնելով, միաժամանակ, խախտում էին հինը, հասարակության կողմից սրբորեն պահպանվողն ու հայրերից փոխանցվածը, և, իհարկե, արյունը նրանց չէր կանգնեցնում...»: Մանուկ հասակում չիրականացվածը դրդում է նրան արդեն հասուն տարիքում ի կատար ածել իր առաքելությունը:

Միշկինը, թվում է՝ անցնում է լրիվ հակառակ ճանապարհով, սակայն դա էլ շրջապատին սեփական ջանքերով փրկելու և վերակենդանացնելու ճանապարհ է: Շվեյցարիայում նա փոխարինում է երեխաների հորն ու ուսուցչին և վերադառնալով Ռուսաստան՝ փորձում է իրեն շրջապատող մարդկանց մեջ ևս երեխաների տեսնել ու նրանց համար դառնալ հայր և ուսուցիչ, սակայն այստեղ դա նրան չի հաջողվում: Ստավրոպինը, որի մանկական հոգին կտրեց այդպես էլ նրա համար հայր չդարձած Ստեփան Տրոֆիմովիչը, ապարդյուն փորձում է ինքնուրույն գտնել ճշմարտությունը, սակայն ամենուր սոսկ դատարկություն է գտնում: Ինքն էլ աստիճանաբար ներքուստ տոչորվելով՝ բեռ էր փնտրում, սակայն մերժելով Քրիստոսի առաջարկած լուծը, հայտնվում է սատանայի դրած բեռան տակ:

Բնորոշ է, որ առաջին բոլոր երեք վեպերի հերոսները անում են ուղիղ հակառակն այն բանի, ինչ անում է այդ վեպերում Քրիստոսը՝ հայտնվելով

Ավետարանի ընթերցանության դրվագներում և Գոլթեյնի նկարներում. Ռասկոլնիկովը սպանում է, իսկ Քրիստոսը վերակենդանացնում է Լազարին: Քրիստոսը իր մահկանացուն է կնքում՝ իր վրա վերցնելով մարդկանց մեղքերի քավությունը, և ի գորու է լինում կրել այդ բեռը (եթե ընդունենք Տատյանա Կասատկինայի ապացույցը, որ Գոլթեյնի կտավում պատկերված է Հարության ամենասկիզբը). Միշկինը ապարդյուն փորձում է սեփական ջանքերով փրկել ու հարություն տալ Նաստասյա Ֆիլիպովնային, Ագլայային, Ռագոթինին ու ուրիշներին, բայց վախճանվում է նրանց մեղքերի ծանրության տակ: Քրիստոս վեռնում է չարքերին, իսկ Ստավրոպինը ծնունդ է տալիս դրանց ու բաց թողնում աշխարհ:

«Ձեզ որք չեմ թողնի ...»

Անչափ ցուցական է, որ Դոստոևսկու վերջին տարիների ստեղծագործությունների գերակշռող թեման հայրերի ու որդիների թեման է: «Դեռահասուն»՝ այդ մտքի «առաջին փորձարկման» ժամանակ, հենց Դոստոևսկու խոսքերով՝ տեղի է ունենում հոգևոր հայր դառնալու միջոցով ելք, լույս ու փրկություն գտնելու անընդունակ Մակար Դոլգորուկիի՝ ֆիզիկական հոր դերի հաղթահարում: Այնուհետև այդ թեման դառնում է հիմնականը «Կարամազով եղբայրներում»: Սակայն այդ վեպում որբության ավելի լայնամասշտաբ հաղթահարում է ծավալվում, Որդի Քրիստոսի և Հայր Աստծո իսկական հարաբերությունների վերականգնում: Այդ հարաբերությունները խնդրահարույց է դարձնում մեծ ինկվիզիտորը (իսկ նրա միջոցով՝ Իվանը):

Ասել է թե՛ եթե Քրիստոս չգիտեր ու չէր հասկանում, որ մարդիկ ստեղծված են «թույլ» ու «ծաղրական», ուրեմն նա իրավունք չունի հայտարարել, որ ինքը Աստծո Որդին է, որ «Հայր ու Որդի մեկ են», ուրեմն Քրիստոսն էլ որք է: Իսկ եթե մեծ ինկվիզիտորը ճշմարտացի չէ, ուրեմն Քրիստոս իր Հոր իսկական Որդին է: Եվ մեծ ինկվիզիտորը ճշմարտացի չէ, որովհետև վեպի ամբողջ ընթացքում մենք տեսնում ենք, որ մարդիկ ի վիճակի են հաղթահարել իրենց խոշորածավալ որբությունը, և ի վիճակի են հենց այն պատճառով, որ կարող են միմյանց համար եղբայր լինել – լոկ այդպես, լոկ որպես եղբայրներ, եղբայրության մեջ նրանք կարող են դառնալ «Աստծո յուրայինը», գտնել իրենց հորը, դառնալ «Աստծո զավակներ» ու արդարացնել Աստծո խոսքերն առ այն, որ «Անունը Քո կհայտնեմ Իմ եղբայրներիս» (Եբր. 2:12):

Այս վեպի սկզբում որբության թեման գերիշխում է, անգամ «Իյուլշայի քարը» «որբունկի պես ընկած է հյուսվածքի մոտ»: Սակայն այստեղ որոշիչ են դառնում Խաչի վրա իրեն զոհելուց հետ պահող առաքյալներին ուղղված Քրիստոսի խոսքերը. «Եթե ես չգնամ, Մխիթարիչը (Սուրբ Յոզիմ- Կ. Ս.) ձեզ չի այցելի, իսկ եթե գնամ, ապա կուղարկեմ Նրան ձեզ» (Հովհ. 16:7): Հենց դա էլ Նոր Կտակարանն է, վկայությունն այն բանի, որ այսուհետ Աստված հավերժ կլինի մարդկանց հետ. «Ձեզ որք չեմ թողնի, կգամ ձեզ մոտ» (Հովհ.14:18): Քրիստոսի տառապանքը, ուրիշի մեղքերի համար Անմեղի տառապանքը, քավիչ տառապանքի այն «համերաշխությունն» է, որը մերժում է Իվանը (անմեղը, մանավանդ

այդչափ անմեղը չպիտի տառապի ուրիշի փոխարեն») և որն ուրիշ մարդկանց հետ եղբայրություն գտնելու միակ ճանապարհն է ու փրկությունը: Բայց փրկություն է միայն այն դեպքում, երբ մարդն իր ճակատագրի ընթացքում իր ուժերի ներածին չափ կրկնի դա՝ իր վրա վերցնի երկրի վրա բոլոր «մեծ ու փոքր երեխաների» տառապանքների մեղքը: «Ոճիր և պատիժ» վեպում Ռասկոլնիկովը, դրամանենգների խմբում միմյանցից կախվածության մասին գրույցի մեջ, բացականչում է. «Յուրաքանչյուր մեկը մյուսից կախված է իր ողջ կյանքով: Խեղդվելն ավելի լավ է»: «Բոլորի համար էլ կգնամ, չէ՞ որ ինչ-որ մեկն էլ պիտի բոլորի համար գնա», - «Կարամազով եղբայրների» մեջ ասում է Միտյան: Աշխարհն ուղղելուց մինչև այդ աշխարհի մեղքերը քավելը՝ ահա Դոստոևսկու հերոսների ճանապարհը: Հաճախ հարցնում են՝ ինչպե՞ս է, որ այս վեպում, որի հիմնական թեման «երեխայի արտասուք» թույլ չտալն է, ապագա ներդաշնակության հիմքը, ավարտական վերափոխումը կառուցված է ոչ թե պարզապես արտասուքի, այլ Իյուլշա Սնեգիրյովի մահվան վրա: Սակայն իրեն տանջողներին ներած ու իր մահը որպես շնորհի և մերձավորների համար քավություն ընդունած տանջահարվածը դադարում է այդպիսին լինել եւ հավերժական կյանք է ստանում, ավելին՝ պայծառակերպություն է շնորհում վկաներին: Դա մարդկային ճակատագրին քրիստոնեության տված նոր չափումն է: Հիմնավորված կերպով կարող ենք ենթադրել, որ քավիչ տառապանքի, որպես Դոստոևսկու այդ անավարտ վեպի մարդկային հասարակության

երաշխիքի արարը պետք է տարածվեր մինչև հնարավոր առավելագույն սահմաններ, իր մեջ ներառելով և Ֆյոդոր Պավլովիչին, և Սմերդյակովին: Ռուս ազգագրագետ Ե. Մինենկը, հիմնվելով գերմանացի աստվածաբան, իմաստասեր ու հոգեթերապևտ Բերտ Յելլինգերի աշխատությունների ու սեփական հետազոտությունների վրա, գրում է, որ ցեղի հիշողությունից ու գիտակցությունից դուրս մղված մարդասպանները, ինքնասպանները, հարբեցող հանցագործները, պղծողներն ու դրանց նմանները, ցեղի համար լուրջ վտանգի ժամանակ վերականգնվում են ցեղի հիշողության մեջ, նրանց գերեզմաններին համապատասխան ծեսեր են կատարվում, հակառակ դեպքում վտանգ է առաջանում ամբողջ հանրության կյանքի համար: Միայն հոր (անգամ այդպիսի հոր) մահվան համար մեղքի քավության միջոցով է հնարավոր ամբողջ կարամագովյան ցեղի փրկությունը: 1880 թվականի «Նոթատետրերում» Դոստոևսկին գրում էր. «Նիհիլիզմը հայտնվեց մեզ մոտ, որովհետև մենք բոլորս նիհիլիստ ենք: Մեզ վախեցրել է միայն դրա դրսևորման նոր, յուրօրինակ ձևը»: Ով գիտի, գուցե եթե Դոստոևսկու այդ նախագուշացմանը ժամանակին ականջալուր լինեին, Ռուսաստանում տեղի չունենային շատ սարսափելի բաներ այն ամեն սարսափելիից, ինչ կատարվեց քառասուն տարի անց: Յնարավոր է՝ Ալյոշայի ճակատագրի շարունակության այն տարբերակը, որն ինչ-որ պահի ներկայանում էր Դոստոևսկու գիտակցությանը (ցարի կյանքը խլել ցանկացող և կախաղան հանված հեղափոխական), կյանքի էր կոչվել «ցե-

ղի հիշողության մեջ» առաջին սերնդի անձնվեր իդեալիստ-հեղափոխականների ընդգրկելու ցանկությամբ:

Սոֆյա-փրկիչը

Մեր վերլուծությունը ճիշտ չէր լինի, եթե չխոսեինք մարդկության որբության հաղթահարման մեջ մոր դերի մասին: Այստեղ ես կուզեմայի մտաբերել «իդեալի (կանացի համաշխարհային հոգու)» մասին գործնականում երբեք չհիշատակվող Դոստոևսկու մտահանգումը «Նոթատետրերից»: Ըստ քրիստոնեական տեսլականի՝ աշխարհի հոգին Աստծո խորիմաստությունն է՝ Սոֆյան: Առակաց գրքում Նա բնութագրվում է որպես Ստեղծագործող, որ կառուցում է աշխարհը Աստվածային արհեստի կանոնների համաձայն: Քրիստոնեության զարգացման վաղ շրջանում Սոֆյայի մասին պատկերացումը մոտ էր Քրիստոս-Լոգոսի կերպարին, իսկ հետո Երրորդության երրորդ անձին՝ Սուրբ Յոզու: Այստեղ հիշենք Միշկինի հանդիպած մոր խոսքը. «Ճիշտ այնպես, ինչպես մոր ուրախությունն է լինում, երբ նա նկատում է իր մանկիկի առաջին ժպիտը, այդպիսին էլ լինում է Աստծո ուրախությունը ամեն անգամ, երբ Նա երկնքից նկատում է, որ մեղսավորը Իր առաջ ամբողջ հոգով աղոթքի է գալիս»: Բնութագրիչ է, որ Աստծո ուրախությունը զուգադրվում է մայրական ուրախությանը: Հիշենք և մուժիկ Մարեյի նույնանուն պատմվածքում երիցս կրկնված «մայրական ժպիտ» արտահայտությունը: Ավերինցևն ընդգծում է, որ Սոֆյայի շատ կերպեր կապված են մարդկային միասնության գաղափարին, ինչպես նաև

այն, որ «Սոֆյայի անհատական կերպարը ինչպես բյուզանդա-ռուսական, այնպես էլ կաթոլիկ ավանդույթներում աստիճանաբար մոտենում է Կույս Մարիամի կերպարին»: Մեկ այլ տեղ Ավերինցևը գրում է մեզ համար շատ կարևոր բան. «Սոֆյա անունը նշանավորում է քրիստոնեական մեկնության մեջ մարդկային արժանապատվության գաղտնիքը»:

Դոստոևսկու վեպերում բոլոր փրկիչ-կանայք կրում են Սոֆյա անունը: Տատյանա Կասատկինան իր աշխատություններում բացահայտել է Ռասկոլնիկովին որդեգրող Սոնյա Մարմելադովայի կերպարի աստվածածին սկիզբը: Անչափ նշանակալի է, որ «Ապուշը»՝ անհաջող փրկության մասին վեպը, միակն է հինգ վեպերից, որտեղ բացակայում է Սոֆյա անունը (քանի որ Միշկինը չունի մայր), սակայն սևագրություններում այդպես էին անվանում Միշկինի մորաքրոջը, որի շնորհիվ էլ նա ժառանգություն է ստացել: Ժառանգություն, որը հետ պահեց նրան զազրելի ճանապարհից եւ դարձրեց ոչ այս աշխարհի մարդ, ով այդ կարգավիճակում իսկապես կարող է օգնել մարդկանց (ինչը և տեղի է ունենում վեպի առաջին մասում): Աստվածածնի ընդգծված հատկանիշներն առկա են նաև Սոֆյա Անդրեևնայի՝ Դեռահասի մոր ու Սոֆյա Իվանովնայի՝ Այոշայի մոր կերպարներում և ճակատագրերում:

Սոֆյա Մատվենան՝ գրքակիրը,

Կարեն ՍՏԵՓԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր,

Դոստոևսկու ռուսաստանյան միության փոխնախագահ

Ստեփան Տրոֆիմովիչին է տալիս փրկիչ Ավետարանը՝ Ավետիսը, որը լույսի աղբյուր է հանդիսանում խավարտչին թվացող «Դևերը» վեպում: Սոֆյա Անդրեևնան՝ Դեռահասի մայրը, առաջին անգամ որդեգրում է նրան՝ վաղ մանկության ժամանակ մոտեցնելով նրան Աստծուն (հաղորդության գավաթին), իսկ արդեն վեպի շրջանակներում ասելով նրան. «Քրիստոս Չայրն է, Քրիստոս ոչ մի կարիք չունի և լույս կսփռի անգամ ամենախավար մթության մեջ»: Դեպի այդ լույսը, որ փոխարինում է կեղծ կուռք Վերսիլովի «լույսին», այնուհետև Դեռահասին բերում է Մակարի մոտ: Սոֆյա Իվանովնան՝ Այոշայի և Իվանի մայրը, մանուկ Այոշային մեկնում է դեպի Աստվածածինը (նրա միջոցով էլ՝ դեպի Աստված), հետո նրան տանում է նրա հոգևոր հայր Ջոսիմը՝ իր երկրային ու հետմահու կեցության ընթացքում: Չետո, վեպի վերջում, Այոշան վերափոխման է տանում տղաներին: Այդպես իրականություն է դառնում այն նոր հոգևոր ընտանիքը, որի մասին խոսվում է վեպի սևագրություններում. «Ընտանիքը ընդլայնվում է. մուտք են գործում և ոչ արյունակիցները, հյուսվել է նոր օրգանիզմի սկիզբը»: Այդպես տեղի է ունենում համաշխարհային մարդկային որբության հաղթահարումը:

Թարգմանությունը ռուսերենից՝
Գայանե ԲԱՆՏԱՄՅԱՆԻ

ԱՇԽԱՐՀԸ

Երբ ծեր պարոն Յերլեդերը մի երեկո սովորականից ուշ տուն վերադաձավ, նրա կապը կտրած պարոնորդին նրան իր ծնկովն առավ ու մի լավ քոթակեց: «Ապագայում, – որդին ասաց հորը, – տան բանալիները դու ինձնից ընդհանրապես չես ստանա, հասկացա՞ր»: – Մենք չգիտենք, արդյոք հայրը անմիջապես հասկացա՞վ դա, թե՞ ոչ: Հաջորդ օրը մայրն արժանացավ իր դստեր հնչեղ ապտակին (շառաչուն՝ ավելի ճիշտ կլիներ ասել), այն բանի համար, որ չափազանց երկար էր տնկվել հայելու առաջ: «Մնափառ կոկետությունը, – ասաց վրդովված դուստրը, – ուղղակի ամոթալի է պատկառելի տարիքի տեր մարդկանց համար, ինչպիսին դու ես», – և թշուառականին բոթբոթելով հրեց դեպի խոհանոցը: Փողոցում և աշխարհում տեղի էին ունենում հետևյալ աննախադեպ իրադարձությունները. հետնաբակերում աղջիկները կրնկակոխ դարպասում էին ջահել տղաներին և զզվեցնում էին նրանց իրենց հետապնդումներով: Այդ կերպ հալածական դարձած պատանիներից ոմանք շառագունում էին զագրելիորեն կայտո տիկնանց հանդուգն հետամտումներից: Նման կանանցից մեկը օրը ցերեկով անթաքույց հարձակում գործեց բացարձակապես անաղարտ և անբիծ համբավի տեր քաղքենիական դասի մի տղայի վրա, ով վայնասունը կապած փախուստի դիմեց: Մինչդեռ ես, շատ ավելի անսեթևեթս և նվազ առաքինիս, մի երիտասարդ աղջկա ճանկն ընկա: Ես որոշ ժամանակ փորձեցի նրան դիմադրել, բայց լոկ նախապես սերտած կոկետություն-

Ռոբերտ ՎԱԼՁԵՐ
/Ավստրիա/

**ԵՐԿՈՒ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**



ներ բանեցնելով, և դրանով միայն ավելի բորբոքեցի տաքարյուն աղջկան: Բարեբախտաբար, նա ինձ հանգիստ թողեց, ինչն էլ միանգամայն իմ սրտով էր, քանի որ ես հակված եմ դեպի ավելի բարձրահարգ տիկնայք: Դասասենյակներում ուսուցիչները յոթերորդ կամ ութերորդ փորձից չեն կարողանում անգիր անել տալ դասանյութը, ուստի և նրանց կալանքի տակ են պահում: Նրանք լացուկոծ էին դրել, քանի որ շա՛տ էին ուզում երեկոն անցկացնել զարեջրախմությանը, մականախաղին և այլևայլ կոշտուկուպիտ զվարճանքներին անձնատուր: Նրբանցքներում անցորդները անամոքաբար միզում էին պատերին: Շները, որ պատահականորեն կողքով անցնելիս էին լինում, արդարամտորեն իրենց գարշանքն էին արտահայտում այդօրինակ վարքի հանդեպ: Մի ազնվական տիկին իր փխրուն ուսի վրա տանում էր ճարմանդազարդ մույկերով սպասավորին, կարմրամաշկ աղախինը պտույտի էր ելել բաց կառքում բազմած՝ տվյալ հողատարածքի կուսակալի հետ: Նա վեհաշուք ժպտաց՝ ի ցույց դնելով երեք ծոռոտիկ ատամները: Կառասայլին լծված էին ուսանողները: Նրանց վայրկյանը մեկ դադում էին ճկուն մտրակով: Փողոցային գողերը վազում էին դատական կատարածուների հետևից, ովքեր ձերբակալել էին նրանց պանդոկում կամ անառականցում: Տեսարանը գրավեց շների մի բազմության ուշադրությունը, որոնց սրունքամսերը կալանավորները հրճվանքով խածնում էին: Դա այդպես էլ լինում է, երբ դատական կատարածուներն անփույթ են ու դանդաղկոտ: Եվ անհեթեթ իրավիճակների ու մեղսավորությունների այս աշխարհի վրա այսօր հետկեսօրին փուլ եկավ երկինքը. ընդամին՝ առանց աղմուկի, օ՛ ոչ, ավելի շուտ որպես թե փափուկ, խոնավ մի կտավ, և ամեն ինչ ծածկվեց փոշու ամպով: Սպիտակագգեաց հրեշտակները բոկոտն թափառում էին քաղաքով մեկ, նրա կամուրջներով, և թեև սնամեծար, բայց հրաշափառորեն արտացոլվում էին շողշողուն ջրերում: Բիզ-բիզ ու սևամազ դիվուկները դետուդեն էին վազվզում վայրենի աղաղակ արձակելով, եղանները օդում թափահարելով, ահաբեկելով անցուդարձ անող մարդկանց: Եվ ընդհանրապես, նրանք իրենց չափազանց անհամեստ էին պահում: Ուրիշ էլ ի՞նչ կարող եմ ավելացնել: Երկինքն ու դժոխքը թրև էին գալիս ծառուղիների լայնք ու երկայնքով, կրպակներում առևտուր էին անում օրինյալները անիծյալների հետ: Ամեն ինչ խառնվել է քառսի, աղմուկ-աղաղակի, հարայիբոցի, վազքի, խառնաշփոթի և զարշահոտության մեջ: Ի վերջո, Տերը խղճահարվեց այս արգահատելի աշխարհի հանդեպ: Նա ձեռքն առավ Երկիրը, որը նա ժամանակին, առավոտյան կողմ պատրաստել էր, և առանց տանել-բերելու այն խոթեց մի պարկի մեջ: Առաջին պահը (փառք Աստծո, մի պահ միայն, ոչ ավելի) պարզապես սարսափելի էր: Օդը միանգամից դարձավ պինդ, անգամ քարից էլ շատ ավելի ամրապինդ: Նա ավերեց քաղաքի բոլոր տները, և նրանք ճգմվեցին իրար սեղմվելով, ինչպես հարբեցողները: Լեռները բարձրացնում և իջեցնում էին իրենց լայնահուն կոնակները, ծառերը թռչում էին տարածության մեջ՝ հրեշավոր թռչունների հանգույն, և տարածությունն ինքն էլ ի վերջո հոսել սկսեց՝ մի ինչ-որ անորոշ, դեղնավուն սառը զանգվածի վերածվելով, որը չուներ ոչ սկիզբ, ոչ վերջ, ոչ էլ չափ կամ որևէ այլ բան, դառնալով պարզապես Ոչինչ: Իսկ Ոչնչի մասին գրելը մեզ անհնարին է պատկերանում: Նույնիսկ Տեր

Աստվածն ինքն էլ, կսկծահույզ ու մորմոքուն, ի վերջո տարալուծվեց-ցնդեց սեփական ոչնչացման մոլուցքին անձանտուր, այնպես որ այդ Ոչնչին նույնիսկ դույզն-ինչ սահմանելի, այն որոշարկող կամ երանգավորող բնութագիր չմնաց:

ՀԱՆՃԱՐԸ

Մի անգամ, ցրտաշունչ գիշերով, Վենցելը՝ հանճարը, կանգնած էր փողոցում՝ բարակ, բարախիկ, թրթռիկ հագուստով և ողորմություն էր մուրում անցորդներից: Տիկնայք և պարոնայք մտածում էին՝ Տեր Աստված, բայց չէ՞ որ նա հանճար է, նա կարող է իրեն նման բան թույլ տալ: Հանճարին այնքան էլ հեշտությամբ չի բռնում հարբուխը, ինչպես սովորական մահկանացուներին: Վենցելը գիշերն անցկացրեց թագավորական պալատի դարպասի մատույցներում, և ահավասիկ, նա կարծես չմրսեց: Հանճարները միանգամից չեն մրսում, նույնիսկ եթե շատ ցուրտ է: Առավոտյան նա դիմում ներկայացրեց պատկան մարմիններին՝ իր այցի մասին զեկուցելու երիտասարդ և զեղեցկուհի արքայադստերը, ընդամին՝ այն նույն հանդերձանքով, որ նա կրում էր նախկինի պես: Այդ հագուստի մեջ նա ողորմելի տեսք ուներ, սակայն ծառաները, բոթբոթելով հերթ չէին տալիս միմյանց՝ շնչալով իրար ականջի. հանճարը, տղաներ, հանճար է, և ապա Վենցելի մասին զեկուցեցին տիրուհուն, և ուրախ-զվարթ նրան թույլ տվեցին մուտք գործել ազնվագարմ տիրուհու հարկաբաժինը: Վենցելը նույնիսկ չխոնարհվեց էլ արքայադստերը, քանի որ, դատեցեք ինքներդ, նման վարվեցողությունը բնավ հարիր չէ հանճարին: Մինչդեռ արքայադուստրը, սեփական ոգու վեհությամբ տոգորված, խոնարհվեց հանճարի առաջ, ես նկատի ունեմ պատանի Վենցելի, և նրան մեկնեց ձյունաճերմակ ձեռքը անուշահամ համբույրի համար, և ապա հարցուփորձ արեց նրա գալստյան նպատակի վերաբերյալ: «Կուզեի մի բան ուտել», – պատասխանեց կուպիտ-անտաշը, և այնուամենայնիվ նրա պատասխանը արձագանքի արժանացավ, քանի որ անմիջապես էլ, ազնվագարմ տիրուհու ձեռքի մի շարժումով, հրաշափառ նախաճաշ և գինի մատուցվեց, ընդամին՝ այդ ամենն արժաթե պնակներում և բյուրեղապակյա սրվակներում՝ ոսկե սկուտեղի վրա: Հանճարը լայն ժպտաց՝ աչք շոյող ուտեստների բերումով, և ահա, պարզվում է, որ հանճարները կարող են նաև լայն ժպտալ: Թագուհին միանգամայն բարեհաճ էր տրամադրված, կերակուրն էր ճաշակում Վենցելի հետ, որն իր հանճարեղ էությանն համապատասխանող նույնիսկ դույզն-ինչ բարեպատշաճ փողկապ չուներ կապած, հարցուփորձ արեց նրա արարմունքների մասին և նույնիսկ խմեց նրա առողջության համար. այդ ամենը բարեհոգի ու անմեղ նրբավարությամբ, իրեն հույժ հատկական: Հանճարն իր ողջ ճղճիմ ու ճղճված կյանքում առաջին անգամ իրեն լիովին երջանիկ զգաց, և ահա, պարզվում է, որ նույնիսկ հանճարներին խորթ չէ երջանիկ լինելու այդ հույժ մարդկային հատկությունը: Հերթական բաժակաճառն արտաբերելիս, ի թիվս այլոց, Վենցելը հայտարարեց, որ ինքը վճռականորեն է տրամադրված վաղը կամ մյուս օրը կործանելու աշխարհը: Արքայադուստրը, որին հասկանալի պատճառներով այդ ընթացքում սարսափը համակեց,

իրեն գլխապատատ դուրս գցեց սրահից, վախվորած և բարեհունչ ճչալով՝ լեղաճաք եղած սոխակի պես, հանճարին միայնակ թողնելով իր հանճարեղության հետ, և այդ ամենի մասին պատմեց իր հորը, երկրի տիրակալ արքայազն-կուսակալին: Վերջինս այնուհետև հորդորեց Վենցելին հնարավորինս շուտափույթ և անհապաղ գրողի ծոցը կորչել, ինչն էլ կատարվեց անմիջապես: Եվ հիմա մեր հանճարը վերստին փողոցում է, ուտելու ոչինչ չունի, ինչի համար, սակայն, բոլորը ներողամտորեն են վերաբերվում նրան, քանի որ նա մեծագոր հանճար է. սակայն նա չգիտի, թե ուր գլուխը կորցնի հոգսերից: Այս վիճակում հապշտապ նրան օգնության է գալիս հանճարեղ մի միտք (բոլոր խելացի մտքերը խիստ ճոճ են ու ճապուկ): Նա կարգադրում ու կազմակերպում է ձյունառատ տեղումներ, ընդսմին՝ այնքան երկարատև և ուժգին, որ շատ կարճ ժամանակում ամբողջ աշխարհը թաղվում է ձյան հաստաբետ շերտի տակ: Նա, հանճարը, ընկողմանած է սառցանիստ երկրակեղևի ամենաբարձր գագաթին, և ծամծմում է այն ոչ հռոչի զգացողությունը, որ ամբողջ աշխարհը թաղված է իր ոտքերի տակ: Նա ինքն իրեն ասում է, որ սա ծանրաբեռ հիշողությունների աշխարհ է: Նա կրկնում է դա այնքան ժամանակ, մինչև որ հանկարծ նկատում է, որ նորից քաղցած է՝ ինչպես բարեբանյալ երկրային սնունդի (գործրինակ Կոնտինենտալ հյուրանոցում մատուցվող), այնպես էլ մարդկային դաժան վերաբերմունքի առումներով: Արևն այնտեղ՝ վերևներում, շատ էլ հաճելի չէ, քանի որ այդպես՝ կատարյալ միայնության մեջ արևի տակ նստելուց – ավա՛ղ – նրան սառը դող է պաշարում: Կարճ ասած՝ այդ ամբողջ ձյունը նա վերստին հալչել է տալիս: Այս ընթացքում աշխարհում ինչ-որ բան, թեկուզ քիչ, բայց հասցրել է փոխվել. ձևավորվել է նոր, թարմ լվացված մարդկանց մի սերունդ, որ մեծագույն պատկառանքով է լցված ամենայն գերմարդկայինի հանդեպ: Դա սփոփում է Վենցելին այնքան ժամանակ, քանի դեռ դրա դեմ նա դեռ չի ըմբոստացել: Նա տառապում է և հեծկլոտոցները, որ իր հոգու խորքերից են բխում, համընդհանուր ճանաչման են արժանանում: Նրան ուզում են օգնել, նրան համոզում են, որ ինքը մարդկության այսպես կոչված հանճարն է կամ նրա մարմնավորումն ու անձնավորումը: Բայց այդ ամենն այլևս ապարդյուն է, քանի որ հանճարին օգնել բնավ հնարավոր չէ:

Թարգմանությունը գերմաներենից՝
Աշոտ ԱԼԵԶՍԱՆՅԱՆԻ

Սավելին վագում էր խավար նրբանց-
քով: Շենքերի վիթխարի կույտերը կեն-
դանի-մեռյալ ու սպառնալի էին թվում:
Ասես երբեք գոյություն չէին էլ ունեցել:
«Ինչո՞ւ, ինչո՞ւ եմ այսպես սիրում ոտքս,-
անձայն ոռնում էր նա:- Այ վագո՛ւմ եմ...
վագո՛ւմ եմ... Իսկ հետո՞ ինչ... Օ՛, ո՛տքս,
ո՛տքս: Ավելի լավ է կանգնեմ, մտնեմ այս
անկյունն ու համբուրեմ նրան... Այն տե-
ղը, որ երազիս էր եկել... Նուրբ, դողող-
ջուն...»:

Բայց շարունակում էր վագել: Եվ աչ-
քերն անշարժ էին, ասես երկնքից էին
թափվել: «Բռնեմ ու խմեմ արյունս,- առ-
կայծեց մտքում:- Արդեն չեմ դիմանում իմ
գոյությանը... Բայց ի՞նչ է սա: Իսկ ո՞տքս,
ո՞տքս»:

Նա կանգ առավ: Վերջապես ընդա-
ռաջ ելավ մի անցորդ: «Օ՛, ինչպես եմ ու-
զում ամեն ինչ գետնի տակն անցնի,
ամեն ինչ, ամեն ինչ: Ե՛վ այս անիծված
շենքերը, և՛ այս մարդիկ: Ու ես ոտքիս
հետ մնալով՝ անցնեմ մի ուրիշ... Ուրի՛շ...
Ուրի՛շ... Օ՛, ինչպես եմ ուզում տեսնեմ
նրան: Բայց ո՞ր է ոտքս: Ո՞ր է»:

Նա ջղաճիգ դիպավ ոտքին. կարծես
տեղում է: Շուրջը նայեց: Կռտած խոզի
նման, բայց ակնոցով հաստաբետտ մի
մարդ ուշադիր սևեռվել էր նրա մազերին:
Մի կատու հայտնվեց-անցավ, տարօրի-
նակ կերպով նման էր հարևանուհուն՝ Ան-
նա Նիկոլաևնային:

«Չէ, սա դեռ վերջը չի,- գոչեց Սավե-
լին:- Մենք դեռ կպայքարե՛նք: Մենք դեռ
կհամբուրե՛նք»: Ու քաշվեց անկյունը, որ
արդեն երեք ամիս տեսնում էր երագում:
Այնտեղ, հրաշալի, ուղղահայաց երկինք
հառնող կենդանի խավարում Սավելին
մերկացրեց աջ ոտքը, որ սիրում էր: Մի-
րում էր Աստուծոց ավելի, իրենից ավելի:
Ու հպվե՛ց...

...Կամացուկ տնքոց տարածվեց մի
քանի րոպե անց: Արյունը դանդաղ, թեթև

Յուրի ՄԱՍԼԵԵՎ
/Ռուսաստան/

ՈՏՔԸ



շիթով հոսեց ոտքից. բայց դա մեղրից քաղցր էր, ծնունդից ու մայրական փղաքշանքից նուրբ: Սավելիի աչքերը մթնեցին: Շրթունքները լպստում էին արյունը, ճերմակ ատլասե մաշկը... Ողջ մարմինն ասես պատրաստ էր սեղմվել ոտքին, հոսել նրա մեջ... Իսկ գիտակցության մեջ չտեսնված անուրջներ էին լողում... Օ՛, մի՞թե խնդիրը միայն հաճույքն է: Խնդիրը դրան հաջորդող եզերքներն են, խնդիրն այն է, որ սիրում է իր ոտքը...

Թիկունքից հիստերիկ քրքիջ լավեց: Մի անգամ չէ, որ այդպես էր եղել, երբ շրթունքները հպել էր ոտքին. հանկարծ ամենավերջում մի կերպարանք էր հայտնվում: Այս անգամ ալևոր ծերուկ էր՝ հարբեցողի քթով, ոտից գլուխ փաթաթված ծածկոցի մեջ, չնայած դրսում դեռ տաք էր: Աչքերն ապակիացել էին, բայց Սավելիին նախանձելուց չէր քրքջում. կողքին մի մկնիկ էր նստած, ու ծերունին խելքամաղ էր լինում նրան նայելով: Ասես վազվզում էր տեղում՝ անդենական մեզով լցված: «Շուտով պիտի հայտնվի լուսինը», - մտածեց Սավելին: Ջգույշ, համարյա չորեքթաթ դուրս սողաց դարպասատակից: Որ ոտքը չվնասի՝ սիրաբար քարշ տալիս ու շոյում էր՝ ինչ-որ բան մրմնջալով:

Մերն առ ոտքը զբաղեցնում էր Սավելիի համարյա ողջ ժամանակը: Ոտքին մետաքս էր հագցնում, խնամում քսուքներով, օժանելիքով, չնայած մարմնի մնացած մասը անասելի կեղտոտ էր: Փոխարենը՝ ոտքը երանության մեջ էր կնոջ պես: Դժվար թե Մարիա Անտուանետան, երբ գլուխը կտրում էին, այդպիսի գուրգուրված ոտք ունենար: Սավելին ամենաշատը վախենում էր նրան, չասենք թե ցավ (ցավի մասին մտքից սարսափած քարանում էր), այլ թեկուզ փոքրագույն տհաճություն պատճառելուց: Շատ դժվար էր առավոտները վեր կենալը... Սավելին երկար ու ինքնամոռաց շոյում ու սիրում էր ոտքը՝ նայելով նրան ինչպես հայելու մեջ, որ մեղմի առաջին կոպիտ հպումը գետնին:

Այդպիսի ամեն հպում սրտում տառապագին, համարյա միստիկական ցավով էր արձագանքում, բայց, համենայնդեպս, ժամանակի ընթացքում սովորեց ցավը հաճույք դարձնել: Ոտքի համար խելահեղ վախը նրան ստիպում էր կանգ առնել փողոցում, մարդկանց ու մեքենաների արանքում, բոլորից մի անկյուն փախչել, կարեկցանքով բռնված՝ համբուրել ու շոյել նրան: Նույնիսկ նստել չէր կարողանում առանց սիրելիի համար դող ու արցունքի: Ծովափնյա հովիկը, եթե չափազանց արագ էր, նրան ստիպում էր կնճռոտվել ու ոտքը թաքցնել մի խաղաղ անկյունում: Միայն թե տառապանք չկրի նա, ում սիրում ես:

... Վերջապես Սավելին դուրս սողաց դարպասատակից: Չտեսնված չինական մետաքսի լայն, գեղեցիկ և օժանելիք բուրդ կտորը քարշ էր գալիս ցեխի միջով ու մի կերպ էր մնում ոտքի վրա: Լուսինն արդեն լողում էր բարձունքում, ամպերի միջև: Սավելին երկինք հառեց մեռյալ կապույտ աչքերը: Դրանք արդեն խաղաղ էին, ինչպես հռոմեացիների աչքերը մահից հետո: Հանկարծ շուրջը սկսեցին մարդիկ հայտնվել: Տարատեսակ մարդիկ, ու նրանց մազերը նման էին գլխանոցների: Պարզապես անցորդներ էին: Ու Սավելին շտապեց հեռու: «Միաչքանիներն ինչո՞ւ են այսքան շատ», - մտածեց նա: Բայց մի առավել արտասովոր պառավ կպավ պոչից: Բարձրահասակ, բայց կորացած, համարյա չերևացող մանր աչքերով՝ նա, կարծես, հրապուրվել էր քղանցքի պես Սավելիի ոտքի ետևից քարշ եկող մետաքսով: Սավելին ուշացումով նկատեց նրան. պառավն արդեն մի քանի քայլի վրա էր ու ճանկի պես մետաքսին էր պարզել էր երկար, կռկված ձեռքը: Սավելին պոկվեց ու փախավ: Արագ, արագ, կին-

Գեղարմ Աշուն 2018

ճի պես, միայն մետաքսն էր հեշտասեր օձի նման հետևում ոտքին՝ ասես ատամները խրած նրա մեջ: Սավելին երբեմն կանգ էր առնում ու քրքջում: Պառավը, մի տեսակ մեքենայաբար ու անհույս, շտապում էր ետևից՝ առանձնապես հետ չմնալով: Սավելին ծանր էր շնչում: Քրտիկները հոսում էր կապույտ աչքերին, փափկասուն ոտքին հենված տարօրինակ ռազմիկի նրա կերպարանքը խամրում էր կենդանի մարդկանց մտելիքի ու խրտվիլակների մեջ: Պառավը նրա հետևից թափահարում էր թաշկինակը, ինչ-որ բաներ էր շնչմացնում՝ ըստ երևույթին առաջարկ անելով: Անտարբեր տրոլեյբուսները լողում էին կողքով:

Վերջապես Սավելին իրեն գցեց երկու շենքերի արանքն ու ասես անտեսանելի դարձավ շրջապատողների համար: Մի անգամ չէ, որ դիմել էր այդ միջոցին ու գիտեր՝ որոշ ժամանակ իրեն ոչ ոք չի տեսնի: Նույնիսկ եթե համառորեն յուրաքանչյուրին պարզի ձեռքը: Ցանկացած առաջարկի աղաղակով էին պատասխանում:

«Այստեղից գնալու ժամանակն է,- մտածում էր կիսատեսանելի Սավելին:- Բայց ո՞տքս... Նորից դնեմ մայթի՞ն... Ինչո՞ւ»:

Վերջին ժամանակները նրա սիրավեպը սկսել էր մոտենալ ինչ-որ զարհուրելի հանգուցալուծման: Բայց դրա տակ ինչ էր թաքնված՝ չգիտեր: Մոտեցավ կրպակին՝ զարեջուր խմելու, և ասես կենաց ջուր հոսեց ոտքի մեջ: Ճանապարհին մի թղթի պատառ տեսավ. արագ կարդաց. «Մարդկային բարին մեռել է. բարին անճանաչելի է մարդուն, ուստի՝ անհասանելի: Սատանան հիմա ավելի հասկանալի է մարդուն, քան Աստված՝ Իր բոլոր անդունդներում»:

Սավելին ավելի արագ վազեց. այդպես վազելիս ասես թռչում էր՝ գետինը չգգալով, միայն ոտքն էր գգում՝ իր թագուհուն: «Բայց ո՞ր է թագը, ո՞ր է թագը», - երբեմն տենդագին մտածում էր նա: Մերթնդները հողն էր թագ թվում: Բայց հիմա պարտավոր էր, հիմա պիտի լուծեր իր հանելուկը: Ահա և տունը, որտեղ ապրում է: Ինչ հաճախ էր պատկերացնում ոտքը: Գիտակցության մեջ ոտքը լողում էր հրե գնդի պես, բայց գնդի ներսում բույն էր դրել կյանքը, որին նա իր հոսքն էր ուղղում: Բայց իրե՞ն է կյանքը: Ամեն ինչ այնպես սարսափելի էր, առեղծվածային. գուցե ոտքը և՛ իրենն է, և՛ իրենը չէ. կանչում էր գուրգուրված, հավերժական խավարից ելած հեշտանքի պես, ու ներսում առեղծվածն էր, որ անհնար է լուծել:

- Որդի՛ս: Որդի՛ս,- գոչում էր նա իր խրախճանքների ժամանակ:- Իմ ոտքն իմ եսն է և իմ որդին,- իր կյանքը ոտքի մեջ տեղափոխելուց կարկանդակ էր Սավելին: Մերկ ոտքը, պատատված նուրբ վարդերով, թաղկանում էր նրա գիտակցության մեջ: Երբեմն էլ փշե պսակով էր: Հետո ամեն ինչ անհետանում էր, ու նորից սկսվում էր հավերժական խավարից ելած հեշտանքի ծղրտոցը: Ոտքը անուշ գալարվում էր ճերմակ արարածի պես, որ անմարդկային մարմնով մեկ լեցված ոգի է կրում... Սավելին սարսափած վեր էր թռչում անկողնուց ու վազում դուրս, ձեղնահարկ, աղբանոց, գոռում էր. «Մոլորակն Արև է դարձել»: Ողջ մարմինը թափուր էր, ասես լուսինն էր այնտեղ գետեղվել: Առնետները, նրա տեսքից սարսափած, կոտորվում էին:

Բայց հիմա այդ ամենն անցյալում էր, անցյալում: Նա գնում էր դեպի հանգուցալուծումը: Սավելին վազեց-մտավ իր շքամուտքը: «Պետք չէ՛, պետք չէ՛ սպանել նրան», - ճչում էր մեկը անկյունում՝ աղոտ, ինքնամփոփ աչքերը հառած Սավելիի սավերին: Քիչ այն կողմ սրտաճմլիկ երգում էր ջարդված գանգով մի նիհարիկ աղջնակ: Արյունը թափվում էր կիսաբաց բերանը...

Սավելին մի քանի ցատկ արեց սանդուղքով վեր: Ներքուստ ակնթարթորեն սառ-

չում էր, երբ սիրելի ոտքի թաթը դիպչում էր մեռյալ գետնին: Հանկարծ բացվեց բնակարաններից մեկի դուռը, և չնայած ոչ ոք չէր երևում՝ ծիծաղը ներկայություն էր մատնում: Սավելին բռնուցքով սպառնաց այդ բաց դռանը:

Ստիպված էր վազքով կտրել երկար, դևերի լքած միջանցքները: Քղանցքը մնաց հատակին: «Ինչո՞ւ միայն մեռյալներ ու խելագարներ են շուրջս», - մտածեց նա ու սխալվեց: Միջանցքի ողջ ճանապարհին միայն մի մարդ տեսավ՝ Պանտելեյին, մռայլ-ճղճղան մի տղամարդու, որ սեռական կապի մեջ էր կենտրոնական ջեռուցման հետ: Թվում էր՝ նրա սեռական անդամը գոլորշի է արձակում, իսկ ատամները պողպատից են, գայլի ատամների պես:

Պանտելեյին սիրտ տալով՝ Սավելին նետվեց առաջ ու շուտով իր սենյակի քրքրված դռան մոտ էր: Մտավ: Հետո մի կես ժամի չափ ներսում վազվզելով՝ ուժասպառ նստեց մահճակալին: Լուսինը կույր, դեղին աչքի պես ներս էր նայում պատուհանից: Չայներ էին լսվում. «Ոնց է աճում գլուխս... Պետք չէ՛... Պետք չէ՛... Փախչենք, հայր իմ... Բայց ո՞ր: Ո՞ր... Տվեք իմ դիմակը, տվեք իմ դիմակը, գազաններ... Շատ ցուրտ է, երբ գուշակում ես... Հմայություն մի արա քարերով ու քարը մի ընտրիր քեզ խոստովանահայր, թշվառակա՛ն... Ինչ սարսափելի՛ է, սարսափելի՛ է»:

Բայց Սավելին արդեն վարժվել էր այդ ձայներին, նույնիսկ կապույտ աչքերը չէին մթնում: Ամեն, ամեն ինչ անցյալում էր: Եվ ամեն ինչ փոխվել էր: Ինչ հաճախ էր նա քնքշորեն նայում իր ոտքին: Ինչ քնքուշ էր նա արևի տակ, հայելիների փայլի մեջ: Օ՛ պատանություն, օ՛ անցյալ: Բայց ժամանակն է, հրաժեշտ տալու ժամանակն է:

- Ես նրան տեսնելու ուժ չունեմ այլևս, - հանկարծ ծնկի գալով՝ ոռնաց Սավելին:

Ու լողացող հայացքն անկասելի ընկավ մի կողմ պարզված աջ ոտքին: Քրքջալով ձեռք տվեց: Հայուններ էին, հետո՝ հեռավոր ու ցուրտ թռիչքը հոգում: «Ինձ հե՞տ է, արդյոք, իմ Լիլիթը», - մտածեց նա: Ու հանկարծ աչքերից արցունքներ հոսեցին, սառը, խոշոր, ասես ոչ թե արցունքներ էին, այլ շրջոնքված հոգու թանձրուկ: Թիկունքում արդեն քրքջում ու ցնցվում էր ինչ-որ արարած: Սակայն ոտքի մաշկի ճերմակությունն առաջվա պես խելքամաղ էր անում: «Ինչի՞ համար են այսքան գուգահեռները, - առկայծեց մտքում: - Բայց պետք է մարե՞լ, մարե՞լ»: Խելագար, անդենական ցնծությունը բարբախում էր կրծքի տակ. աչքերը դուրս էին պրծնում ուղեծրերից՝ ասես նոր հաղթահարված խելահեղությունն ընդառաջ: «Ահա աշխարհը: Նոր աշխարհը՝ խելագարության պատիճում: Արի՛: Արի՛», - գոչեց նա՝ սենյակի կենտրոնում կիսապառկած, վեր պարզելով ձեռքերը:

- Այո՛, այո՛, ուզում եմ տեսնել Նրան ուրիշ ձևի մեջ, - մրմնջաց նա: - Ի վերջո, ուզում եմ փոխել իրավիճակը... Տեղից շարժել մեր հարաբերությունների կետերը:

Վեր կացավ: Անկյունում, հավերժական իրերի քառսի մեջ փռչեպատ հեռախոսն էր: Մոտեցավ. ոտքը, թմրածի պես, չէր զգացվում:

- Վասիլի, Վասիլի, - ճչաց խոսափողի մեջ: - Լսո՞ւմ ես:

Մի մռայլ, ըստ երևույթին մոռացված արարած անընդհատ հաստատում ու հաստատում էր.

- Այո՛, այո՛... ամեն ինչ կլինի... կլինի՛:

Սավելին նայեց ժամացույցին. սլաքները սողում էին դեպի գիշերվա մեկը:

- Ժամանակն է, ժամանակն է, - սթափվեց նա ու թեթևաքայլ դուրս վազեց: «Այլևս ոչ ոք չի դիպչի իմ ոտքին», - ճանապահին մտածում էր Սավելին: - Չի լինի, չի լինի այդ միատեղումը... այդ գաղտնիքը՝ իմ մեջ... Այնտեղ կլինի, այնտեղ... երկնքում:

Սև ու մադկանցից լքված հրապարակ: Մեքենաների հազվագյուտ լույսեր: Տեսանելիներից՝ ոչ ոք: Միայն չարքերն են խղճալի վայում: Հանկարծ հայտնվում է ծեր, զնգզնգացող տրամվայը: Երկու վագոն՝ ամայացած աշխարհում... Ու Սավելին նետվում է առաջ՝ աջ ոտքը պարզելով... Գիշերվա ժամը մեկն է... «Շտապ օգնության» շչակներ... Վասիլիի՝ բժշկի սևակնած մոտիքը... Չարքերի տաղտկալի վայոցը:

Ամեն ինչ կատարվեց, ինչպես պայմանավորվել էին: Հիվանդանոցից դուրս գրվելիս ընդարձակ, սպիտակ սավանով փաթաթած՝ Սավելիին հանձնվեց նրա սիրելի, հիմա արդեն չորացված ոտքը: Ինքը, բնականաբար, հենակներով էր: Գիրկն առավ նրան, ինչպես սեփական, բայց և ճակատագրի պարզ երեխային, Նինա Նիկոլանայի՝ հարևանուհու օգնությամբ իջավ ներքև: Վասիլին խորամանկ աչքով էր անում նրան ու թփփասցնում ուսին... Եվ օրերը գործվեցին առանձնակի կատաղությամբ: Սավելին արագ վարժվեց հենակներով ցատկոտելուն: Փշվշոտ ու փռչոտ գերմարդ էր ասես՝ մարդկանց ու ավտոբուսների կողքով ցատկոտում էր հացի խանութ: Չորացրած ոտքը իր ողջ հնայքով կախված էր սենյակում, բայց Սավելին չէր համարձակվում խոնարհվել նրան: Պետք էր հարաբերությունների իրական եզրեր գտնել: Նրա գլխում հիմա մերկություն էր, ասես մտքերը վերջնականապես անջատվել էին ենթագիտակցությունից, ու մնացած ամեն ինչն էլ դեսուդեն էր ցրվել, իսկ կենտրոնում դատարկություն էր: Ճիշտ է, բավական անսովոր ու տագնապալի: Դրա համար էլ հաճախ ճշում էր գիշերվա կեսին՝ հենակներին ծանրացած դուրս վազելով ու սպառնալով այդպիսի Արձակությանը:

Իրադարձություններն այնպես չէին դասավորվում, ինչպես ենթադրում էր: Փորձեց քնել ոտքի տակ, հատակին՝ շնիկի պես: Բայց Արձակը հանգիստ չէր տալիս: «Տեղ չունե՛մ, տեղ չունե՛մ», - գոռում էր Սավելին չարքերից լքված միջանցքով մեկ:

Բայց տեղ, ընդամին, կար, և այն իր ներսում էր զգում: Պետք էր զգալ, զգալ տեղփոխ Անդունդի ոգին ու հարաբերվել նոր իրականության հետ, որ ժամանակին իր մեջ էր, բայց հեռացել էր ոտքը կորցնելու հետ՝ անտեսանելիի պես թաքնվելով ինչ-որ տեղ ու, հավանաբար, նոր ենթահիմք առնելով:

Ու Սավելին հռռում էր՝ վազելով ստվերների ետևից, որոնք գուցե արտացոլում էին, ինչը չպիտի իմանար: Հենակները ճռնչում էին այդ վազվզոցից: Տարօրինակ, արյունոտ արցունքներ էին հայտնվում աչքերում... Լարվածությունն աճում էր... Արդեն նույնիսկ կատուներին չէր ճանաչում, որ նման էին Աննա Նիկոլանային՝ հարևանուհուն: Մի անգամ գիշերվա դեմ անմարդկային ճարպկությամբ դուրս պրծավ փողոց: Շենքերի պատուհաններն այն աստիճան մեռյալ էին, ասես նրանց Անդունդն էր վարագուրել: Ոչ մի տեղ ոչ ոք չկար: Սավելին, լուսնի մասին հիշելով, կապույտ հայացքը վեր՝ երկինք հառեց: Ու քարացավ: Լուսինը չկար: Լուսնի փոխարեն ճղճղված թափառիկ ամպերի պսակում կախված էր ոտքը՝ իր ոտքը, պոկված, մերկ, ինչպիսին կենդանության օրոք էր՝ ողջ հեշտանքով, գաղտնիքով ու փայլով... Որպես նշան, որ կա... Աննկարագրելի...

- Օ՛, - գոռաց Սավելին ու նետվեց... Այնտեղ... Առաջինը հենակը թռավ... Հետո՝ գլուխը... Ինչ-որ անբացատրելի ուժով նետվելով վեր՝ իրանից պոկված, մեղմ, սահուն, բարձր թռիչք արեց շենքերի վրայով՝ փոքր-ինչ հապաղելով աշխարհի գլխին՝ ոտքի լուսնալույսի մեջ: Սավելին նույնիսկ թվաց՝ գլուխը կարճ ժպտաց ոտքին, երբ հեզասահ իջնում էր շենքերից այն կողմ... Վերջապես, մի ընդհանրապես աներևակայելի բան կատարվեց...

Գեղարմ Աշուն 2018

Սավելիի ցիրուցան անդամներն այդպես էլ ընկած մնացին մինչև առավոտ, մինչև ավլեցին դռնապանները: Հենակից գնդացիի սարքեցին երեխաները: Իսկ գլուխը սև տղերքը գտան պարապուտում: Հաճույքով տշում էին գնդակի տեղ՝ ֆուտբոլ խաղալով նույնքան տարօրինակ ամբոխի հարբած գոռում-գոչյունի տակ: Ինչ-որ մեկը գլխին նետեց լայնեզր գլխարկը:

Բայց դա չի նշանակում, որ Սավելին պարտված էր: Ավելի շուտ՝ ոչ մի նշանակություն չունեի: Ի վերջո, գլուխն ընդամենը գլուխ է:

Փոխարենը՝ Սավելիի սենյակում անմիջապես նոր կենվոր հաստատվեց, որը ոչ միայն պատից չիջեցրեց չորացրած ոտքը, այլև սկսեց պահպանել: Անողոր, խստավար ու չար մարդկանցից: Ու ոտքի վրայով հաճախ մի շտենված գույնի ջահել բզեզ էր սողում ու ոչ բզեզային հեշտանքով բզբզում չորացրած ոտքը՝ ըստ երևույթին դրանից անթաքույց կենսական ուժ առնելով, թե չէ՝ ինչու էր հետո անհետանում...


Ռուսերենից թարգմանությունը՝
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Խ Ճ Ա Ն Կ Ա Ր

ՀԻՆԳ ԲՈՆԱՊԵՏ-ՀԱԿԱԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼՆԵՐ. ՊԵՐՈՆԸ ԲՈՐԽԵՄԻՆ ՈՒՂԱՐԿԵԼ ԷՐ ՃԱԳԱՐՆԵՐՈՎ ԵՎ ՀԱՎԵՐՈՎ ՋԲԱՂՎԵԼՈՒ

Ֆրանկո-Գարսիա Լորկա

Մադրիդյան էլ Պադո դոյակը, որտեղ ապրում էր Իսպանիայի բռնապետ, գեներալ Ֆրանկոն, չուներ գրադարան: Նա ասում էր ընթերցանությունը, փոխարենը սիրում էր ձկնորսություն, որս եւ ֆուտբոլ: Ֆրանկոյի խղճին է իսպանացի մեծ բանաստեղծ Գարսիա Լորկայի մահապատիժը: 1937-ին մեքսիկական La Prensa թերթին տված հարցազրույցում Ֆրանկոն ասում է. «Մենք չենք զնդակահարել ոչ մի պոետի: Քաղաքացիական պատերազմի ժամանակ ինքը (Լորկան) Գրանադայում անցել էր ապստամբների կողմը եւ այդ պատճառով մեռավ»:



Խուան Պերոն-Խորխե Լուիս Բորխես

Արգենտինայի բռնապետ Խուան Պերոնը ասում էր ինտելեկտուալներին: 1946-ի փետրվարին ընտրվելով Արգենտինայի նախագահ, նրա առաջին գործերից մեկը Խորխե Լուիս Բորխեսին Բուենոս Այրեսի ծայրամասային գրադարաններից մեկի՝ Միգել Բենի անվան գրադարանի տնօրենի պաշտոնից ազատելն ու մայրաքաղաքային շուկայում վաճառվող հավի ու ճագարի մսի հսկիչ նշանակելն էր: Բորխեսը հրաժարվեց այդ պաշտոնից: Պերոնը կրթությունը համարում էր կասկածելի զբաղմունք, գիտությունը՝ վտանգավոր, իսկ ինտելեկտուալներին՝ պոտենցիալ թշնամի:




Նիկոլաե Չաուչեսկու

Ռումինիայի բռնապետ Նիկոլաե Չաուչեսկուն իր ողջ կյանքի ընթացքում սովորել է ընդամենը չորս տարի՝ հաճախելով միայն տարրական դպրոց: Ինտելեկտուալների հանդեպ Չաուչեսկուի վերաբերմունքի մասին է պատմում այդ երկրում գիտափորձի մասին հայտնի մի անեկդոտ: «Սոցիալիզմի օրոք որոշում են գիտափորձ անել գյուղացի, պրոլետար եւ ինտելեկտուալ մկնիկների վրա: Լաբորատորիայում նրանց պահում են միանման պայմաններում: Որոշ ժամանակ հետո, երբ փորձում են հասկանալ մկնիկների դրությունը, պարզվում է, որ պրոլետար եւ գյուղացի մկնիկները լցվել են եւ իրենց շատ լավ են զգում: Իսկ ինտելեկտուալ մկնիկը միհարել է: Նրան հարցնում են՝ ձեզ քի՞չ էին կերակրում: Դե չէ,- ասում է ինտելեկտուալը,- ես էլ մյուսների հետ սնվում էի, ուղղակի ինձ ժամանակ առ ժամանակ վախեցնում էին կատվով»:



Ռումինիայում ինտելեկտուալների 90 տոկոսը ընդունում եւ զովերզում էր Նիկոլաե

Չաուշեսկուլին կամ նրա կնոջը՝ Ելենային: Նրանք, սակայն, ատում էին մտավորականներին, նրանց ընթերցում էին միայն մտավորականներին վերաբերող Սեկուրիտատեի (գաղտնի ծառայության) գաղտնի փաստաթղթերը: Բազմաթիվ ինտելեկտուալներ Սեկուրիտատեի գաղտնի գործակալներ էին, ինչպիսին էր, օրինակ, ֆրանսիացի հայտնի պոետ Անրի Միշոյի թարգմանիչ եւ այլախոհ գրող Սաշա Իվասյուկը: Ելենա Չաուշեսկուլին անգամ շնորհվել է Ռուսիայի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսի կոչում, սակայն նա հազիվ էր կարողանում գրել: Նա ստիպել էր ռումինացի գիտնականներին գրել իր գիտական աշխատանքը: Միջազգային գիտական հանդիպումների ժամանակ նա հատուկ թարգմանիչ էր պահում, որը կտար ճիշտ պատասխաններ իրեն ուղղված բոլոր հարցերին՝ անկախ նրանից, թե ինչ անհեթեթություններ էր ինքը խոսում:



Սափարմուրադ Նիյազով

Թուրքմենիայի բռնապետ Սափարմուրադ Նիյազովն իր ղեկավարման տարիներին արգելեց գյուղական գրադարանների գործունեությունը: Փոխարենը նա հրահանգեց, որ գյուղական յուրաքանչյուր ընտանիք պետք է ձեռք բերի իր գրած «Ռուսներին», որտեղ նշված է, որ ամիվի եւ կառքի գյուտը պատկանում է թուրքմեններին (գրքի կարգավիճակը հավասարեցված էր «Ղուրանին»): Բռնապետը համոզված էր, որ նա, ով այդ գիրքը մեկ

օրում կկարդա երեք անգամ, միանգամից կտեղափոխվի դրախտ:

Իոսիֆ Ստալին



Ամենամեծ հակաինտելեկտուալը, սակայն, մնում է Իոսիֆ Ստալինը: Նրա առաջին զոհերից էր պոետ Նիկոլայ Գումիլյովը: Հաջորդաբար նրա իշխանության օրոք մահանում են Սերգեյ Եսենինը եւ Վլադիմիր Մայակովսկին: 1940-ին ինքնասպանություն է գործում Մարինա Ցվետաեւան: Ստալինն անծանր է կարգադրել, որ գոյության պայմաններ չունենա «Վարպետը եւ Մարգարիտան» վեպի հեղինակ Միխայիլ Բուլգակովը: Ստալինը սիրում էր ծաղրել իր ինտելեկտուալ զոհերին: 1929 թվականին Բուլգակովը նամակ է գրում Ստալինին նշելով, որ գոյության տարրական պայմանների բացակայության պատճառով ուզում է լքել ԽՍՀՄ-

ը: Ստալինը զանգահարում է Բուլգակովին՝ Մայակովսկու հուղարկավորության հաջորդ օրը՝ 1930-ի ապրիլի 18-ին: Կան ենթադրություններ, որ նա այդ զանգով ուզում էր կանխել ռուս արձակագրի ինքնասպանությունը: Ստալինը նրան նշանակում է Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի լաբորանտ-ռեժիսոր: Սակայն այդպես էլ տպագրվելու հնարավորություն չի տալիս:


1935 թվականին, Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակի առիթով հայ գրողների մի պատվիրակություն մեկնում է Մոսկվա: Նրանց հետ հանդիպում է Ստալինը: Վերջինս պատվիրակության անդամներին հարցնում է՝ ինչպե՞ս է իրեն զգում բանաստեղծ Չարենցը, լսել եմ, որ նրան նեղում են: Արձակագիր Ստեփան Ջորյանը պատասխանում է անծանր՝ լավ է զգում, այլևս չեն նեղում: Դա բանաստեղծի կյանքում ոչինչ չի փոխում: Երկու տարի հետո Չարենցը սպանվում է Երեւանի քաղաքային բանտում:

ՀԻՆԳ ՀԱՅՏՆԻ ԳԻՐՔ, ՈՐՈՆՑԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԵՆ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԸ

Ջեյմս Ջոյս. «Ուլիսես»

20-րդ դարի ամենաառանցքային վեպերից մեկի ճակատագիրն այդքան էլ հարթ չէր ընթանում: Ջեյմս Ջոյսի «Ուլիսես» վեպը մաս-մաս տպագրվել է ամերիկյան “Little review” ամսագրում, 1918 թվականի մարտից մինչև 1920 թվականի դեկտեմբեր, սակայն որոշ սկանդալային բաց տեսարաններ այդպես էլ չեն հրապարակվել: Ամերիկյան և բրիտանական խոշոր գրատարտարակչական ընկերությունները հրաժարվում էին տպագրել այդ «անբարոյական գիրքը»:

Սակայն Ջոյսն ուզում էր իր գիրքը տպագրված տեսնել մինչ իր 40-ամյակը: Գրողին օգնության հասավ փարիզյան “Shakespeare and Company” գրախանութի գրավաճառ Սիլվիա Բիչը: Գրախանութին կից գործում էր փոքր հրատարակչական ընկերություն, որն էլ 1922 թվականի փետրվարի 22-ին՝ Ջոյսի ծննդյան օրը, 100-150 տպաքանակով հրատարակեց «Ուլիսես» վեպը թանկարժեք հոլանդական թղթի վրա: Հաջողակ թիվ 2-ն աշխատեց. գիրքն այժմ դարձել է դասական:



Վլադիմիր Նաբոկով. «Լոլիտա»

Ամերիկյան հրատարակիչները հրաժարվում էին տպագրել տարիքով մեծ տղամարդու և փոքր աղջնակի սիրո պատմությունը: Վեպը հրաժարվել են տպագրել “Viking”, “Simon and Schuster”, “New Directions”, “Farrar”, “Straus” և “Doubleday” հրատարակչությունները: Հրատարակիչներից մեկը նույնիսկ գրել էր. «խորհուրդ կտամ գիրքը թաղել քարի տակ»:

Հիասթափվելով գրքի հրատարակման փորձերից Ամերիկայում, Նաբոկովը որոշում է ներկայացնել «Լոլիտան» ֆրանսիական հրատարակիչներին: Գիրքը տպագրում է “Olympia Press” հրատարակչությունը, որը մասնագիտացած էր էրոտիկ գրականության տպագրությամբ:

Չանսալով ընկերների հորդորներին՝ Նաբոկովը համաձայնում է գրքի տպագրությանը: Այն լույս է տեսնում 1955 թվականի սեպտեմբերին:



Մարգարետ Միտչել. «Քամուց քվածները»

Սկարլետ Օ'Հարայի և Ռեթ Բաթլերի դրամատիկ սիրո պատմության հրատարակումից հրաժարվել են 38 ընկերություններ: Սակայն ո՛չ Մարգարետ Միտչելը, ո՛չ նրա ամուսինը՝ բանասեր Ջոն Մարշը, չէին համձնվում: Վերջապես Մարշին հաջողվում է գտնել մի ընկերություն, որը համաձայնում է տպագրել վեպը, որի վրա Միտչելն աշխատել էր 10 տարի:

«Քամուց քվածները» լույս է տեսնում 1936 թվականի հունիսի 30-ին և արդեն դեկտեմբ-

Գեղարմ Աշուն 2018

բերին վաճառվում միլիոնավոր օրինակներով: Վեպի էկրանավորման համար Միտչելին վճարում են 50,000 դոլար, իսկ հաջորդ գրքի համար նա կարող էր պահանջել ցանկացած հոնորար, սակայն այդպես էլ ոչինչ չի տպագրում:

Սթիվեն Բինգ. «Քերրի»

Երբ երիտասարդ Բինգն իր վեպը ներկայացնում էր այս կամ այն հրատարակչությանը, նրան անմիջապես պատասխանում էին, որ մռայլ ուտոպիաները չեն վաճառվում, և գիրքը չի կարող հասնել հաջողության: Բացի այդ, գրողը հենց ինքն էր համարում իր վեպն անհաջող: Նա վեպի սևագրերն աղբն է նետում, որտեղից դրանք գտնում և հանում է Քինգի կինը՝ Թաբիթան: Կինը ստիպում է Քինգին ավարտին հասցնել վեպը:

Ի վերջո գրողին հաջողվում է գտնել հրատարակիչ, և արդեն մեկ տարի անց գիրքը վաճառվում է միլիոնավոր օրինակներով: 1976 թվականին «Քերրի»-ի առաջին էկրանավորումը կինովարձույթներում հավաքում է 33,8 միլիոն դոլար:



Ջոան Ռոուլինգ. «Հարրի Փոթեր»

Վեպից, որն իր վաճառքի ծավալներով զիջում է միայն Աստվածաշնչին, հրաժարվել են 12 հրատարակիչներ, որոնք գուցե մինչ օրս զղջում են իրենց անհեռատեսության համար: Անգամ Bloomsbury-ին, որն այդ ժամանակ փոքր և քիչ հայտնի հրատարակչություն էր, հրապարակեց «Հարրի Փոթերի» առաջին հատվածը միայն նրա համար, որ հրատարակչության տնօրենի 8-ամյա դուստրը շատ էր հավանել այն:

«Հարրի Փոթերը և Փիլիսոփայական քարը» գրքի տպագրությունից հետո Ջոան Ռոուլինգը ստացավ 1,500 եվրո և բարեհոգի խմբագրի խորհուրդը՝ այլ աշխատանք գտնել, քանի որ մանկական գրականությունը լավ չի վաճառվում: Սակայն վեպը շատ արագ ճանաչում գտավ Մեծ Բրիտանիայում, և մի ամերիկյան հրատարակչություն 100,000 դոլարով գնեց գրքի հրատարակչության հեղինակային իրավունքը:

«Հարրի Փոթերի» շնորհիվ 2004 թվականին Ջոան Ռոուլինգը դարձավ աշխարհի ամենահարուստ կանանցից մեկը, իսկ Bloomsbury Publishing PLC Մեծ Բրիտանիայի ամենամեծ գրահրատարակիչներից մեկը:

<https://angelagrigroryan.wordpress.com>